



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

# კომუნისტური ფართობი



ს. ს. ს. ს.



891-99

2-29

հ.ս.

ԱՇՈՑ ՇԱՅՔՈՆ

# ԶՐԱՅԱՎՈՐ ԳԱՐՈՒՆ

Վ. Ի. Պ. Ա. Կ

1671



1931

ՅԵՐԵՎԱՆ

Պետերատի տպարան  
Գրատեպ. № 6392 (բ)  
Հրատ. № 1617  
Պատվեր № 2244  
Տիրաժ 3000

1020  
45

Շապկին Գևորգ Է. Շավարի

Գյուղն իր գորշ խրճիթներով բազմել էր սարա-  
լանջին:

Մորչոֆներով ծածկված տնակների արտաքինը  
ասում էր, վոր գյուղը դեռ նահապետական ձևերով է  
ապրում:

Աթարի գեղերը կիտված ելին այս ու այն խրճիթի  
մոտ, անմխիթար շարված, գոմերի՝ միաչքանի կույրի  
նմանոց գոմերի լիսածաղկերի տակ:

Խճճված ու անկարգ փողոցները թե վորտեղից  
ելին սկսվում և ուր վերջանում, չէր կարելի վորոշել:  
Փողեշաղախ ուղիների մի ցանց էր այն, վորը տեղ-տեղ  
հրապարակներ էր կաղմում, տեղ-տեղ անանցանելի  
փակուղի: Հրապարակներից մեկը գերեզմանոցն էր, իսկ  
մյուսը՝ գյուղի լեկեղեցին, վորը մամուսպատ, բայց բա-  
ցառիկ շարվածքով՝ հղկուն քարերից մի մատուռ լինե-  
ր ասես: Նրա չերկու նեղլիկ պատուհանները, տեղ տեղ  
դուրս թափված քարերի շարքը՝ հեռվից մի հեքիաթա-  
լին վհուկի գլխի լեր նմանեցնում լեկեղեցին:

Ցիկեղեցուն մոտ՝ իր վաղեմի փառքը կորցրած՝  
մի թեքված տուն կար, վորը և դպրոց էր, և խրճիթ-  
ընթերցարան և գյուղխորհուրդ:

Գերեզմանոցը վորոշ հեռավորության վրա յեր  
մատուռից: Գյուղի բանուկ փողոցներից մեկը հենց  
անցնում էր գերեզմանոցի կողքով: Շատերն անձրև ու  
ցեխ սրերին հենց մտնում ելին ներս ու քարերի գլը-  
խով քայլում՝ ջրի ու ցեխի մեջ չթաղվելու համար:

Գերեզմանոցին մոտ «նաչալնիկի» տունն է յեղեկ նախքան խորհրդաչնացումը: Պատմողների ասելով, այդ տան մեջ «նաչալնիկը» յերբեք էլ չի ապրել. քանի վոր նա հարևան գյուղումն է բնակվել ու միայն յերբնմն-յերբնմն այցելել է այդ սարալանջի գյուղը: Գյուղի բարձր դերքից նա դիտել է լաչն տարածութունները, վորտեղ թխսավորների պես կուտակված են չեղել այս ու այն տեղ մշուշի մեջ ժպտացող գյուղերը:

«Նաչալնիկի» տան մեջ, յերկրորդ հարկում բնակվում էր ուսուցիչը: Նա մեկ սենյակ էր գրավում, մյուս սենյակում ՓՈԿ-ի պահեստն էր: Յածումն ելկոսպերատիվն էր, գյուղի փոքրիկ ու նոր կազմակերպվող կոոպերատիվը:

Այն որից, չերբ կոոպերատիվը բացվել էր այդտեղ, դիմացի տան մեջ ամբողջ շաքարի մանրավածառն նեղ, խոնավ ու խոր ընկած, ջրհորի նմանող կլորպակի դռնակը հաճախակի յեր փակ լինում:

Որերը շատ շուտ-շուտ էլին հաջորդում իրար, գյուղում մի ինչ-վոր լրջութուն կար, մի ինչ վոր խորհրդավորութուն: Մարդիկ ծանր էլին քայլում, կանայք կաքավում արագ, մանուկները շնչակուտը չափ էլին ընկնում գյուղամիջում ու ծղրտում աքաղաղների պես:

Թանձր ծուխը միշտ նստում էր առավոտյան գորշ խրճիթների վրա: Մառախուղը գալիս էր, չոքում խորխոր ձորերի շրթերին, ծածկում էր շեջապատի գյուղերն ու մնում քարացած, վորպես մի հեղեղող փըրփուր, ասես թե հողը չեփ էր դալիս:

Գարնանը ծաղկում էր սար ու ձոր, ծաղկում էլին հաճարի, տանձի ու կաղնու ծառերը... Ամեն գար-

նան վարարում էլին ջրերն ու լցնում լեռնոտ այդ աշխարհի խորխորատները: Ջրերը խշշում էլին ձորերում, իսկ պախրաները մեկնում էլին իրենց սիրուն գլուխները՝ ծարավը հագեցնելու...

Պախրաները սարերում, մթին այդ լեռնաշխարհի թավուտ անտառներում էլին ծվարում:

Գարնանը նիհարած նապաստակները գյուղի հանդերում վազ ու վազ էլին անում, իսկ լեռնական գյուղի լեռնական գեղջուկը դուրս էր գալիս դաշտ:

Բնությունն էր շարժվում, կենդանանում ամենուրեք...

Հորդանում էլին աղբյուրները, գյուղի անասունները խմում էլին սառնորակ ջրից: Բարձրանում էր թավիշ կանաչը, կենդանիները պոկում էլին ազահուլթյամբ թարմ խոտը:

Շատ իղիլիկ էր դառնում գարնանն այդ գյուղը, վորտեղ ապրում էլին մարդիկ, վորտեղ կուլում էլին մարդիկ, ինդում ու հիանում բնության մեջ, բնության հետ միասին:

Նոր է քաշվել ձյունը: Գյուղը բուրդ է դարձեր հողը հագեցած է արդեն: Նրան գարնան արևը շատ ու շատ բյուրեղյա կաթիլներ է բախել: Հողը ծիծաղում է ասես. ողբ թեթև է, սուր ու սառը ծնծղուկները գարնանն այնպես լավ են չերգում այդ գյուղում:

\* \* \*

Ահն նա, Գոհնրը...

Մագերը ալիքածև խոպոպել էլին նրա գլուխը, դեմքի վարդագույն ֆոնին ժպտում էլին յերկնազույն աչքերը: Շրթունքները նռակարմրին էլին տալիս: Կա-

նայելութեամբ հարուստ կուրծքն ուրվագծվում էր քաջելիս, վորովհետև նա իր ուսի վրա դրած կուծն էր պահում ձեռքերով:

Գոհարն այդ գլուղի պարզ գեղջկուհիներից էր: Նա խոսում էր պարզ, հագնում չթից պարզ կարա, մաղերը հյուս անում ու թողնում մեջքից ցած:

Նա գնում էր ջրի: Առավոտ էր, գարնանային առավոտ: Ցեխը տրորելով այս ու այն տունն էլին մտնում դուրս գալիս գյուղացիները: Ծները հաջում էլին անցորդների վրա: Այնպես աղիսողմ էր ճարձում մի սալ գլուղի վերջում:

Գոհարը ջրի լեր գնում: Նրա մտախց մարդիկ անցան, նա չնայեց նրանց քամակից:

Ահա և Քոլուտողանց Պետնու նշանածը, նա յեկ և ջրի գնում: Նրա գոյութունը կարծես ջրի գնալիս էր նշտավում. նա խրճիթի անկյունից չէր կտրվում. ինչ էր կատարվում դրսում, նա չգիտեր: Իսկ Պետնու նշանածի նմաններ գեռ շատ կան գլուղերում:

Գոհարը քաջներն արագացրեց. զիմացից դալիս էր չեքման հագած, պենջակը թեկերին կապեալ, կուլակ վարդնանց Գերասիմի տղան:

Գոհարը շտապում էր հասնելու իր առջևից գնացող հարեանուհուն...

Կապեալ կանգ առավ, Գոհարը գլուխը կախեց ու դուլնը նետեց:

Յերիտասարդն անփուլթ դիրքով կանգնած, փաշտի խիլով առամների արանքն էր փորում, և անկարգ ժպիտը դեմքին, աշխատում էր վորսալ Գոհարի հայացքը:

Յեվ չերը Գոհարը անցնում էր նրա մոտով, կապեալ մի շարժում արավ:

Գոհարը շատ պարզ ու վորոշյալ նրա սպանանալ կան. և հարցի նմանող, և հեղնանքի և հայնոյանքի, արտահայտութունը. «Հը՞մ...»

Գոհարը վաղուց, շատ վաղուց էր նկատել կապետի դիրքը, և ինչո՞ւ, միշտ թվացել էր Գոհարին, վոր կապեալը նրան պատահած դեպքում կվերավորի:

— Հը՞մ,— ցինիկ ժպիտով արտահայտվեց վարդնանց կապեալը, նայեց-նայեց ու շարունակեց ճամպան:

Մի ծանրութուն իջավ Գոհարի սրտին: Նա մի վախ զգաց: Նա սարսափեց նրանից...

Գոհարի համար ամեն ինչ աչքաքան պարզ էր, ինչպես այն աղբյուրի ջուրը, վորը սափորով տուն էր տանում:

Կուլակի տղան հետապնդում էր Գոհարին...

## 2.

Քոլանց Մուքելի տան բակից էր դուրս գալիս վարդնանց Գերասիմը:

Գերասիմից պակաս կուլակ չէին Քոլանք. սակայն Գերասիմը վախտին ուրիշն էր...

Գերասիմի դեմքը կարծես արորած յեմիշ լիներ՝ մազը վրեն բուսած, իսկ աչք ու ունքի տեղը՝ յեթև ծակծկված պատկերացնենք այդ յեմիշը — նկարագրերը պարզ կլինի մոտավորապես:

Գերասիմը Ստամբուլ տեսած մարդ էր, Գերասիմը Յերուսաղեմ էլ էր գնացել, Գերասիմը Աև ծովում նավի «բաթմիշ» լինելիս մեջն է յեղել ու հրաշքով հոգին պրծացրել: Ո՞վ չի խոսում նրա մասին, և ի՞նչ անենք, վոր նա բնակվում է այդ սարալանջի գլուղում: «Փողն

ա մարդուն զորավոր անում—ասած խոսք ա», կրկնում եր վարդնանց Գերասիմը ամեն հանդիպողին: Տարիները կոխել են նրան, բայց Գերասիմը իրեն տղամարդ է գտում զեռ:

Յերբ նա Քուանց տնից վտարը դուրս դրեց, փողոցով անցնում եր աչքը շլլ Սոււմբաթը, վորին գյուղում Շաշ Սոււմբաթ էյին անվանում: «Շաշ» անվանը գործ էյին անում նրա բացակայության ժամանակ:

Սոււմբաթը մարմնով լեցուն, միջտհասակ, քիթը միշտ վեր քաշելու սովորութեամբ հիւսնոց մի անձնավորութիւնն էր:

Սոււմբաթը մութ գործերի համար մի քանի տարի բանտ էր նստել և վաղուց չէր, վոր դարձել էր գյուղ: Տուն-տեղ չունէր, ապրում էր իր ունեւոր ազգականի մոտ ու մեկ աչս, մեկ աչն աշխատանքն էր կատարում:

Սոււմբաթը ձայնագուրդ էր: Ատում էր խորհրդաչին իշխանութիւնը, թեպետ վարագուրված կերպով, յերբեմն հակառակն էր կատարում, աչս կամ աչն խընդորի մասին կողմ արտահայտվելով:

Շատ ու շատ համեստ աշխատավորներ Սոււմբաթին թերահավատութեամբ էյին նայում: Չէին սիրում... Սոււմբաթի հետ գործ ունեցողը պատուհասի մեջ էր նետում իրեն: Սոււմբաթը ընդունակ էր կրկին բանտ գնալու... Ուրեմն...

— Բան, անդա, մամեր գգյանդին տեհե՞լ չես.— հարցրեց Գերասիմը կակաղելով: Նա կապետի մասին էր հարցնում:

Սոււմբաթը կանգ առավ, աչքերը փայլեցին, զեմքի քծնանքի ծամածուղ ժպտով պատասխանեց.

— Չե, տեհել չեմ, քեռի Գրասիմ, յես էլ, են ա ուղեյի թե հարցնեմ...— (Փստ, ֆստ) քիթը մաքրեց նա:

Նրանք միացան ձանապարհը գնալու չեր ազրբի մոտով: Գերասիմը քալում էր ծանր, իսկ Սոււմբաթը մեկ աչս, մեկ աչն կողմ էր ընկնում, թուշելով ցեխի զանգվածների վրայից:

— Անդա Սոււմբաթ, — խոսեց Մարտիրոսը:

— Ի՞նչ կա, քեռի...— (Փստ, ֆստ) քիթը քաշեց Սոււմբաթը:

— Եետա անում են թե, կոնպերտովից Բըրադրամին հհանիլ պատեն, ետ վճնց տի ըլնի...

— (Փստ, ֆստ) կարալ չեն, քեռի Մարտիրոս, մեր Բաղոյին հանող չի ըլնի...— (Փստ) նորից քիթը քաշելով, լրացրեց իր միտքը Սոււմբաթը:

— Սասարոսդ, զե ետ ա հանում են եելի, կոնկուսակցականին, վորոշել են, հհհհանիլ պատեն, մտքնեւրունը ունըրիչ ս:

— Ի՞նչ կա մտքներումը, դագ ելա կա վնչ, յես նրանց ըռխն անիծեմ (Փստ, ֆստ), սող կոտորատորը ըրիշակ կանենք,— բացականչեց Սոււմբաթը:

— Սասուս, ախմախ, ձենդ քեզ քըքաշի, մմի բբան ելա կանրալ չպտես անի, Մարտիրոսը չչչ իմնուդ հախիցը գալու չս, գգալու չս...

— Մարտիրոսը, խի՞, վոր կուսակցական ա ու սեկրետար (Փստ, ֆստ), կարալ չպտենք հախիցը գալը Մեր Բաղոյին մատը տվող չպտի ըլնի, քեռի խի՞, յես տախիւմն եմ. ինձ Սոււմբաթ կասեն: Բաղոյի հետ մենք աղ ու հացի ախպեր չենք ելել, արնի ախպեր ենք (Փստ, ֆստ) ելել, ու յես նրանց...

— Անդա, բլուլ ս. ձձենդ բարձրացնիլ մի, կիմանան, աղս, բբանը խխելնք կբոնեն, թահրին...

— Չե՛, քեռի, յանի շիգանկ ես ասում... (Փստ)...  
Շշիգանկ:

— Բա վոր ըտհե, դե կկտենան,—բացականչեց նա ու կամենում եր հեռանալ, Գերասիմը բռնեց նրա թևից:

— Եևտ սեր:

— Թո՛ղ, քեռի, չես չիմն ել իմանալ պտեմ, Մարտիրոսի հետ հաշիվ ունեմ, հաշիվ... հարցնիլ պտեմ ետ շան տղին (Փստ...), տենանք ի՞նչ ա ուղում:

— Սոււմբաթ,—ձայնը բարձրացնելով սաստեց Գերասիմը,—եևտ ա չես քեզ ասում եմ, շշաշութին անելու վիճխտը չի: Բանը դայդով պպտի արվի, ամյ, ասրի, յես բրան ունեմ ասելու... Հն, հերետի կկատն ել գալիս ա:

Նրանք կանգ առան: Աջակողմի գյուղական փողոցներից մեկով իջնում եր Կապետը՝ գլխիկոր:

Նրանք հանդիպեցին. Կապետը տխուր եր:

— Ադն, եեն ասնդեր շշուը խի՞ չես զընջիլ, են ա շշարաֆ գրեցին, լակոտ շշան կաթ կերածնին...

— Խի՞, սի, հականում չեմ, հերա, ի՞նչ ես ասում:

— Եևտ խի՞ չես հականում, ասում եմ, վանոն շարաֆ գրեց, շուը չըզգնջիլու համա:

— Ի՞նչ պտես տնի, դալում են դարձել, ըտհե կանն:

— (Փստ...) Կապետ, ետ վիճեց ա մեր Բարոյի բանը...

— Վճնց տի ըլի, են ա պոչը խուզիլ պտեն, Կարմիր բանակիցը Մամնի տղա Սամանդը եկել ա, ուզում են նրան կաղնցնեն վաղոյի տեղը:

— Խի՞ յե,—հարցրեց Սոււմբաթը դսպլած:

— Խի՞ պտի, վաղոն կուսակցական չի, Սամանդը կուսակցական ա, վաղոն տերտերի տղա չա՛, Սամանդը չորանի, վաղոն հին գրագետ ա, Սամանդը թաղա զըրագետ, խի՞, քիչ ա:

— Կկապետ, ձձենդ ասում եմ, խխաթի մեջ պըպտես գցի չչիմնուս, եեն ա ձձենդ լլոււմ են ու ասածնիդ իմանում,—ջղայնացավ Գերասիմը:

— Իմանում են, իմանան, վախոզը չեմ, չես Մարտիրոսի հետ վիճխտին կխոսեմ ու կտենանք ում մերը լաց կըլնի:

— Թուհ.—տաքացավ կուլակ Գերասիմն ու գոռաց.—բոլ ա՛, սաստ կտրիլ չչպտե՛ս...

Կապետն ուշքի չեկավ:

Նուչն պահին Մարտիրոսը, Սամանդը, Շիտակ Փաշոն նուչն փողոցով անցնում ելին ցած:

— (Փստ) Յես ձեր ըտխին թքեմ,—կիսածայն հայհոյեց Սոււմբաթը,—հլա մին սպասեցեք,—սպասնաց նա:

Վարդնանց Գերասիմը, Կապետն ու Շաշ Սոււմբաթը վիճելով դիմեցին դեպի տուն:

Ճանապարհին կուլակը հանդիստ առնով համոզում եր վորդուն, վոր բացահայտ կերպով կովել չի կարելի, հիմա արդեն «ըվաթը կուսակցականների կ փսլնքոտ Քոլուսողանց Պետինների ձեռքին ա»:

— Դուք, պպտեք աշխատի, վվոր մեր ուզած մարդկանցը, թթող չըքավոր ըլլեն, թող մմեր ուզածն ըլի, ընդբանցը անցկացնեք եևտ դայդի պաշտոններումը: Խանդարողների չել, եենպես պետք ա ձամփիցը խխոկի տաք, վվոր շշվաքներուդ ել իրմանա վոչ:

Նրանք դեռ չէին մտել բակը, լերը մի նիհար, աչքերը մտք բնկած մարդ բեղերն ոլորելով յելով նրանց առաջ: Դա աւետարական, կոտորատիվի դիմացի կրպակատերն էր, Շաքարը:

— Բարե աջողում, Գերասիմ. — վողջունեց նա:

Գերասիմը մտազբազ էր, նրանց թույլ կերպով պատասխանեց:

— Իմացա՞ք, աչ խալիս, Բաղդյին կոռպերատովիցը հանում են, — սկսեց Շաքարը:

— Հն, հն, լլնվ իմացել ենք, տազ արն, — ջղալին շարժումներով ընդհատեց նրան Գերասիմը:

Սոււմբաթն ու կապետը առանձնացել էյին և տաքացած վեճի էլին բռնվել:

Նրանք խոսում էյին աչն մասին, թե ինչպես խանգարին Իծագողանց Տերայի վարդի Բաղդյին կոռպերատիվից հանելու գործը:

— Ետ ա մի քիչ առաջ դրա կոռպերատիվը գնացին, Մարտիրոսն էր, մին էլ Սամանդն էր, մին էլ Շիգակ Փաշոն:

— Իե եետ ա, հհաշիֆի են քննում, Բաղդյի գգործը լլավ չի ըլի, — գլուխը տարուրիցից ձերուսի կուլակը:

Բոլորը լուռ էյին:

Նրանց դիմացի խրճիթը, վորտեղ հավաքվել էյին այդ չերեքը, պատկանում էր Բոլուտողանց Պետուն: Պետին բատրակ էր չեղել, խորհրդային իշխանությունը գալուց հետո, առաջին հողարածանության ժամանակ, հող էյին տվել նրան: Բոլուտողանց Պետին քաղցրածպիտ դեմքով տղամարդ էր, մի տուն լիքը քուլփաթ պահող: Նա, կողովով տավարի աղբը շալա-

կած, տան առջևից տանում էր մոտիկ ածուկը լցնում: Յերը չերկրորդ անգամ նա կամենում էր անցնել փոքրիկ պասանշից, սայթաքեց ու ընկավ: Մանրավաճառը, Սոււմբաթը հոհացին, կապետը հայհայեց, իսկ Գերասիմը գլուխը թափահարեց:

Պետին յելով տեղից, նայեց իր շուրջը, նայեց խնդացողների կողմը, մի նախադասություն ծամծմեց ատամների տակ ու բարձրագոյ ասավ.

— Տղամարդու գործ չի ետ թհար գործ բռնիլը, վոր խնդում էք, ետ ում վրա չեք խնդում, խնդալու առարկան դուք էք, չես չին:

Սոսքը սուր էր, նրանք վերավորվեցին, բայց ձևվացրին, թե վոչինչ չհասկացան:

— Ասում ետ խի՞ չենք ծիծաղում (Փստ). — խոսեց Սոււմբաթը. — ծիծաղում ենք նրա համար, վոր համ սավհաական դվաթն ա քու կուռը, համ էլ սավետական հացը, համա էլի կարում չես մի քթոց աղբը տեղ հասցընի, իմացա՞ք, Պետիկ աղա, — հեզնեց Սոււմբաթը ու քիթը վեր վեր քաշեց (Փստ-Փստ...):

Բոլորը ծիծաղեցին ու տուն մտան:

Բոլուտողանց Պետին յերկար ժամանակ կանգնած նայում էր նրանց քամակից: Նրա մտքով ինչէր չէին անցնում այդ պահին: Նա զգում էր, վոր այդ վաղեմի, մեծատուն աղաները հիմա չարախնդորեն խանդում են, իրենց՝ կիսաքաղց բատրակի վիճակին: Պետին հասկանում էր, վոր ինքը մի քանի գլխով բարձր է նրբանցից:

Պետնու համ խիղճն էր հանդիստ, համ հացը:

Նրանք այդ չերկուսից էլ զրկված էլին:

Բոլուտողանց Պետին կատարելապես հասկանում

եր, վոր իր և նրանց ճանապարհը տարրեր է, ինչպես  
և վիճակները:

Վերջին միտքն ուրախ ժպիտ փռեց նրա առնա-  
կան դեմքին, Պետին դու արավ ու քթոցը շալակեց:

Այո, նրա քամակին է կանգնած խորհրդային իշ-  
խանութունը, նա ղվաթ ունի ու հաց...

Ի՞նչ լավ էր ժպտում այդ որվա գարնանային  
պայծառ արևը: Գորդընին առատորեն բարձրանում էր  
հողից:

Գարունը մուտք էր գործել...

3.

Գոհարը աղբյուրից վոր տուն դարձավ, սիրտը  
բռնված թռչունի սրտի պես տրոփում էր:

Ի՞նչ էր ուզում Կապետը նրանից...

Մտքերը խուռն կերպով անցնում էին Գոհարի  
ուղեգրով: Մտքերը նրան շատ հեռու էին տանում:  
Գոհարն զգում էր, վոր ինքը նեղ ու անանցանելի դու-  
թյան մեջ է, Կարոն հո իրենով չէր զբաղվում, Կա-  
րոն հեռապանում էր ուրիշ նպատակ: Կարոն Գո-  
հարի հետ էր կապում Մարտիրոսին, ահա հեռեանք-  
ների հեռեանքը:

Այդ մտածումների մեջ էր, չեր Մարտիրոսի թըր-  
վռան քույրը կարկաչուն ծիծաղով մտավ խրճիթը:

— Գոհար ջան, — բացականչեց նա:

— Աննիկ, — բացականչեց Գոհարը, կամենալով  
հենց իր մտածածն ու իր հետ պատահածը պատմել  
նրան, բայց կանգ առավ:

— Հլա, հլա, աղջի, նազ ես ծախում, լավ, լավ  
հասկանում ենք, վոր ամանչում ես, մի ամանչի, մա-  
տաղ, Գոհար ջան:

— Մի բան էլա չեմ հասկանում, Աննիկ ջան,  
ես ի՞նչ ես ասում:

— Գուհար, Գուհար, այ դու աղվեսի պոչ, — հրե-  
ռաց Աննիկն ու նստելով Գոհարի կողքին, լայն թախ-  
տին փռված կարպետի վրա, գրկեց նրան:

— Աննիկ ջան, ես ա ջրիցն եմ գալիս ու ջրի  
ճամփումը են վարդնանց լակոտը նհենց վախացրուց...  
հմի էլի սիրտս դցում ա, քոռանա նա:

— Վո՛ւյ, ետ ընչի՛, վո՞նց թե, ետ ըլելու բան ա,  
ջան տղեն հո ուզում չի ծակուռը կոխենք, ետ վո՞նց  
էլավ, հլա մին պատմի:

Յեվ Գոհարն սկսեց նկարագրել դեպքը: Նկարա-  
գրեց իր չերեակայությամբ, ավելի հարուստ պատճա-  
ռարանությամբ և յեղրակացություններով:

Մարտիրոսի քույր Աննիկը լսում էր նրան ու  
յերկար ժամանակ լուռ էր, չեր Գոհարը վերջացրեց:  
— Գիտես ինչ կա, Գուհար, ետ դադեներին մի  
խաղ պտեն խաղս, մին ետ կապետը, մին էլ տուսաղից  
նոր դուս եկած Շաշ Սուժբաթը: Նրանք իմ Մարտիրո-  
սին ուզում են հուժ-հուժ ուտեն: Համա դիտենաս, շան  
նման էլ վախում են ախպորիցս:

Յերկուան էլ լռեցին: Մի ընդհանուր միտք զբա-  
ղեցրեց նրանց: Մի ընդհանուր կապ կար նրանց լուռ-  
թյան մեջ: Վերջում կրկին Աննիկը ժպտալով ասաց.

— Գուհար ջան, ետ կապետը քո խաթեր էլ ա  
ասում Մարտիրոսին: Նա հսկանում ա, վոր դուք աչ-  
քակապուկ էք խաղում, սատանի պոչ:

Գոհարը կարմրեց, ժպտաց, մազերն ուղղեց, թե-  
թե աստակ տվեց Աննիկին ու էլ չեր իմանում ինչ  
անի:

Աննիկը հասկացաւ, վոր Գոհարն ամբիւրջ չի ի-  
ջանում ինչ անի, ալեւի սիրով փարվեց նրան:

Հանկարծ Գոհարն ուշքի չեկածի պես ասաւ.

— Այ դու սատանի պոչ, ասում ես ասում ու  
չեմ հսկանում, թե զրիցդ ինչ ա: Դե կացի մի, քիթդ  
քաշիլ պտեմ, չվեիլ մաղարիչը տաս վոչ, թողալ չեմ...

Աննիկն արդեն գլխի յեր, թե ինչի մասին եր  
ակնարկում և ում մասին:

— Մի բան ելա կա վոչ, մի բան ելա կա վոչ,  
խի յես ծիծաղում:

— Կն, կն, հրետի Սամանդն ա եկել, Սամանդը:

— Ի՛հ, յեղնա՛, եկել ա, գա, — վստահ արտասանեց

Աննիկն ու տեղից չեկաւ:

Հետո նրանք խոսեցին թե Մարտիրոսի և թե  
Սամանդի մասին: Խոսեցին գյուղի աշխատանքների  
մասին: Կոռպերատիվի նոր վարչութւան մասին: Խո-  
սեցին կոլեկտիվացման մասին:

Գոհարը կրկին զանգատվեց հորից, Գարրնանց  
Մուքելից, նա համաձայն չեր լինում, վոր աղջիկը կոմ-  
յերիսմիութւան մեջ մտնի:

Խոսեցին այն մասին, վոր կոռպերատիվի նոր վա-  
րիչը՝ Սամանդը, կարմիր բանակում շատ «գաղ» ա սո-  
վորել, վոր կոռպերատիվի աշխատանքները կթարմացնու-  
կարծիք հայտնվեց, վոր Իծագողանց Բաղոն՝ նախկին  
վարիչը, կմիանա Կապետի, Շաշ Սումբաթի ու մեկ ել  
Շաքարի հետ ու կաշխատեն աշխատանքները խանգարել:

Յերկու դժգուշն պատուհաններից դուրս ժպտում  
եր արեը, կեղտոտ ապակիների քամակից. կարծես ան-  
վա՛ խնդացող մանուկ լինեք, ցնցուղի տակ կանգնած:

Դրսում գարուն եր... Դրսից լավում եր գարբնո-

ցալին աշխատանքը: Մուքելի համաչափ ու անընդհատ  
հարվածներ ելին լավում դրսից:

Դրսում խրճիթին մտա, Գոհարի հոր գարբնոցն  
եր, նեղ, շատ նեղ գարբնոցը:

Այնտեղ եր բանում տարբերալոր Գարբնանց Մու-  
քելը, լաչնասիրա ու փորձված Մուքելը:

Նրանք դեռ չերկար խոսեցին...

4.

Գարրնանց Մուքելի կինը նոր եր մահացել: Վողջ  
տունն ու տեղը Գոհարն եր ղեկավարում, Մուքելի մի-  
նուձար, նշենու նման խաս Գոհարը:

Նրանց տունը գյուղի ծայրին եր, չերկաթուղու  
կալարան տանող ճանապարհին:

Փոքրիկ գարբնոցից վողջ սրը լավում եր Մու-  
քելի մուքելի արաքոցը: Միջակ անտեսութունն ու-  
նեը Մուքելը, հալը հալ եր, նա յերբեք չեր արաքն-  
ջում սպրուստից:

Գյուղում հեղինակութւան եր վաչելում, վորպես  
փորձված, աշխարհի «խեր ու շտիցը դադ հասկացող...»:

Գարրնանց ընտանիքի սովորութւաններն ու  
տոնասարակ վարք ու բարքը նաճապետական եր,  
թեպետ Մուքելը չերեք կառավարութւան հող եր տե-  
սել, Ալատրխալի, Գերմանիալի ու Յապոնի ֆրոնտն եր  
տեսել, հաղար «միլիթ», հաղար հավատի մարդկանց  
հետ նստել ու վեր կացել:

Ծանոթ ու խոհուն եր նա: Գոհարի և Մուքելի  
միջև փոխադարձ սիրո և ակնածանքի մի ընդհանուր  
համաչափութւան կար:

Նա իր Գոհարի աստղայայ աչնքան եր հետա-



քրքրված, վոր լերբեմն շատ յերկար միտք եր անում, միտք—հաց ուտելիս լինելը, թե մի ան ըստ, քարանում եր, աչքերը սառչում եյին, և ածղահա այդ մարդը խորը հոգոց եր հանում:

— Հերան, եդ խի յես ըստն տխրել, — նկատում եր Գոհարը:

— Մի դադ ելա կան վոչ, Գոհար ջան, դու բանիդ կաց, հին ու ծերացած մարդ եմ. ըստն կըլնի:

— Ուղո՞ւմ չեմ, տխրիլ մի, — ազնուն միտս ես պցում:

Մուքելը լռում եր...

Ինչ հետո լերբում եր արդեն սալդաթ ժամանակվա յերգերից ու անկանոն, աղավաղված սուտերենով ծիծաղ պատճառում Գոհարին.

Մոռիմ լուբիմ, խոչիմ նեա,

Մոռիմ—կարման կապել նեա—

Ու մեն յեստ պետաչոկ,

Իդոմ, պայդոմ կուպաչոկ:

— Տեհար, Գոհար, ջահելութիւնն ելի միտս այ ըս... Իսկ Գոհարը, լեռներէ այդ վայրի խտո՞ւտիկ թոչունը, ժպտում եր դարնան արևի տակ փայլող ցոլքաշարի նման...

Յեղ մեկ անգամ, լերը Դարբնանց Մուքելը անցել եր չորան Սահակի տան դռներով, Գոհարին տեսել եր Մարտիրոսնց խրճիթից դուրս գալիս: Մի քանի վայրկյան կանգ եր առել, մտածել ու հետո ճանապարհովի տուն:

— Գոհար, ետ ո՞ր ես ըլում անժամանակ ու ամեն վոխտ: Մարտիրոսանց տանն ի՞նչ ունեցիր, աղջի, բա գիդես վոչ հազար անուն պտեն տա: Գիդեմ վոչ, ինքդ մտածում ես, թե չե, — ահա այդ դեպքից հետո կատարված խիստ նկատողութունը Գոհարին...

Այդ որից անցել եր ուղիղ 2 տարի: Շատ ու շատ մարդիկ եկել-գնացել ելին Գոհարին հարս տանելու: Մուքելն ամեն անգամ Գոհարի սրտովը եր թողել: Միշտ ել Գոհարը հրաժարվել եր, մերժել սրան ու նրան:

Փորձված մարդու համար մուքը վոչինչ չի մնա, և Դարբնանց Մուքելը գլխի ընկավ:

Գոհարը սիրում եր Սահակի տղա Մարտիրոսին, վորը կուսըջլի քարտուղարն եր, ճակատը բաց մի տղա:

Մուքելը շատ չմտածեց, նա Մարտիրոսի մասին վատ կարծիք չուներ:

— Մարտիրոս, ետ ա մաշալլահ, անունով մարդ ես դառնում, ապրիս, բարս, ան—բան կաց, իգիթի դաչդի, բանըդ աղաք տար. — մի քանի անգամ այսպես գովել եր Մարտիրոսին (ու սրտանց ուրախացել եր նրա վրա: Մարտիրոս, հեյ գիդի, ո՞ւր ա, մին վողորմածիկ հերդ ֆողիցը գլուխը վեր հանել, տեսար, թե իր Մարտիրոսը վո՞նց մարդ ա դառել. — զգացմունքով արտահայտվում եր Դարբնանց Մուքելը, լերը այս կամ այն հասարակական աշխատանքի ժամանակ Մարտիրոսը փայլում եր հաջողութուններով:

Գոհարը տանը չեր փակվում...

Յերբեմն խաթրով, յերբեմն պատահաբար, յերբեմն ել համառելով, Գոհարը մասնակցում եր հասարակական կյանքի ներքին յեռուզեռին:

Աննիկն ու չքավոր Շիտակ Փաշոյի աղջիկ Անթառամը մոտ ընկերուհիներ ելին Գոհարին:

Ինչե՞ր տես, վոր չեյին խոսում թե Աննիկի և թե Անթառամի մասին: Ծածուկ թե ափաշկարա, Մու-

քելին նախատում էյին այն բանի համար, վոր թույլ է տալիս աղջկան «աննամուս» Անթառամի և Աննիկի հետ լինելու:

Դարբնանց Մուքելը դադարել էր նահապետական խիստ ուամկաները պահելուց: «Թող գնա, մին ա, Մարտիրոսին աչքեցը գցում չի...» մտածում էր նա:

Մուքելը չերեխա չէր, Մուքելը մարդ էր անսել, «խելք էր առել-ծախել», Մուքելը չէր կարող չնկատել:

Յեզ անա, յերբ Գոհարը չդադարեց «Նահել-ջուհուկներից», նրանց հետ գործ ունենալուց, Դարբնանց Մուքելի շեմքը հանգստացավ խնամախոսներից: Գոհարից հույսները կտրեցին:

Սակայն կար մեկը, վոր համառ կերպով հետևում էր Գոհարին:

Դա Մարտիրոսը չէր...

5

Խառը՝ կամբջջի և կամյերիտ բջջի նիստ է: Խրճիթ-ընթերցարանը կենդանություն և առել:

Այդտեղ են Մարտիրոսը, բառրակ Սամանդը, կուսթեկնածու Բուրաուդոնց Պետին, Փաշոն և ուրիշները:

Կանանցից վորքեայրի Նազանն և ներկա, մի կենսուրախ տարիքավոր կին, վորը կուսթեկնածու չի և նրա հարցն էլին դրել անցյալ անդամ՝ անցկացնելու վորպես անդամ: Սակայն գտան, վոր Նազանը մի քիչ էլ պետք է աշխատի կանոնավոր հաճախի քաղապրապմունքներին:

Որակարգում դրված էր կոլեկտիվացման խընդիրը և ճանապարհների հարցը: Կաշին նաեւ մանրիկ խնդիրներ, վորոնք՝ դործնակուն առաջարկ ու լուծում էյին պահանջում:

Մարտիրոսը գավկոմից ստացած առաջադրությունը կարգաց, վորի շուրջը բացվեց մտքերի փոխանակություն:

Շատերը չեկին կարող ըմբռնել աշխատանքի ճիշտ ընթացքը: Նրանք գտնում էյին, վոր բուն ուժով անգամ պետք է ստիպել սրան ու նրան դուրս չմնալ շարքերից:

Կոմյերիտականներից վումանք տարակուսած մըտածում էյին, թե ինչ կերպ նրանք կկարողանան համոզել կամ պահանջել ծնողներից՝ անտեսությունը մտցնելու կոլեկտիվի մեջ:

Կուսակցականներից մի քանիսը կասկածում էյին, վոր սրան ու նրան համոզելով չի հաջողվի գործը զբլուխ բերել:

— Ընկերներ, — խոսում էր Մարտիրոսը, մենք չըպետք է շփոթվենք, կարիք չկա ըստ սար ու քոլ ընկնել նաչենք, ուսումնասիրենք, հրե կոլեկտիվացող մեր հարևան գեղերին ու սովորենք:

— Դե, ետ շիգակ ա, համա էլի գիտեք թե շիգակ գործ են բռնում հարևան գեղերում: Այ մարդասպանություն ա ըլում, հաշիվուն շիգակ չեն բրնում: — խոսում է մեկը:

Իսկ մի ուրիշը, հաստատելով առաջինի ասածը, ավելացնում է.

— Տավարն ու վոչխարը դանակի տակ են դրել, մորթում են, խաբար էք, թե չե՞, ուղում չեն մանի, գոռում են. ըստե կըլի, բա ի՞նչ...

Յամանդը ձայն է խնդրում:

— Ընկերներ, մեր գործը հեշտ չի, մենք պետք  
ու մեր դեղի պայմանները քննութեան վեր առնենք,  
ու են թհար ել գործներու աղաք տահենք:

— Դո՛ւզ ա, դուզ ա, — համաձայնվեցին մի քա-  
նիսը:

Շիտակ Փաշոն տաքանում է:

— Հընդերներ, հրետիկ չիմս ել մի տնով չենք,  
համա մի հալով ենք, ետ խի՛ չպտի կոլեքտորութու-  
նը գլուխ բերենք, պետք ա՛ գրոաքի լել ըլի, վոր են  
տավարի դաղի գեղացին գաղ հսկանա, թե չե նա  
իրեն քյարն ու զարարը խմանում չի: պապաղան մե-  
նակ ա ելել, մենակ բանել ա, ըտհենց ել աղաք կեր-  
թա:

Մի բուպե լսում են բոլորը:

Սոսքը տրվում է արեշչիկ Ալեքսո՛ւն:

— Կոլեքտորը թագա բան ա, ապրուստի նոր  
ձանապարհ, վոչ մինն ելա կարալ չի մտնի, չվիլը  
հսկանա վո՛չ... Յես ել իմ կողմանն գտնում եմ, վոր  
պետք ա պեղ տեղ ել գոռաքի գլուխ բերունք:

— Կոլեկտիվի գացիան, — սկսում է ուսուցիչը, — դա  
համատարածի բնույթ է կրում, և մենք վոչ մի դեպ-  
քում չենք կարող հետ մնալ ճնդհանուր թափից:  
ամատարած է, թող համատարած լինի: Ահա ամե-  
նուրեք հարյուր տոկոսով կազմվում են նոր և նոր  
կոլեկտիվներ, վողջ գլուզը միանգամից մտնում է  
միութեան մեջ... Ну, что же, մենք ես...

— Վրժապետ ջան, ներողություն, նեղանա՛ս վո՛չ,  
վոր վրժապետ ասի, համա մին ականջ կալ, հընգեր  
ջան, ետ կուլակների հարցը վո՛նց ա ըլելու...

— Կուլակը... Նո՛ւ, կուլակի հետ ել մի բան կա-  
նենք, — անուղղակիորեն պատասխանում է կոմյերիտա-  
կան ուսուցիչը. — նրանց կքշենք այնպես, ինչպես քշում  
են առհասարակ ուրիշները:

— Պահո՛ւ. — բացականչում է մեկը:

— Ի՞նչ պահո՛ւ, — պատասխանում է Աննիկը, — վոր  
հարկավոր լինի, այդպես ել կանենք:

— Հարկավորս վո՛րն է, նրանք մեզ ի՞նչ հար-  
կավոր են, խանգարելուց բացի ուրիշ բան կատարել  
չեն կարող. — ժպտալով խոսում է Անթառամը:

— Ընկերներ, մեր հետագա գործը պահան-  
ջում ա լրջութի՛ն ու յեռանդ, պետք ա առանց  
հուսահատվելու բացատրել գյուղացի մասսայի՛:  
ու նախապատրաստվենք այդ գործի համար: Բը-  
րիգաղներն կգան քաղաքից, ձեռքը ձեռքի տված  
գործը գլուխ կբերենք: Առաջին շարքերում պետք ա  
մենք ըլենք, կուսակցականսխա ու կոմսոմոլնիս: Աշ-  
խատանք շատ կա, մեր գործին խանգարել պտեն կը-  
նանիքը, դուք նրանց հետ լրցել պտեք ու հասկաց-  
նիլ. Նազանը, Անթառամը, Աննիկը ես բանը վո՛նց  
վոր հարկն ա պետք ա կատարեն:

— Կնանոց հետ գլուխ դուս կհանվի, — խոսում է  
Նազանը, — մեռանք ելի նրանց համոզելով, տղամարդ  
վոր լինեն, ավելի վաղ կկարողանանք գլուխը լցնել:  
Ծիծաղ բարձրացավ:

Ժողովը բավական յերկար տեկց:

Աշունը վրա յեր տալիս, սար գնալ փալտի հա-  
մար հնարավոր չեր լինի, յեթե ճանապարհը հարվ-  
ծային կարգով չըլնվեր: Գեղի ճանապարհները խարալ  
եղին, բջիջը վորոշեց դուրս գալ աշխատանքի, շարա-

Թորյակ, առանց բացառութեան: Իսկ սրտի թերթում  
խորագանել բոլոր թուշ աշխատող սեկցիաներին:

Ուսուցչին հանձնարարվեց համապատասխան լու-  
զունգներ գրել, չքավորական ժողովին պատրաստ լի-  
նելու համար: Ուժեղ, կազմակերպված գրոհ, բոլոր  
պրովոկացիաների դեմ, վոր տանում են կուլակները:

Բոլորն ել լուբջ և խոհուն հաշայքներով Թողին  
խրճիթ-ընթերցարանը: Յերբ Մարտիրոսը, Աննիկը,  
Սամանդն ու Անթառամը մի շարք ընկերների հետ  
գուրս չեկան փողոց, դռների մոտ նուրբ շալի մեջ  
փաթաթված՝ կուշ ևր չեկել Գոհարը: Մարտիրոսը  
կանգ առավ, Աննիկն ու Անթառամը մտեցան նրան:

Գոհարի աչքերը փայլում էին, իսկ աչտերը խո-  
նավ էին արցունքից:

— Գոհար ջան, ի՞նչ կա — հուրցրեց Աննիկը:

— Բան և պատանել չերկի. — խոսեց Անթառամը՝  
կիսահարցով:

— Գոհար, հլա մին ասա, աղջի, խի՞ չես լաց  
ելել. — նորից դիմեց Աննիկը:

— Հե՛չ, — տտերը թոթվելով, գեմբը ծածկեց Գո-  
հարը:

Վերջում Մարտիրոսն իմացավ...

— Յես կոմյերիտուհի չեմ, վորբի չեմ նման.  
Ինձ չեք հավատում. — գանգամովել ևր Աննիկին. — Ըման-  
չում եմ դամ ժողովի:

Մարտիրոսը հպարտ ժպտում ևր: Գոհ ևր, շատ ևր  
գոհ իր Գոհարի համար:

— Աշխատիր, Գոհար, աշխատիր, ջանս, վոր կոմյե-  
րիտուհի դառնաս: — Այսպես ևր մտածել, այսպես ևր  
մտածում ու գուրգուրում նրան:

Աշխատիր...

Յերեկս չեր արգեն, չերդիկներից ու մեծ մասամբ  
կլվինդրավոր ծածկերից գուրս նեավող ծխե քուլա-  
ները տեղ-տեղ խաանում էլին ու լցվում փողոց-  
ները:

Շրջապատը գնալով մոխրագուհանում ևր. ջերմ  
չերեկոներից մեկն ևր իջնում: Շագանակագուլնի դար-  
ձած հեռավոր շրջապատը հեադհետե թանձրանում ևր  
լեռնագագաթներին:

Գլուդի հեղլիկ, խաշածեվող փողոցների մի լայ-  
նոտ հրապարակում, տարիների ծանրութեամբ գեա-  
նաթաղ քոթուկների վրա, նստել էլին գլուդի ունե-  
վոր գուրաները՝ Գոլանց Աքելը, Գոլանց Մաթևոսը,  
Վարդանց Գերասիմն ու ծխախոտ էլին Փստֆստաց-  
նում իրար քթի տակ:

Իսկ Գոլուտողանց Պետին քիչ հեռու արխացվի  
մորթն ևր քերում իր կողիտ դանակով: Ներկա չեր  
Շխտակ Փաշոն — գլուդիոկի նախագահը, իսկ «սեկլե-  
տար» Մարտիրոսը նստած կիսաթաղ խրճիթի կտրանը՝  
թերթ ևր կարդում:

Գլուդը տոնական ցնծութեան մեջ լիներ տես:  
Աղբյուրի մոտ խոնվել էլին անասուններ ու մարդիկ,  
խմում էլին գուլալ ջուրը: Հարսները փայտե սափղը-  
ները լցրած, լորի նման վազվզում էլին ցեխոտ փո-  
ղոցներով:

Նրանք ժպտում էլին սրան ու նրան, անցնում  
այնպես, վոր ոտար սղամարդ չնկատեր: Մեկ վայր-  
կյանով չերկու գեղջկուհի հանդիպում էլին, գլուխ  
զլխի տալիս, վորեև գաղտնիք կամ բամբասանք հաշա-

նու՛մ իրար, ժպտում ու բաժանվում է յին: կրկին հանդիպումներ, կրկին ժպտա, կրկին նու՛ն ջրի ճամպան կենդանացնելու:

Կալերում յերեխաներն այնպես ելին տարվել խաղերով, վոր ձաչնը բռնել եր վողջ գյուղը:

Նրանց գրավիչ յերգն եր արձագանգում ու թարմառունչ բովանդակութեամբ շոշափում խաղաղ խրճիթնեքի լսողութունը:

Ծլել է արտա, ծփում է արտա,

Կորել է դարդո՛, ջան...

Խնդուն զվարթ է, բացված նոր վարդ է,

Արտա ազատ է, ջան:

Փոքր լուսթյունից հետո Շիտակ Փաշոն դիմեց Մարտիրոսին իր բամբ, կոշա ու կոպիտ լեռնցու առուպանութեամբ:

— Մարտիրոս...

— Ի՞նչ էլավ, ագա,— գլուխը բարձրացնելով խոսեց յերիտասարդը.— տունդ շինվի, քիչ էլա կամաց խոսա, քառացել հո՛ չեմ, ա՛յ Փաշո:

— Յես հարվածալին եմ զրցում,— ժպտալով արդարացավ Փաշոն.— դու բանիդ կաց: Հո՛, ես տնաքանդ ենք ըլում, ըլավ վո՛չ է, երկու հեղի լա, սելս խաչատակի են սրթումը միում, ա, ճամփենուս թամուղ բրիշակ ա, ճար չի ըլում, ձեզ մատաղ, ըսնե չուա գնալու դադ չի:

Մարտիրոսը մի պահ ուղղվեց իր տեղում ու դարձավ նրան:

— Ե՛տ վոր ինձ ես ւ՛մ հո՛, տենաա Մարտի

րոսը ի՞նչ կարա անի, գեղականի գործ ա, չիմուռ գործը միութենով պտի գլուխ բերվի: Ինձնով, քեզնով գադ չի ըլի: Հե՛, գիղես ասել չեմ, քանի հեղի չեմ Պետնուն, Թեանին, Ալեքին ասել, խի, եկե՛լ են, քանի հեղի մեր աղերանցն ու կոմսոմոլներուն հվաքել, դրադ եմ կանգնել, համա՛ մի գադ ելա ըլել չի: Եկել չեն:

— Ե՛, ես վոխտն ել բոններուս վախտն եր, մաջալ չինք անում,— արդարացան մի քանիսը:

— Ձե՛, հրետի յես չիմուռդ ել ասում եմ, վոր ըսնե գործն աղաք չի գնալ, եսոր ճամփենուս ա խաբար, շինում չենք, բա՛, ենքուն գործեր կան, ո՞վ ա շինողը:

Գյուղի հրապարակը կամաց-կամաց լցվում եր: Մութն իջել եր ու նստել կտուրներին: Լուսնակը սելվորի նման սահում եր անձայր ու անհատակ ճանապարհով:

Մարտիրոսը շարունակում եր:

— Ձվելը միություն ըլի վո՛չ, մենք չիմուցն ել շունեոր ենք մալու: Հրետի, մեր հարեան գեղերը չիմն ել կոլեկտիվ են կազմի, հրե Բոխկնուտը, Խնձորկուտը, Քարավանը, Զրաշնը չիմն ել մինը մուռ քամակից գրվում են: Մենք ել լեզ քնած ենք: մեր գեղը ըսնե առաջ չի գնալ, միութին չկա մեր միջին, ամեն գործի հոգին միութինն ա:

— Դուդ ա, անպետքը խալխ ենք,— խոսեց Գուռուտոզանց Պետին,— մեր խոսքը մի առվով գնում չի, թե չե մենք ել մի գադ ելինք դառել չվելի որս:

— Ի՞նչ ըլի, չըլնի, կոլեքտորը բրախելու բուն չի,— շեշտեց Շիտակ Փաշոն:

Փոքր լուսթյունից հետո Բոլանց Ալիքը թունա-  
լի ժպիտով գլմեց Մարտիրոսին.

— Տենուս ետ ի՞նչ միութիւն, միութիւն ես դրե՞լ,  
եւ չե՞ղ չե՞լա՞յ, կնանոցդ ըսխնուն դիրնեիրդ չի՞ դալիս,  
միությունն ի՞նչ նպատակի հմար եք կազմում:

— Միութիւնը, բատրակ, չքավոր, միջակ աշխա-  
տավոր գյուղացիութեան ոգտի հմար ա, Աքել բիճա,  
կոլեկտիվը նրանց կյանքի, քարուստի լավացման  
հմար ա, — հանգիստ կերպով բացատրեց Մարտի-  
րոսը:

Գյուղի կուլակներն իրենց անհանդիստ զգացին:  
Աքելը դսպլած զայրուցթով նպատասխանեց.

— Հա՛, թե ըտուր հմար ա կոլեքտորը, չիս  
հաչգնում եմ, վոր ժողովուրդը շնորհակալ ա, ուզում  
չի, ետ շա՛նը շինքին փաթաթիլ մեք:

— Մնի, երկուսի ուղածով-չուզածով դադ չի դուս  
գա, կամքի բան ա, ընդհանուրի հաշիվը: Համա՛ն կնա-  
նոցս ըրխնուն մեզ ես հաշվումը խանգարիլ չպտեն,  
ետ դաչդի զըցնին մխելի մնասակաղ ա, Աքել, համ ձեզ  
ա մնաս, համ ել մեղ. — խիստ կերպով շեշտեց Մարտիրոսը:

— Ըտոնց վոր լսենք, սոված կմնանք, — բացա-  
կանչեց մեկը:

— Պետք ա կոլեկտիվը կազմենք, ըսհե ել յոլա  
չենք գնում, բոլ ա. — նկատեց մի չքավոր:

Գյուղին ու շրջակայքին հայտնի վարդնանց  
Գերասիմը կատաղությունից փրփրում եր.

— Մմուրտառ գզգզադեների. — կակաղեց նա. — եեն ա  
ննամմուսնին ծծախել են, եետ լրախոտներին մմեմեկ  
պպտես բմբլահան անի, վոր լավ ըլի:

Մի պահ լուսին ամենքը...

Ջրուցողների գեմբերն ել չեչին լերեում:

Սրճիթներում թրթռում ելին ճրագները, շները  
հաջում ելին, իսկ հետու, հետու գիշերային խավարում  
առկայծում ելին կրակներն ու մարում կրկին-կրկին  
առկայծելու: Հեռավոր սրնդականչը գլութական թըմ-  
բություն ու խոսուտոզ քաղցրություն եր խոստանում:  
Ողը թեթե եր, անուշ եր այդ նորամուտ գարնանա-  
լին լերեկոն:

Բոլանց Աքելի և վարդնանց Գերասիմի յեւույ-  
թը բոլորի բերանը բաց արավ:

— Կոլեկտիվի ոգուտն ու մնասը ձեզ չի վերարե-  
րում, դուք փայ չունեք, ետ խի՞ յեք տրաքում-ժըպ-  
տալով ակնարկեց կարմիր բանակից նոր վերադար-  
ձած կոմյերխական Սամանդը:

— Շիդակ, տենուս ետ խի՞ յեն սբտացալ դար-  
ձել խալխի հմար, — ծիծաղեց Շիաակ Փաշոն:

Կուլակ Մաթեոսը, վոր հաստ ու կարմիր քթով  
մի աժգահա չեր, բարձրաձայն գոռաց, կարծես մեկը  
մի մեծ կարասի միջից եր խոսում.

— Են ա, սովածների բախտը վոր բանի՛ կրանի.  
ինչդար թամբալ, փսխքոտ ու ճանճ քշող կա, ինչդար  
անպետքը անասուն կա, կոլեկտիվի մխոքն ել վոր  
խմանան վոչ, վազիլ պտեն ու գրվիլ ել յեղ...

— Ետ խի՞...

— Ետ սվքեք են թամբալին:

— Ետ ում ա ասում փսխքոտ, — բողոքեցին այս  
ու այն կողմից:

— Ձեզ յես կարամ ասեմ, վոր աչքներուդ վերի  
դին ունք կա, դուք վերի արտի ցորենն եք, մենք կու-  
լակնի յենք:

Քուրուտողանց Պետին չղիմանալով՝ այժի նման  
ցատկեց իր նստած տեղից ու ձեռքով-վոտքով փր-  
փրբած դիմեց նրանց կողմը.

— Դե, բոլ ելավ խողաղայդի խրխոաք. դ՛ուք  
քոռանում եք, ուզում չեք նաչարնին մի պատառ հա-  
լալ հաց ուտեն... Բեֆներուդ չի ըլնում:

— Քքքեֆներուս կկլնի են չչախը,— մեջ ընկավ  
կակազ Գերասիմը.— լյերը, դղուք ել կկերածներուս  
չաք կկբանեք, բ՛ր՛բ՛ւ...

— Ետ չեփ չենք բանել,— կատաղեց չքալոր Պե-  
տին,— ետ քանի՞ հեղի յես հորդ հոգու խաթեր քու-  
ֆաթս պահել, ըոխներուդ լեն-լեն եք բացում:

— Բբանել ել ես, վվվորը չի.— Չղայնացավ Գերա-  
սիմը.— թթե բբբանել ես, եետ խի՞ չես մեջքդ ճղբտո-  
րած մմման գալի, հհհյվան...

— Հալվան ել ես, մեկն ել ալիլ,— հարձակվեց  
Պետին. նբան արգելեցին:

Գլուղում աղմուկ բարձրացավ:

Մարտիրոսը աշխատեց ամփոփել.

— Մեր գեղը քարոտ ա, արոսներս քիչիկ, կար-  
կուտը մի կոնուցն ա տանում, չորութիւնը մի ուրիշ  
կոնուցն ա երում. մեր գեղին չվելի կոլեկտոր ըլի վոչ,  
կարալ չպտենք խելքով գործ անի, մեր կյանքը լա-  
վացնի: Քլասիբը կարա. չի գութան ու տբակտոր բե-  
րի, համա ունետը կարա, քյասիբը կարալ չի գյու-  
ղատնտես բերի, կուլակը կարա. քյասիբը կարալ չի  
արտը վախտին տուն տանի, թողում ա կարկտի տա-  
կին, համա կուլակը փողի ուժով անում ա, ել չեդ  
պարզ չի՞, թե կոլեկտորը ինչպար ոգուտ ա քյասի-  
բին. իրար ունելու, մինս մնու ապրանքին ցավալով

մենք մարդ կզատնանք: չիմա մի գազ ելա ունենք  
վոչ, կոլեկտիվ կաղմվի թե չե, չիմ ել լավ ա ըլելու:  
Սոովարարները տբանջացին:

— Ետ խի՞ չի լավ ըլի, իմ ունեցածը քոնի հետ  
կիսվիլ պալի, բա գեշ կլնի՞...

Վարդանց Գերասիմը չեր հանգստանում:

— Եեեաա, տանք իմ ունեցած կկայքս ել կկկե-  
րաք, յեղ՛ա ի՞նչս պտեք ուտի, ել յեդ զզկկրտալ  
պպտեք, հե գիտեք սասպրո՞ղ եք. ապրել չեք:

— Վայն եկել ա ու ձեզ տարել, Գերասիմ,— ասավ  
Շիտակ Փաշոն.— մենք են ա, ըսհե քյասիբ ենք ըլի ու  
մեր մաջոջն ապրել ենք, աշխատող մարդը կոլեկտոր  
չե, վոր ինչ ել կաղմելու ըլնի, ել չեդ ապրելու յա,  
դուք ի՞նչ եք անելու, դո՞ւք...

Նորից լուսթյուն տիրեց:

— Չե, չիմ ել մին ս, աշխարհի քարը գլորվել  
ս, զզվիլ չի... Զոռաքի ստեղծված աղաթնին ուզում  
եք նոր մեկանց ծռիլ ու զայգա-զայղա բաներ եք մեջ  
բերում, մին կոմունի, մին կոլեկտոր, մին փլան-փըս-  
տան, համա ասած խոսք ա փաշան փաշա չա մնալու,  
մշակն ել մշակ,— վերջացնելուց հետո Քուլանց Աքելը  
ձեռքում դողացող ձխտխտը վառեց:

Մի գսպված ծիծաղ բարձրացավ:

— Ասրդարութիւնը, հրետի աչքներուտ առաջն ա,—  
խոսեց զոռքա Գերասիմը,— են ա են զլխուց ասեչեք,  
թե ֆֆոդներուս լավը չչի, թթե նննաչարներու  
ֆֆոդը բերում չի, դե տտեսնք, ֆֆոզարժանութիւն  
ել ելավ, են ա ֆոդներուս խառնեցիք ու լաջն ել վվե  
կալաք, բս եետ խի՞ չեք մարդ գառնում, հը՞, հար-  
ցընում եմ, խխի՞ չչչեք մմարդ զղղառնում:

— Ինչդար ել աշխարհը պտիտ գա, — փելիստօլայեց Շիտակ Փաշոն, — ել չեղ չբավորի դործն ա դգվիւու, դու բանիտ կաց, Գերասիմ, աշխարն իր բանը գիդա:

Այսպես խնդիրները խորանում էջին: Կամոց-կամաց գյուղը լուււմ էր, իսկ գյուղամիջոււմ հավաքված գյուղացիները բռնված էջին տաք վեճով:

Ճրագները բոլոր խրճիթներում քնակալ աչքերն էջին թարթում:

Տեղ-տեղ սուլում էջին, իսկ շները հաջում:

Յերկնքով ամպերի ցրված հոտերն էջին հողմահալածի պես քշվում, քշվում, քշվում: Լուսինը մեկ թագնըվում ու մեկ էլ ժպտում էր գյուղին:

Վեճը տաքանում էր...

### 7.

Բաղդին կոտպերատիվից հեռացրին:

Նա մինչև վերջ էլ իրեն պահում էր հպարտ, ու հեղինական ժպտը դեմքից չէր իջնում:

— Հա՛, գնացեք աշխատեցեք, ձերն ընի խերն էլ շառն էլ չես ենպես էլ լավ կապրեմ, — ասում էր նա մինչ աջն ժամանակ. չէր գործերը քննվում էջին: Իսկ հեռագալում, յերբ բանից դուրս յեկավ, վոր հաշիվներում մի քանի «գալբուլթյուն» յերևան բերվեց, նա թակարդն ընկած մկան պես մեկ աչս, մեկ աչն մարդուն էր մտտենում ու կրակ կտրած բացատրում էր իր դրուժյունը:

— Են խաչը վկա, պատվովս եմ ասում, ինձ նահախ տեղն են մեղավոր անում, դալբուլթյուն չկա, ինչ ա, երեգվա երեխեն էմ, ծխակառնի չորս կլասը պրծած ուչենիկը կարո՞ սխալ անի, են էլ են հին վոխտվա ուսումը:

Կոտները, վորոնք գետնին, վոր նա իր վախտին ինչքան է պլուկել ժողովրդին, մի դիմումի համար վերջին հատիկ չուղը, ձուն կտրելով քյասիբի ոջախից, ապա նրանք իրեն կիսացալակցուժչամը, շատ դեպքերում էլ լոււլթյամբ էջին ընդառաջում նրան:

— Ա՛ խալիս, Բաղո՛ն եղ յե՛րբ ա սավետական զակոններին մուխաննաթ աչքով նայել. Կոտպերատիվ չես իմ ոջախն եմ հաշվել, իմ տան նման քաղցր աչքով էլ նայել եմ:

— Դուդա, — շեշտում էջին Քոլանց նման ունետրները դուդա, — ա, Բաղո, քեզ գին դնող չկա, ախտս են էլ ինչ դու արիք ես գեղականի հոմար:

— Ափոսս, վորը չի, — պատասխանողը նրան ճանաչողներից էր. — ախտս կըլնի, բա ինչ, բուլ-բուլ կոտպերատիվի ապրանքիցը լվվում էջիք: Եկած ձոթեղենը տակով էջիք անում, շաքարն էլի ըսհե, աղը հո — երեսը չեջինք տենում:

— Ա՛յ, տնաստվածը վոր կա, ճիշտ դու չես, անգրագետ ես ու գաղափարդ աշխատում չի. բա չես ամաչում, վոր վրաս էղ տեսակ շառեր ես գցում:

— Դանակավորնին շատանում են, չե՛վ չե՛զը տափովն ա դիպչում: Են ա, Բաղո, վոր մին ընդար, ամեն մի մարդ էլ խոսալ պտի, մին ա, — խոտողը չարչի Ծաքարն էր, կոտպերատիվի գիտացի ջրհորանման կրպակատերը:

— Ե՛չ գիդի Ծաքար, դո՛ւ չե՛լ քու հալովը չես, — նկատեց մի ուրիշ գյուղացի, — ետ դո՛ւ չես Բաղոյի քամակին կանգնած, ետ դո՛ւ չես, վոր բերածնուն չիմ քաշում ես կոտպերատիվից ու մինը տաս գնով ծախում:

— Դե՛, ըռեխտ հա՛, եշակ:

— Եջակ, սպեկուլյանտ ել, հլա մին ել ավել, բն, հե գեղես բան չենք հսկանում:

— Խե՛, դուզ չի՞ ասում, դուզ չի, վոր մեր Բաթրանց հարսի հմար կարմիր գլխաշորը 25 մանեթով տվիր: Համա կոտպերատվումը չերեք մանեթ քսան կապեկ ին ծախում,—պնդեց մի ուրիշը:

— Չայը; աղը, չի՞մ քեզ մոտ ա ըլում, դու յես ծախում: Դուք երկուսդ ել մեր կոտպերատիւր քանդիլ եք:

— Սուս կաց,—գոռաց Բաղոն,—բոլ ելալի շտուկ եք հնարում, համա մեկ ա, ինձ փասս չեք տալ, յես Շաքարին մի գաղ ելա տվել չեմ:

Շաքարը շղայնացել եք:

— Հենց ետ խոտոգներուցն եր ասել, ետ խոտոգներուց: Հն, հն, շան տղեք, դուք եք ծախել, յես ձեր հերն անիծեմ:

Բաղոն չեր իմանում ինչ կերպ փրկի իր դրությունը:

Յեկ ամեն անգամ յեզրակացությունը ստացվում եր աչն, վոր Բաղոն կուլակների ու չարչիների կողմն ե չեղել ու փասս ե տվել գյուղկոտպերատիվին:

Նրա գործը քննվում եր:

## 8.

Վորքան շրեր են հոսել աչն որից, յերը խորհրդալին իշխանությունն ատաշին անգամ վորոտացել ե այդ գյուղերում:

Լեոնային այդ շրջանը հայտնի յե շրջակայքին: Այդ վեհանիստ բարձրությունների վրա ե աննման ձորերի ու հովիտների ներսում թաղնված, մարդկային

բանակներ են բարձրացել՝ պաշտպանելու բանվորագյուղացիական իշխանությունը, խորհուրդների իշխանությունը: Կարմիր մարտիկները քիչ չեն այդ շրջանում, քիչ չեն նաև լեոնային, այդ ժպտացող հայկական գյուղում:

Լեոնայիները զգացել են միջազգային կուլիների արհավիրքը: Այդ լեոնների վրայով են փախուստի դիմել դաշնակցական խմբապետները: Թալանի, կոտորածների, բռնությունների լավան հեղեղել ե և անցել նրանց աչքի առաջից:

Այդ լեոններով վորոտացել են ու ֆշշացել տաճկական թնդանոթներն ու ումբերը:

Աչն, շատ որեր են անցել...

Մարդիկ դիրք են մտել վորպես կարմիր պարտիզաններ, մարտնչել են ազգալին մառեղերիցմի, մենչեկյան բանդայական, հրոսակային ներխուժումների դեմ:

Յեկ անա փայլել ե դրոշակը բարձրանիստ այդ աշխարհի վրա: Կարմիր արյունի գնով ձեռք բերված ազատության դրոշակը...

Աչն որից հին գյուղը շարժվել ե, ճահիճը կենդանացել: Յեկ ծառացել են թարմ, կենսունակ ուժերը մի կողմից, իսկ զիմացը կանգնել ե աչն հիդրան, վորին ներքին թշնամի չենք ասում: Վճրքան հրապուլքներ ունի կյանքը: Վճրքան իդիլիկ են թվում այդ գյուղերը ե վճրքան նահապետական բան կա այնտեղ: Սակայն ինչն ե շարժում այդ հնամյա կենցաղը, ինչն ե հրահրում որերի շունչը՝ մեր խաղաղուն խրճիթներին. տվքեր են բարձրանում գյուղերի վրա:

Այդ բարձրանում ե դասակարգը՝ մի դասակարգի դեմ, դա բարձրանում ե մեր ժամանակի վոգին:

Հաղար-հաղարներ են խորհրդային իշխանության բարեկամները: Հաղար-հաղարներն են ծառացի այս վճռական պայքարում:

Յեղ հոսում էր ժամանակը...

9.

Որը կիրակի չեր...

Կոռպորատիվի առջ ըստմութունն էր հավաքվել ներսում լիքն էլին:

Սամանդն աշխատում էր հասկացնել բողոքող պուղացիներին, վոր զեֆիցիտավոր ապրանքները մթերքով են տրվում:

— Այ, խալիսը, տալ չենք, տալ մթերում, իմացաք, վոխտին ձեր փալը բերիլ չեք, գործը տուժիլ պտի, մեզ վրա պարտքն ա ընկնում, ենքան ցանիլ պտենք... եսդար ել յեղեղեն ա հվաքվելու, — բացատրում էր նա:

— Ունենք վոչ, կարալ չենք ցանիլ, խի՞ չեմ ցանում, ցանիլ չեմ, — խեղդված ձայնով խոսում էր մի ծերուկ:

Քուլանց Աքելը քմծիծաղին տալով զրսից ավելացնում էր.

— Ասա ցանեմ, վոր գաս մուֆթան տանես, հորդ ողորմի:

— Ցանիլ չես, ստանալ չես, Աքել, ստանալ չես, — հեղնաբար ակնարկում էր ունեոր Մաթևոսը՝ Աքելի յեղբայրը:

— Բա քլասիբների ուժը կարմտի եողդար ցանք անի, — բոսում էր նորից թե առած ծերունին:

— Քլասիբին սղնիլ պտենք, հո թողալ չենք,

վոր մնան, են ա չիմս ել գելովի քլասիբ կուսը չենք, — բացականչեց Շիրակ Փաշոն:

Անկյուններում շատերն էլին փսփսում:

— Ես չիմ Մարտիրոսի ու Սամանդի սարքած բաներն ա. են վոխտը, վոր Բաղոն էր կոռպորատիվումը, բա խի՞ չկար ըտթավուր ոլիննի:

Դրսում արեը խաղում էր խոնավ դեանի հետ ու փայլիլին տալիս տեղ-տեղ գոված ջրերի հետ:

Մաբտիրոսն էլ էր այլտեղ, նա զրուցում էր ուսուցչի հետ:

— Այ տղամ, Վանո, — ձայն տվավ Մարտիրոսը Վանոյին, վորը պարանն ուսին գնում էր խոտ իջեցնելու դեղի վրայից:

— Հէյ, — պատասխանեց նա և քայլերն ուղղեց նրանց կողմ:

Յերբ մոտեցավ, նրան մի շաքը հարցեր տվին ու մի խումբ դուղացիներ շրջապատեցին այնպես, վոր Վանոն մի բոպե շփոթվեց:

— Ի՞նչ ա ելել, — ասավ նա:

— Ետ վոնց ան, ապրանք չեն տալի, ասում ա անդամ պտես գրվի, փայտվճար տես տա, — խոսեց մի կին, վորը կայարանում աշխատող Մուկուչի կինն էր ու պուղի բոլը կանանց մեջ ճարպիկ ու աչքաբաց:

— Ետ խի, Հոռոմսիմ, մթն թե դուր չի ասում, որենքով ան, ով վոր փայ ա գնում, նա յել ողորմում ա կոռպորատիցը, — պատասխանեց Վանոն:

Աղմուկ բարձրացավ...

— Յես ետ ա տվել եմ փալը, խի՞ չի տալիս:

— Յես միջակ եմ, ինձ իմ հեսարովը չի պատկանում, բա ետ խի՞ յա ավել ուզում, — հարցնում էր մի ուրիշը:

— Յես կթան սենեմ վոչ, կթանը ցամքել ա,  
բա հագնվիլ չպտեմ, չալ չիմ խմելու:

— Լնվ, ետ վոր բոբոռում եք, տենուս ի՞նչ եք  
ասում:

— Ասում ենք, վոր Սամանդն ոչիննի չա հանում  
չվելի որս ելել չի մթերումը, ետ խի՞ չա հմի ըտհե,—  
խոսողը գյուղի չարչի Շաքարի կնիկն եր:

— Չվելի որս ըտհե յեր, հմի ըտհե չի, հմի որեն-  
քով ա, հաշվով, չվել որս... Բաղոյի վոխտն ուրիշ եր,  
նա խնամութին շատ եր անում, հմի Սամանդն ա,  
Սամանդն որենքով ա գործ բռնում:

— Նա հե գիղես խնամութին չի անում,— խոսեց  
պատի տակ կրնկներին նստած Շաքարը:

— Չչե, ննա մմաքուր ա,—տոն ա վեց կուլակ  
Գերասիմը:

Մի քանիսը ծիծաղեցին:

— Սամանդը թե մաքուր չի ըլնի, նրան ել դուս  
կանենք,— դառնալով դեպի Գերասիմը՝ շեշտեց Վանոն:

— Դղսրս կանեք, վճրը չի...

— Չախնազուրկը խի՞ չա խոսում,— բացականչեց  
մի բատրակ:

Բոլորը լռեցին մի պահ...

Շաշ Սոււմբաթը Կարոյի հետ կանգնած ելին ու-  
ղիդ ճանապարհի մեջտեղում: Նա ծխախոտ եր փա-  
թաթում: Բատրակը, վորը հիմա ցրիչ եր դարձել և  
ըջանից նամակներն եր գյուղ բերում ու տեղական  
հանձնարարություններ կատարում, ենքան ել դուր  
չեկավ, և չեր դուր գալիս առհասարակ, վոչ Սոււմբա-  
թին, վոչ Կարոյին, վոչ ել ընդհանրապես բոլոր նրանց,  
վորոնք խեթ-խեթ ելին նախում «մարդ» դարձած քյա-  
սիբներին:

Բատրակի նկատողությունը Սոււմբաթի նշարե-  
րին կավ:

— Շան տղա, լեզուդ խի՞ չես քեզ քաշում, ու-  
ղում ես փոստը հանեմ,— բոռաց նա և մոտենալով մի  
ուժեղ ապտակ հասցրեց:

— Սոււմբաթ, ամախ մի,— միջնորդեց շփոթված  
կուլակը,— փշացած, ի՞նչ ես ուզում, ջջաահել ա. բման  
չկա:

Ամին ինչ խառնվեց իրար: Բատրակը գետնից  
քար վերցրեց և ամենայն ուժով շարտեց Սոււմբաթին.  
քարը վրեպելով դիպավ կոտպերատիվի մի հատիկ ա-  
պակու պատուհանին ու փշրելով ընկավ ներս:

— Կկապեո, խխառնվես վոչ, տուն կկորի,— պա-  
հանջեց կուլակ Գերասիմը վորդուց, վորն աշխատում  
եր պահել ցրիչին:

— Հմի յել ափաշկարա մարդ եք ծեծում, ելի,—  
խոսեց Մարտիրոսը:

— Մարդ չեն ծեծում, ըլխին վեր են տալի,—  
հեգնեց Կարոն,— երես տված մարդ ա, երեսը դայիմ ա,  
բան չկա, մեռնիլ չի:

— Սոււմբաթ,— մեջ ընկավ Շաքարը,— բոլ ելավ,  
բարընցեք, պատահմունք ա,— հորդորում եր նա:

— Հայրույնքների մի տարափ եր, վոր Սոււմբա-  
թը թողնում եր բոլորի հասցելին:

Վանոն, գյուղխորհրդի նախագահը. գործի անցավ:  
Բատրակին ու Սոււմբաթին տարան խորհրդի  
գրասենյակ արձանագրություն կազմելու:

Մնացած գյուղացիներն ել կամաց-կամաց այդ  
դեպքը զարգացրին, անցան առուրջա խնդիրներին: Կո-  
ւկտիվացման մասին ելին զրույցի բռնվել:

— Ամեն մտի հոժար կամքովն ա ընելու, ո՞վ ուզել չի, գնալ չի կողեկտիվ, — ասում էր մի գյուղացի: — Այ, խոսքի որինակ՝ չես. ուզում չեմ, հու կամբալ չես ինձ դուռքի կոլեքտոր անի:

Ունեւոր Բոլանց Մաթևոսը տաքացած պնդում էր.

— Հոժարությունս վճրն ա, դոսով ա, դոսով, գնանլ չես, կխլին, հլա մին աչքդ ել կհանեն ու ակլոր կթողան:

— Սուտ ա, վոչ մի ժամանակ չի պատահի, դուռքի կոլեքտոր ըլիլ չի. — շեշտում էր կխոսահամոված մի միջակ:

— Չի պատահի վճրն ա, հրետի Տանձուտումը, Մոխրուտանց Խեչոյին, Աքարանց Մանեսին դոսով չեն կոլեքտոր արել: Մթն րան ես ասում. խի՞, որը արեգակի նման պնդդ չի:

— Դո՞ւզ ան, — կակաղեց Գերասիմը, — գուզ ան, հրետի Գոմաձորումը քաղբիցը մինն եկել էր. ժժողովին արել ժժողովումն անսել էր, թթի սնվ գզրվիլ չի, մմենք ննրանց կկուլակ կհնայտանրարենք, կկզբը կենք ընտրողական իրավունքից:

Վիճարանությունը լրջանում էր, ունեւորները հրահրում էին նրանց: Մարտիրոսը տեսնելով վարդությունը լրջանում է, մեջ մտավ բացատրելու իրողությունը:

Սակայն նրա մեջ մի ինչ-վոր մտթ րան էր մտում: Նա հոգեպես իրեն թեպետ լավ էր զգում, բայց չէր կարողանում այնպես պարզ պատկերացնել կոլեկտիվացման բոլոր ետաղները: Այդ աշխատանքներին ամենաճիշտ ճանապարհը:

Համատարած էր:

Թերթերն աղմկում էին: Գյուղերում մի լեռան վեռ էր տիրում:

Մեկ գյուղը մյուսից յետ մնալ չէր կամենում: Տեղի յեր ունենում մի խոշոր գործ, բայց և այնպես զգալի սխալներով:

Վորոնք էյին այդ սխալները՝ Մարտիրոսը հասկանում էր, բայց... կալին մարդիկ, կային դեկավարող անհատներ շրջաններից ու քաղաքից յեկած, վորոնք աջակիսի բաներ էյին ասում...

Գյուղում, անգամ այդ լեռնային գյուղում, շատ կուսակցական ընկերներ այն չէին ասում, ինչ մտածում էր Մարտիրոսը: Հինց անցյալ որը Վանոն պընդում էր, վոր մենք շտապ կարգով պետք ա անցնենք ու հարվածային ճանապարհով չիմուռն ել կոլեքտոր դարձնենք...

Ե՛լս, ինչ լինի-լինի, յես այսպես եմ կարծում, կուսակցությունը այսպես և մտածում, — մտորում էր Մարտիրոսը: Մարտիրոսը բացատրում էր.

— Ընկերներ, դուռքի վոչ մինն ելս իրավունք չունի կոլեքտոր անի ձեզնից վոչ մուռն: Նտ դաչդի բան բանողնին խորհրդային իշխանությանը դեմ են գնում: Մ՛եր կուսակցությունը և կառավարությունն ուզում չեն մարդկանց դուռքի կոլսոզ քչեն:

Չափազանց լեռանդուն կոմյերիտականներից շատերը վիճի ընթացքում պաշտպանում էյին Վանոյի տեսակետները, կարծելով թե Մարտիրոսին են պաշտպանում:

Նպատակը կար, — կոլեկտիվացում, իսկ թե ինչ կերպ նրան հասնել այս էր գորդյան հանդուցը մի քանիսների համար:

— Սուտ ա ասում, ա խալիս, սուտ ա ասում,— հորդորում եր Գերասիմն իրեն շրջապատողներին:— Զուլում ա ըրընեւում, զուլում:

Իսկ այդ պահին հեռվում, գլուղխորհրդից դուրս ելին գալիս Շաշ Սոււմբաթը և մի խումբ հետաքրքրվողներ:

— Մայրիկդ լացցնիլ պտեմ, շան տղա, քու խաթեր խի՛ չեմ շառմա տալու,— Փշշում եր Սոււմբաթը:

10.

Գյուղը փոթորկվում եր...

Կուլակային տարբերը նախազգում ելին մոտալուտ որբերի վճռական նշանակութունը: Նրանք անդադար զբաղված ելին անկազմակերպ գյուղացիությանը շփոթելով: Յե՛վ պրովոկացիան հասնում եր խոշոր, անթուլյաարեւի խոշոր չափերի:

— Տուններուդ քանդում եք.— համոզում ելին նրանք,— կուլեկտիվը ձեզ մնասից ուրիշ մի դադ ելա տալ չի:

— Կնկներուդ ձեռներիցդ թողում եք, ամոթ ա, բեարուտ եք ըլում, ուղիլ մեք, ուղիլ մեք. կուլեքտորը մի դադ չի.— իրենց աղքեցության տակ ընկած բատրակներից մի քանիսի խրատում ելին «բարերար» կուլակները:

— Զրկվեք պտի ֆողից, տնից, տեղից, երեխից, կերած թիֆենին հաշվող պտի ըլնի, կերած հացներուտ հարամ:

Վարդնանց Գերասիմի տղա Կապետը սպառնում եր.

— Դե, ետ ա, մինդ թող գրվի, կտենսւ, թե յերր ա իր վերջի որը:

— Կաշներուցդ տիկ ենք հանելու, հըրա մին վորձեցեք,— թքախառը հայհույում եր Սոււմբաթը:

Գյուղացիությունը չերբում եր, զգալի տոկոսը դեռ չեք համոզվել կուլեկտիվի նշանակության սոցալակարության մեջ: Սակայն դասակարգային ինտտինկտը պայքարի ընթացքում իր խոսքն ասել եր: Զրավորներն ու բատրակները պատնեշի նման ծառացել ելին բոլոր արգելքների դեմ: Միջակներից շատ շատերը տատանվում ելին...

Գյուղի լավագույն ուժերը քնած չելին: Կազմակերպչական գործը տարվում եր բուռն վողկարով թյամբ:

Վնասարարական ալիքը բռնել եր վողջ շրջանը: Սկսվել եր վայրի գործողություն... Մորթում ելին անասուններին անխնայաբար: Կուլակներն իրենց ապրանքը վաճառում ելին չքավորների ձեռքով:

11.

Աշնանային աշխատանքներն իրենց թափի մեջ ելին մտել: Սկսվել եր վառելիքի նախապատրաստության չեռուզեռը: Ցրտերն իրենց սպասեցնել չելին տալու: Գյուղի մաշված ու բղկտված ճանապարհները կնճռտովել ելին սալերի անցուղարձից: Վերջին տերևն ընկնում եր ճյուղքից ու թաղվում խոնավ գետնի մեջ անվերադարձ:

Այդ գլշեր սարալանջի վոքրիկ գյուղից սալերի քարավանը դուրս յեկավ դեպի սար, հեռու-հեռու անտառները փաչտի: Ընտանիքի անհրաժեշտ տնտեսական կարիքը կտրել եր Մարտիրոսին հասարակական աշխատանքից, և նա չեւ ուրիշների հետ մասնակցելով սալաշարքին, սարն եր գնում վառելիք բերելու:

Գնացողներից նաև Քուլուտողանց Պետին էր,  
Շիտակ Փաշուն, Սամանդը և ուրիշները:

Մբանց հետ եր նաև կուլակ Գերասիմի տղա Կապետը:

Ճանապարհները դեռ լավ չէլին չերևում: Սալլորդները ննջում էլին... Արարաները թոխք էլին անում անհարթ ճանապարհով ու ցնցվում մոնտոն ճոխնչով:

Առավոտիս խոնավ ու ցուրտ ողբ մարդու մարմինն էր մտնում:

Սալլերը ծանրորեն ընթանում էլին. բոլորն էլ ծանր խոհերով թմբել ու մնացել էլին:

Ուղին չերկար, հոգսը շատ, չուրաքանչյուրը մտածելու առիթ ուներ:

Մարտիրոսն էլ իր հերթին...

Նրա տարիները հասել էլին, պառավ մայրը շաղխով դեռ հին, պապենական սովորություններով ու «մուրազներով», քանի-քանի անգամ էր հանդիմանել վորդուն, թե՛

— Մարտիրոս ջան, պսակվիլ չպտե՛ս, բա ուզում չե՛ս, վոր մերդ խնդա:

Ի՞նչ անի Մարտիրոսը, վե՛նց կտորի պառաված ծնողի սիրտը:

Աննիկն էլ Մարտիրոսի քույրը, ինչպես արդեն նկատել էր, ուրիշի վրա աչք ուներ: Յե՛վ այդ ուրիշը սալլորդներից մեկն էր, վորն անշուշտ հիմա միևնույն խնդրի շուրջն էր պրպտում, մտածելով Աննիկի մասին:

Շիկահեր կոմսոմյւ-բատրակը, Մարտիրոսի մանուկ հատակի «ամենապղիպ» ընկերը՝ Մամանդը: Սա-

մանդն ու Աննիկը վաղուց էլին իրար դուր չեկեր, շատ վաղուց:

Մարտիրոսն էլ անտարբեր չեր դեպի Գոհարը: Գոհարին չսիրել չեր կարելի:

Գոհարը՝ վայրի պախրա, Մարտիրոսը՝ Չահել-Չիվան կաղնի, խկնրանց սերը՝ զուլայ լեռնային առու...

Յե՛վ անա մտքեր, վորոնք առորյա հասարակական աշխատանքներին կից, ընթանում են զուգընթաց:

Մարտիրոսը անձնական հաճույքով չերբք չեր հրապուրվել, իսկ իր ու Գոհարի սերը նա համարում էր հերթական անհրաժեշտ չերևույթ թե ընտանիք

կազմելու և թե հասարակական գործը կանոնավորելու տեսակետից: Ժամանակ էր ընտանիքավորվելու:

Գոհարն իր հոյակապ կառուցվածքով դեռ շատ և շատ հղվելու նրբութուններ ուներ: Գոհարը շատ բան էր սովորելու առողջ հաղթանգամ Մարտիրոսից: Կյանքը դնրանց պետք է ընդուներ մի նոր պայմանով...

Մարտիրոսը քիչ բան չեր կատարել Գոհարին նոր մարդ դարձնելու խնդրում: Վայրի, սպիտակավուն առողջ խնձորի նմանող գեղջկուհին, իր լիոնային վճխա ու խորունկ հաչացքներով, փոխադարձ քնքշում էր Մարտիրոսի սիրտը խորին չերախտադիտությամբ:

Նա կամենում էր Դարբնանց Մուքելի հեռանկի հոգով դաստիարակված աղջկա աչքը բաց անի: Մուքելն այսպես թե այնպես դեռ այն կարծիքին էր, վոր՝

հին կյանքը մեռնելով — «ասես աշխարհի համն ու հոտն էլ ա կորչում»...

Այդ չեր պատճառը, վոր Դարբնանց Մուքելը դեռ չեր կարողանում իր հարեանական, բարեկամա-

կան կապերը կտրել գյուղի հին «համով-հոտով» կուլակներից:

Յեզ քիչ չե՛ր պատահում, Մուքելը նրանց հետ  
բորբոսակալած մտքեր եր փորփորում: Թեպետ նա չե՛ր  
բեք մի լավ կարծիք չի ունեցել այդ հին մարդկանց  
մասին ընդհանրապես:

Անձնական բնույթ կրող այս մտքերից գուրս  
նա շատ բան ունե՛ր մտածելու...

Գյուղում պաշքարը սրվել էր, չար ձեռքերը չար  
գործեր ելին տեսնում:

— Մարտիրոս,— ձայնեց Սամանդը:

— Հե՛յ,— պատասխանեց նա:

— Քնես վնչ...

— Քնում չեմ, Սամանդ, բանիդ կաց:

— Հն, դե լավ ա...

Ու կրկին լուս, սայլերի մոնոտոն ճռինչը և առա-  
վտավա խոնավ ցուրտը...

Կրկին մտքեր, մտքեր, մտքեր...

Նրանք, պապուկներն պես, սայլերով մաղկցում  
եյին զառիվաչրներով ու վերելքներով: Մի քանի ժամ  
ճանապարհ դնալուց հետո այնքան բարձրացան, վոր  
առաջին խի սարահարթից յերևաց գյուղը:

Հեռու, հեռու մշուշների մեջ կորած եր այն,  
տեղ-տեղ միայն փայլում էյին, պեծին-պեծին տալիս  
թրթռուն ճրագները: Գյուղում արդեն արթնացած պիտի  
լինեյին թրաջան հարսներն ու պառափները: Իսկ մա-  
նուկները կարկատած անկողինների մեջ՝ մուշ-մուշ  
խոսփալիս:

... Բոլորն էլ նկատել էյին, վոր մի գորշ ամոլ  
նստել և գյուղի կենտրոնում, խի նրա միջից փայլուն  
լեզուներ էյին յերկինք բարձրանում:

Վոչվոր չե՛ր համարձակվում կարծիք հայտնել:

Վերջապես մի ծերուկ ընդհատեց մեռելային լու-  
թյունը.

— Ադն, գեղամիջում կրակի ալաֆ ա ըրեում,  
խոս ա երում, կամ տուն, մեկի ոջախը բրիշակ ա  
ըլում:

Բոլորն էլ սայլերը թողած, խմբվել ելին ու սպըրդ-  
նած դիտում էյին հեռուն:

Մենակ կուլակ Գերասիմի տղան ինչ-վոր ան-  
հանգիստ շփոթի մեջ եր... Սակայն աշխատում եր  
սառնարյուն ձևանալ:

Վարդնանց Կապեռը գյուղի ամենախառնակիչ  
ու վնասատուներից մեկն էր: Ունում, հարբում եր, սրա-  
նրա դուռն ընկնում, այս ու այն հարսին խոսք գցում...  
Կամ մեկն ու մեկի յերեսին դանակ խաղացնում: Ամեն  
ինչ սպասելի չե՛ր նրանից: Ինչպես ասում էյին, «Իր  
աստծուց» չե՛ր վախենում: Դեռ մանկուց «կապը»  
կտրած լակոտ եր, մեծացել, խի հիմա «ոձ», «կարիճ»  
դարձել ու խալխի ջանն եր ընկել: Կապետն ասելով-  
ատում եր կոմսոմոլներին ու կուսակցականներին,  
մասնավորապես Մարտիրոսին:

Յեզ հիմա, յերբ բոլորի դեմքին վշտի արտահայ-  
տություն կար, նա անհոգ սուլում եր...

— Տեսուս ումն ա,— հարցրեց մի սայլորդ:

— Հսկացվիլ չի, հեռու չենք,— պատասխանեց  
մեկ ուրիշը:

— Մին չի, թե ումն ա, ետ ա վնաս ա, ես էլ  
յաման վնաս,— ասավ Մարտիրոսը:

— Ումն էլ վոր ըլի, Պետապիցը փող կառնի,  
վնասվիլ չի.— խոսեց կուլակ Գերասիմի «աղի պահած»  
Կապեռը:

Բոլորը նայեցին նրան. Կապետի ազվեսի պես սուր և յերկար դեմքը ժպտում էր:

— Հայվան-հայվան զբռցիլ մի, Պետապը քո ջերեցը չի տար, ելի չիմնուս կապեկներն ա,—նկատեց Մարտիրոսը:

— Կալ, թայրդ գտի, չես գլուխ չունեմ քարոզ-ներիդ լսելու, հսկանում եմ, պարոն ջան, թե սիրտդ ինչդդար ա երվում:

— Ձենդ, Կապետ, պարոնն են ա ըրեում ա թե ով ա, համա իմ սիրտը վոր մղկտում ա, ետ հայտնի բան ա, դու քունիցը խոսա,—սրտնեղած պատասխանեց Մարտիրոսը:

— Յես գլխի չեմ, թե ում հմար սիրտդ կերի, մին քու ապրանքի, մին ել... են մինն ել ասիլ չեմ, ամոթ ա...

— Ասա, ամանչիլ մի...

— Դարբնանց Մուքելի.—կարճեց Կապետը:

— Ինձ հմար մին ա, Մուքելն ել, Պետին ել, ապրանքը ապրանք ա, հալալ քրտինքով աշխատած ապրանքը չիմնու սրտին ել ցավ կդառնա:

— Գուհարն ու Գուհարանց ապրանքը ավելի կերի, չես ըտնե գիդամ.—հեգնորեն շեշտեց Կարոն:

Ամեն ինչ հասկանալի չեր...

Կարոն վաղուց եր սիրում Դարբնանց Գոհարին, ուստի չեր կարող չխանդել Մարտիրոսին:

Նա չի մոռանա չերբեք, չերբ անցյալ ամառ ուր-թերում միտք դրեց Գոհարին փախցնի: Նրան ոգնելու չեր աչքը շիլ Սումբաթը, իր նման «անուն» հանած, արունք հանող մի տիպ:

Կարոյին չեր հաջողվել:

— Սիրում չեմ, սիրում չեմ, ըսխիտ կարոտ չեմ, բեմուրնդ,—տաքացել եր ու վարդ կտրել Գոհարը նրան պատասխանելիս:

— Ուզիլ չես,—հարցրել եր Կապետը:

— Ձե, ուզիլ չեմ:

— Դե վոր ետ ա, կփախցնեմ...

— Գլուխդ քարովը կտաս, ինձիկ ել կարալ չես անի:

— Գուհար, ինձ Կապետ կասեն, սաղ զեղը կրակ կամ քու խաթեր, մին ա, ձեռիցս փախչիլ չես:

— Դե, կտենունք,—հպարտացել եր զեղեցկուհին:

— Կտենունք,—սպառնացել եր Կապետը:

Ահա թե ինչի մասին եր շեշտում Գերասիմի տղան: Մարտիրոսը գլխի ընկավ, հասկացան և մնացածները:

Քոլուտողանց Պետին, վոր մինչ այդ լուս էր, տաքացավ:

— Յես քու ըսհենցն ու ընհենցը, ըսիլ չելավ, հորդ փեշակը սովորում ես, շան տղան:

Նրան թույլ չտվին հարձակվի:

Կապետն իր հերթին առաջ չեկավ...

Շիտակ Փաշոն վաչրենի բոռոցով կանգնեցրեց:

— Թե ուզում ես կարկաժդ հազար կես անեմ, վստոյ մին աղաք գիլ:

— Կապետը չետ քաշվեց:

Մարտիրոսը մտատանջության մեջ ընկավ:

Գյուզը ծխում եր...

Նույն պահին քրտնաթաթախ կոմյերիտ ձիավորը կանգնեց նրանց առաջ:

Ձիու ոնգերից առատությամբ դուրս եր նետվում գոլորշին:

— Մարտիրոս, — բացականչեց լեկվորը շնչակը-  
տուր, — դարմաննոցդ խոտի դեղի հետ կրակ են տվել:  
Բոլորը դարմացած նայեցին իրար... Խորհրդավոր  
լուսթյուն տիրեց:

Վարդնանց կապեալը գրպանի դանակով իր  
ձեռքի ձողն եր տաշում...

Մարտիրոսը գլուզ դարձավ:

12.

Յերբ Մարտիրոսը գլուզ դարձավ, նրա մեջ դեռ  
սպրում էյին վողջ ճանապարհին մտածած իր հուզում-  
ները:

Մարտիրոսը պարզապես գիտեր իր և հասարա-  
կութան թշնամիներին: Նա ճանաչում էր նրանց,  
վորոնք դարանակալված, իրենց անկյուններին, աշ-  
խատում էյին խփել սրան ու նրան, վրասել այս ու  
այն գլուզացու բարիքը:

Զգում էր Մարտիրոսը, թե վորքան դժվարին էր  
աշխատանքը: Բացարձակ կեբպով ընդդիմադրում էյին...  
Հարկավոր էր խուճապի չմատնվել:

Ահն և կրակիլ են նրա ձմռան հույսն ու հենա-  
րանը: Ի՞նչ է անելու, ի՞նչ կերպ պիտի ապրեյին իր  
մի լուծ անասունն ու մի կովը: Ապա ի՞նչ անեն նրանք,  
վորոնց անասունն են մորթում, ի՞նչ անեն նրանք,  
վորոնց համոզում են կուլակային տարբերն իրենց  
ձեռքով վրասել սեփական տնտեսությունը, քրտինքն  
ու վաստակը:

Անասուններ էյին մորթվում անխնայաբար,  
մորթվում էյին ամենաքնքշած անասունները, վորոնց  
վզով վարվել են չերբեհ չքավորի յերեխաներն ու  
համբուրել նրանց աչքերին:

Անասունները չոքում էյին կուլակների հրահրու-  
թյամբ, մորթված՝ փակում էյին հեղիկ աչքերը:

Մարտիրոսը գլուզացիլ չեր, լավ գլուզացի: Նրա  
սիրտը մղկտում էր անխնայաբար մորթվող անասուն-  
ների համար: Վնասն անշուշտ հսկայական էր:

«Եյ, ուշքի չեկեք, չեղբայրներ, ուշքի չեկեք, բա-  
վական է, կուլակների պրովոկացիան է, մի վրասեք  
ինքներդ ձեզ» — ուզում էր գոռալ, ճչալ, լար ու սիրտը  
կտոր-կտոր էր լինում:

«Ե՛յ, զգուշ, Մարտիրոսները մենակ չեն» — մտա-  
ծում էր նա և մաքի մեջ սպառնում:

Նրա մեջ մարմնանում էր բողոքը:

\*\*\*

Գլուզում իրարանցում էր:

Փողովուրդը հավաքվել էր խումբ-խումբ այս ու  
այն անկյունում, բարձրաձայն իրենց դժգոհությունն  
էյին հայտնում:

Կոմյերիտականները, չերիտասարդությունը և առ-  
հասարակ գլուզացիք տնից շուր էյին կրում՝ կրակի  
առջևն առնելու, վորն սպառնում էր հարևան հարգա-  
նոցներին հասնելու:

Յերբ Մարտիրոսը անցնում էր գլուզի փողոցնե-  
րով, հարչուրավոր աչքեր էյին հետևում նրան:

Յիվ այդ աչքերին շատերն էյին ցավակցում նրան  
ու լի զայրուցթով հայնոյում վրասարարներին: «Իուշ-  
մանի գործ բոնողներին»...

Կրակը տեղ-տեղ լեզուներ էր արձակում, իսկ  
թանձր ու սև մուխը փովել էր, գլուզը բռնել:

Ճիշ, աղաղակ, շների կլանչ, յերեխաների ծղըր-

անցը, բոլորը, բոլորն, ինչ կար, հիշեցնում եր դժբախտութեան տխուր տեսարանը: Պատկերներն ալելի խտացնում, լացը, բողոքը, պատուհասն ալելի սարսափելի դարձնում:

Բարբին թվում եր, թե ինչ-վոր աներևույթ ձեռք թափառում ե հիմա բոլոր խրճիթների վրա, բոլոր դարձանանոցների մոտով ու կրակ ե տալիս...

Կին թե տղամարդ, շնչակտուր վազում էյին մեկ այս, մեկ այն կողմ, ստուգում իրենց հալալ քրտինքով ձեռք բերած վաստակը, վորը չենթակա յե այդ նենգավոր փնասարարութեանը:

Կանայք լցվել էյին Մարտիրոսնաց տան դռների առաջ: Մարտիրոսի պառավ մայրն անիծում եր ու անիծում:

— Աստոծանից խնթրում եմ, վոր բրիչակ անի ընդուր տունը, ով իմ բալի աշխատանքը կրակ ա տալի, վնչ Մարտիրոս ջան, բալա ջան, քրտինքդ ապիտվը տվին, հալալ վաստակդ կրակ տվին, բալքի մրմռան անողնին: Ի՞նչ ասեմ, ի՞նչ ասեմ, ա խալիս, սիրտս վնչց դնջացնեմ, ես ի՞նչ կրակ ա, ես կրակ. ախր Մարտիրոսիս թեի դվաթով աշխատածն ա երում,— մղկտում եր նա ե չեր դադարում ծնկներին խփելուց:

Վտիտ, փոքրամարմին ու խորշոմներով ծածկված մայրը դողում եր ուռննու նման ու վշտից խորովվում:

Գոհարը նույնպես այստեղ եր, Աննիկը, Մարտիրոսի քույրը թեպետ չեր լալիս, բայց ե այնպես աչքերը կարմրել էյին: Գոհարը գրկել եր նրան, ե նրանք կուշ էյին չեկել սյան տակին: Ուրիշ կանայք ել էյին լալիս ու աշխատում էյին հանդատացնել պառավին: հո՞րարի աչքերն ել էյին արցունքակալել ե

նրա արցունքները նման էլին վազարդյան արշալուսին մարդագետիներում բյուրեղացած, արեղակի տակ փայլվող, շաղին: Նրա հասուն նուան բացվածքի նմանող շրթունքները ցավից ցնցվում էյին, ջերմում:

Մարտիրոսը չերբ տուն մտավ, բոլորը լուցին: Մի պահ հետո նրա պառավ մայրը հեկեկաց. հեկեկացին ե ուրիշները:

— Ա՛, մերն, ի՞նչ ա, ի՞նչ ա էլել իմ լաց ըլում, մի բան ելա կա վոչ: Վառում են վառեն, մենք մեռնիլ չենք, սաղ ըլեմ յես, յես էլի կաշխատեմ,— «Երտ եր տալիս նա:

— Վախիլ մեք, ձեռքներուս դարդակ չենք մնա, համա թշնամին, դուշմանը մենակ հու մեր դուշմանը չի, նա չքալորի դուշմանն ա, նա չիմուս դուշմանն ա: Ես ա ուր վոր ա՛, ջրի երեսն ա դուբս գալու: Մենք հաշիվուս որենքով կմաքրենք: Լաց չըլեք, ամոթ ա,— կխաժպիտ վերջացրից Մարտիրոսը:

Սակայն դայրույթը մատնում եր նրան, Մարտիրոսն անորոշ շարժումներ եր կատարում:

Այդ ժամանակ ներս մտան Վանոն, Սամանդը, Փաշոն ե էլի մի քանի հոգի:

Նրանց միջև մի քանի բույն լուռ խոսակցություն տեղի ունեցավ, հետո բոլորն ել դուբս գնացին:

Նրանց դեմքի արտահայտությունը վճռական եր:

Դեռ գրտում ծխում եր Մարտիրոսի աշխատանքը, դեռ կուվում էյին մաբդիկ կրակի դեմ:

Այլ դեպքի առթիվ չեղան այնպիսիները, վոր թաղուն հրճվեցին...

Գյուղը շարժվում եր, գյուղում կային չար ձեռքեր չար դործեր անելու համար:

Պայքարը վնասով խորանում եր:

Ամբողջ շրջանը բռնել եր մի խոշոր իրադարձութիւն, հարեան գլուղում սպանել եյին կոլեկտիվի նախագահին: Գողութիւնները դնալով ծավալվում եյին:

Կուլակների այս կողմակերպված դիմադրութիւնը չափազանց հասկանալի չեր:

Սակայն ցավալի չե, վոր շատ չարագործութիւններ կատարվում եյին կուլակային ազգեցութեան տակ ընկած չքավորների ձեռքով:

Տավարասպանութիւնը ծայր առավ գլուղում:

Գիշերն ազատ արձակվող անասունները հանդից տուն բերին, իսկ կեր չունեցող մարդիկ ստիպված եյին դուրսը, դաշտում անասուններին հետ գիշերելու:

Գյուղացիական մասսան փնտռում եր իր բարեկամին... ոգնութեան կարիքն եր զգում...

Գյուղում կար մի ուժ, վորը համախմբում եր սլաքարող վոգիներին կուլակային հարձակման դեմ:

Յեւ այդ կուսակցութիւնն եր ...

Կելեկտիվացման արհավիրքը սաբսափեցնում եր դոբաններին: Նրանք ամեն կերպ աշխատում եյին տապալել բոլոր ծրագրերը, բոլոր հաջողութիւններն այդ ասպարեզում:

Սարալանջի գլուղերում դրութիւնը չափազանց լարված եր: Մութ ուժերը գործում եյին կուլակների հետ:

Գյուղական մասսան արդեն ճանաչում եր իր թշնամուն: Կուսակցութիւնը գլուղում, հենված Մար-

տիրոսի, Սամանդի, Վանոյի, Փաշոյի նման ընկերներին ուսին, առաջ եր տանում այն նպատակները, վորը ժողովրդի՝ մասսայի, խորհրդային իշխանութեան և ապագայի նշանաբանն եր:

Վոչվոք հանգիստ չուներ այդ որերին...

Կոմյերիտմիութիւնը լավագույն շոկատներին կցել եր լուրջ աշխատանքի:

Քանի-քանի անգամ են նրանք առաջինը հետապնդել գլուղի շուրջը լերեացող դաշտայիններին: Քանի-քանի անգամ են ցույց տվել իրենց պատրաստակամութիւնն ու հերոսութիւնը: Մասսան արդեն չեր կարող չհարգել նրանց, նրանց այն ընկերներին, վորոնք հերոսաբար պայքարում եյին վճռական որերին: Մարտիրոսը դարձել եր շատերի համար այն՝ կատարին, վորի գոյութիւնը, անշուշտ, վոչ մի լավ բան չեր կարող խոստանա հակառակորդ դասակարգին: Շատերը հենց լերեսին ասել եյին՝ Մարտիրոսի ընկերներին:

— Այ տղա, դե դու լավ իմացիլ, բանհոգի կանեն կուլակները. վոր ճար ըլնի ձեռքներուն, քեզ հում-հում կուտեն:

— Ե՛հ, — ծիծաղում եր Մարտիրոսը, — անում են, անեն, տղամարդու տեղ ա. հալբաթ՝ վոր, ճակատս հո չեն պաչելու... Յես նրանց... թո՛ղ, մեղա-մեղա, ինչ կլի ասելու...

Յեւ այսպես ահա, ամբանում եր կուսակցութեան հեղինակութիւնն ու պայքարի ունակութիւնը գերազանցում եր: Գլուղի լավագույն ուժերը յեղնում եյին կուլակային այլանդակութիւնների դեմ գրոհի:

Մարտիրոսի հեղինակութիւնն որ-որի բարձրանում եր:

Մարտիրոսն ու Սամանդը վերադառնում էլին հարևան գյուղից, ուր կոլեկտիվի աշխատանքներն ուսումնասիրելու էլին գնացել: Սամանդը կանգ առավ... Գյուղից դուրս տանող ճանապարհի վրա յերկու հոգի էլին յերևում: Շալակներին ծանրութուն կար:

Անծանոթ ու կասկածելի մարդիկ էլին յերկուսի համար ել...

— Հըրե... հըրե, արն, արտերը մտան, ճամփենուն փոխում են, մենք հսկանալ պտենք, թե ինչու մնա բանը,— խոսեց Սամանդը:

— Աղաքնուն կտրենք հըլն...

Նրանք թեքեցին ճանապարհն ու արտերը մտան:

— Սպասեցեք, — ձայնեց Սամանդը:

Անծանոթները չլսելու դրին ու մի քանի քայլ էլ անելուց հետո ժպտալով կանգ առան:

— Ի՞նչ եք տանում, տղերք ջան,— հարցրեց Մարտիրոսը:

— Մի զազ ելա,— պատասխանեցին նրանք միանգամայն լրջացած:

— Դե, ետ ա տենուլ պտենք,— խոսեց Սամանդը:

— Նեղանաք վճռ,— հեղինեց Մարտիրոսը:

Նրանք անակնկալի յեկածի պես սպրդեցել էլին:

— Եղ խի, երեխի տեղ եք դրել մեզ, ալան-թալանի աշխարհ աս, շան տղերք, ետ ի՞նչ զազի հանաք ա,— միանգամից բռնկվեց մեկը:

Մարտիրոսն ուղղեց ատրճանակը, կոթը յերևաց խալաթի տակից: Նրանք յենթարկվեցին:

Սամանդը յերբ ջվալները բացեց, նրանք ճանաչեցին Շիտակ Փաշոյի, մյուսն էլ այրի Նազանի յերընջի մորթիները... Յերկու անասուններն էլ նույն գիշերն էլին խիվել դաշտում ու մաշկը հանվել վրաներից:

Մտրթը գյուղից եր գնված... հանցադործները ձերբակալվեցին: Այդ յերեկս գյուղից անհետացավ կարոն...

Կոլեկտիվացման կամպանիան մեկ բոսի անգամ էր տեմպը չեր կորցնում: Կուլակալին տտրերին իրենց արածն անում էլին ու փաստարարական աշխատանքներով զանդաղեցնում գործը:

Կոլեկտիվացման ամենախիտ հակառակորդները կոնայք էլին. հետամնաց գյուղի հետամնաց կոնայք:

— Եղ վճռեց կըլնի, բալքի յես սրտով բան եմ ուզում, գնալ պտեմ նախագահին խնդրիլ,— ասում էլին վոմանք:

— Բալքի յես իմ բանջարանոցում սրտիս ուզած բանջարն եմ ցանում, կոլեկտիվին ի՞նչ...

— Իմ աղջիկը, յես կոլեքտորի անդամի ուզում չեմ տալ, բաժինքն ո՞վ ա տալու, կոլեքտորը.— ասում էլին յերրորդները:

Յեվ նման բազում հարցեր, վորոնց մոտավոր ճշտությամբ պատասխանում էլին բանից տեղյակ գյուղաշխատակիցները:

Առհասարակ կոլեկտիվացման բնագավառում կանոնաց դերը չափազանց խոշոր եր: Անհրաժեշտ եր բացատրական աշխատանք տանել նրանց մեջ:

Կուլակային տարրերն իրենց հերթին համոզում էլին, հրահրում կանանց իրենց ամուսիններէ դեմ:

Աննիկն, Անթառամը, ուսուցիչը, Նազանը, Մարտիրոսը, Սամանդը դադար չունեցին:

— Ո՞վ ա տհնել ըսենց հաշիվ,—ստում էլին կուլակները:—Ախար կնիկ ազդն ի՞նչ ա, վոր նրանց մարդատեղ դնեն... Չե, հստեղ ուրիշ հեսար կա, ճամփիցը հանում են, խալխի կնանոցը գոմն են անում ու չեղնուցը տուն ընկնում...:

— Ա՛յ քրիւս, մարդը քեզ բրախի պտի, կուլեքտոր ա մանում, կուլեքտորում չիմու կնանիքն էլ չիմու համար ան, բա ձեր նամուսին ի՞նչ ա էլել, թողալ մեք, թողալ:—Գաղտնի թե ափաշկարա համոզում էլին կանանց, արգելելով միևնույն ժամանակ լիկկայան ու քաղխմբակ հաճախելու:

Որերը քանի գնում, հասունանում էլին, պաշքարը խորանում էր...

Մի որ էլ Մարտիրոսը, Սամանդն ու գյուղխորհրդի նախագահ Վանոն սպառնական նամակ ստացան, թե՛ «ձեր կյանքը թանգ ա ձեզ համար, շիտակ գործ բռնեցեք. գյուղի ունեոր աշխատավորներին նեղութիւն մեք տալ: Թե չե հմիկուց յեզը հայտնում ենք՝ ձեր պատանքաշորն ու դագաղը պատրաստեցեք»...

Գրողները փախածներն էլին...

Իսկ կյանքը նոր-նոր խնդիրներ եր առաջադրում: Սպառնական նամակները մեկը մյուսի լետեից ուղղվում էլին այս ու այն աշխատավորին: Սակայն աշխատել եր հարկավոր, միայն և միայն աշխատել:

\* \* \*

Մի առավոտ հարեան գյուղից ձիավոր լեջավ գյուղխորհրդի դռան առաջ:

— Քաղաքից բանվորներ են գալու, բրիգադներ, պատրաստ յեղեք մարդավայել ընդունելու,—տեղեկացրեց գյուղխորհրդի յերիտասարդ, աղվամազով ծածկված հաճիլի դեմք ունեցող նախագահին ու շտապեց: Փոստի ցրիչն էր:

Նախագահ Վանոն մի շարք գրութուներն ևս ստացավ:

Այդ որը սարալանջի գյուղում լեռուզես տիրեց, ամենքն էլ գլտեցին, վոր ժամանակն է գիտակից վըճիւ կայացնել:

Կուլակներն ավելի ախտիվացան, նրանք պարզապես հաչնոյում էլին...

Կուլակներն արդեն կամաց-կամաց քաշվեցին բացարձակ հայտարարութուներն անելուց և անցան դադարնի միջոցներէ:

Հողի հարցը ցավալի հարցերից մեկն էր: Ի՞նչ է լինելու կուլեկտիվ կազմելուց հետո, ո՞վ ինչի տեր է դառնալու: Ի՞նչպես կամ վոթտեղից սկսել: Կազմակերպչական խնդիրներից այդ մասը ամենացայտուն կերպով եր ծառանում կուսակցութեան, տեղական աշխատողների առաջ:

Այստեղ լինում էլին և խոշորագուցն սխալներ:

— Արն, տենուս իմ ֆողը չես պսեմ ցանի՛, թե ուրիշը. չես իմ ֆողի լեզուն են ա հսկացել եմ, ուրիշի ձեռքը վոր ընկնի, են ա ըռու ու փուչ ա անելու,—ստում եր մեկը:

— Ե՛, չես էլ բան չեմ հսկանում, ետ վոր ֆողերը խառնեն, էլ յեղ բաժնելու վոխտը կուիլ պտի ըլնի,—տրտնջում եր ուրիշը:

— Ընչի՛ պտի բաժանենք, թե միացնում ենք,

են ա միացնում ենք հավիտյան,—բացատրում եր ու-  
րիշը:

— Ձե, չե, եդ չելա՛վ, բա ասում են, թե կամո-  
վին ան, կուզեմ ետոր կզրվեմ, եզուց դուրս կգամ:

— Հան, ըտհե յան,—բոտում եր մեկը:

— Ձե,—բացականչում եր չերկրորդը:

— Մենք կոմունա չենք, թե կոլեքտոր,—հարց-  
նում եր ուրիշը:

— Երկուսն ել մին ա,—բացատրում եր ավելի  
հեռուն գնացած մեկը:

— Ձե, մին չի:

— Մին ան...

— Մին չի...

— Զոտով պտեն կոլեքտոր անի,—հիշեցնում եր  
մի մութ անձնավորութուն:

— Ձե, դոտով չի...

— Զոտով ան...

— Զոտով չի, կամովին ա...

— Զոտաքին կուսակցականների ու կոմսոմու-  
ներու հմար ա,—փիլիսոփայում եր մեկը:

— Ձե, չիմուս հմար ել դոտով ան,—դուշակում  
եր ուրիշը:

Ահա խնդիրներ, վորոնք ավելի քան լուրջ բա-  
ցատրութուն ելին պահանջում:

Կոլեկտիվ և անհատական անտեսության մեջ  
չեղած լավ ու վատի տարբերության մասին մի ա-  
հագին վեճ կար:

Կուլակները հրահրում ելին, թե՛

— Աշխարհի խերն ու բարաքլաթը, հալալ աշխա-  
տանքն ու ապրուստը մարդու հմար իր սեփական

ոջախում, իր մի կտոր հացն ուտելն ա: Վոչվոք չի  
ըլնի, վոր թիքաները համբարի:

— Կոլեկտիվումը ապրելն ավելի լավ ա,—պըն-  
դում եր ուրիշը. սակայն ճիշտ կերպով չեր կարողա-  
նում պատկերացնել, թե ինչու յեր լավ:

— Կոլեկտիվում միասին կբանենք, միասին կու-  
տենք, միասին կխնդանք, միասին լաց կըլնենք:

Ահա այն բացատրության կմախքը, վոր կարող  
եր տալ ազնվորեն և դասակարգային կամք հալտնա-  
բերող լավագույն գյուղացին:

Ահա թե ինչ աշխատանքներ կային այդ սարա-  
լանջի գյուղում, և գյուղերում առհասարակ:

Հակահեղափոխական ուժերը խառնում ելին  
խնդիրները, շփոթում, կասկածի մեջ գցում շատ-շա-  
տերին:

Գոյանց Աքելը, վարդնանց Գերասիմը և ու-  
րիշները պարապ չելին մտում:

Իսկ արեն ամեն որ իր շրջանն եր գծում չերկ-  
նակամարով: Ջրերը քչքչալով հոսում կլին առունե-  
րով: Թռչունները ճկճկում կոկոնած ծառերի ճյուղե-  
րին:

Որը միջնում եր, լուսանում հանգիստ ու սովո-  
րական պտույտով:

Կրկին նստած թխսկանի յեր նման սարալան-  
ջի գյուղը. կրկին ծխում ելին յերդիկներն ու գորշ  
եր, նահապետական եր, ծանոթ եր այդ գյուղը:

Կեռման ելին նրա փողոցները, թեք խրճիթներ  
ուներ գյուղը:

Սակայն այդ ամենի միջից բարձրանում եր ան-  
խուսափելին... Դասակարգային պայքարում չեխոյ  
խորհրդային նոր գյուղը:

Սամանդը կոտպերատիվը կամաց-կամաց կարգա-  
վորում եր: Աննիկն էլ եր կապվել գործին, ոգնում եր  
նրան:

Առաջին հերթին նրանց աշխատանքն այն յե-  
ղավ, վոր բոլոր ձայնագուրկներին, վորոնք այս կամ  
այն ճանապարհով ներս եյին խցկվել և անդամ դար-  
ձել, դուրս արին:

Շաքարի մանրավաճառի խանութը վերջնակա-  
նապես փակվեց:

Բաղոյին դատապարտեցին՝ վեցամսյա բանտար-  
կության՝ մի քանի կեղծ ստացականների միջոցով Շա-  
քարին և կուլակներին շաքար, նալթ ու ոճառ վաճա-  
ռելու համար:

Իսկական փայտերեբերին, չքավորներին մերժելու  
և լավ կտորներն իրեն տուն քշելու համար:

Դրամական հաշիվները ճիշտ եյին, իհարկե, սա-  
կայն հարցը նրանումն եր, վոր նա անընդհատ աջակ-  
ցել եր անհարազատ տարրերին:

Շաքարից մի լուրջ գումար պահանջվեց, վորպես  
առևտրական տուրք:

Փայտվճարները կանոնավորելուց հետո կոտպե-  
րատիվն արդեն իր բարձրության վրա կարելի յեր  
համարել:

Դրամական հաշիվներն Աննիկն եր պահում: Վար-  
չական բոլոր գործերն ընկնում եյին Սամանդի վրա:

Մթերումների գծով բավական աշխատանք կար  
և կոտպերատիվի առաջ կատարելու:

Վողջ որը կռիվ, պահանջ, բացականչութուններ,

թե՛ խաբում եք, փողը վերցրեք, ամեն բան չեք տալիս, քիչ  
եք տալիս և այլն: Սամանդը համբերությամբ բացատրում  
եր մթերումների գծով տարվող քաղաքականութունը,  
թե ամեն ինչ կլինի, թե ինչի կարիք ունի իշխանու-  
թյունը, թե ինչն է ճոթեղները պահաս.— վորովհետև  
մասսաների կուլտուրական պահանջը մեծացել ե: Թե  
հիմա ավելի շատ և արտադրվում, քան առաջ:

Միթե պարզ չե, թե ինչ կերպ պետք ե աշխատե-  
ր այդ որերին, մանավանդ այդ որերին, ամեն մի խոր-  
հրդային գործիչ գյուղերում:

Սամանդը դադար չուներ: Նբա շուրջը ևս կու-  
տակվել եյին հակառակորդների, ներքին մութ ան-  
հատների թշնամութունը:

Սամանդը միշտ կենսուբախ եր, միշտ հպարտ ու  
յերբեք չեր վախենում իրենից:

Գործը պահանջում եր, կուսակցութունն եր պա-  
հանջում, և նա պետք ե պայքարեր:

Աննիկն իր հերթին չեա չեր մնում Սամանդից-  
նա աշխատում եր նմանվել նրան... նրան, այդ ժրպ-  
տացող Սամանդին. չե՞ վոր այնքան, այնքան նրանք  
մոտիկ եյին և այնքան լավ եյին հասկանում իրար:

— Աննիկ...

— Ի՞նչ, Սամանդ:

— Գրութունները կարգին են:

— Հա՛:

— Սամանդ...

— Հը՞, Աննիկ, բան տալի:

— Ասում եմ՝ բեղարեցիր վո՞չ:

— Ե՛հ, աղջի, խի՞ չես մթամ ծիծաղում, քե հեա

եմ ե՞... կրեղարեմ...

— Սնու.—կարմրում եր Աննիկը,—աչ, ծիծաղողը  
դու չես, մասխարա չես անում:

— Աննիկ, երեզվա հաշիվն ինչքան եր,—խոսքը  
փոխում եր Սամանդը:

— Եսդ՝սր, եսդ՝սր,—բացատրում եր նա:

— Ա՛յ, թամամ վոր լաջն ես...

— Դե՛ բոլ ելալ,—կարմրում եր Աննիկն ու ձևո-  
քըն ընկած վորհե իր շղթաում Սամանդի վրա:

Յերկուան ել ծիծաղում ելին: Գյուղում վաղուց  
արդեն խոսում ելին... Յեղ ինչե՛ր, ինչե՛ր չելին խո-  
սում նրանց մասին:

Սամանդի և Աննիկի մեջ յեղած ինտիմությու-  
նը անուկի կերպով ձևափոխվում եր շատերի բերա-  
նում և Աննիկի պատիվը արորում ելին, արորում...

Աննիկը լսում եր...

Սամանդը դիտեր այդ մասին:

— Աննիկ,—ասով նա մի անգամ:

— Սամանդ,—բացականչեց խորը աղբուհներով  
Աննիկն ու դուրսը քաշ արավ:

— Ականջ չդնես դեղումն եղած խոսքերին, յեա  
բեղ ասում եմ. ականջ չդնես, Աննիկ ջան...

... Չան... — մտածում եր Աննիկը.—... ջան...

Ի՛նչ լավ և հնչում ջանը, ի՛նչ հրաշալի յե կյան-  
քը: Պայքարը վճրքան հրապուրիչ է...

Այո, կյանքը սիրում եր այդ քաղցր արտահայ-  
տությունը՝ ջան...

16.

Քոլանց Աքելը, Քոլանց Մուքելը, կակազ Վարդ-  
նանց Գերասիմը, Ուրթնանց Հովհաննեսը և ելի

մի քանի «ընտրովի» մարդիկ միշտ գտնում ելին ի-  
բար, և միշտ նրանց նյութը կոլեկտիվն եր, վոր նրանց  
մարմինը դող եր գցում, աչքերի լուսը մթնացնում:  
Վայրի գազանների նման կրճտացնում ելին ատամ-  
ները:

— Չչչիմ ել խլիլ պտեն,—կիսալաց գտնդատովում  
եր Վարդնանց Գերասիմը.—հողերնուս, դուզալ հոճգեր-  
նուս խխլիլ պպտեն, անախրական ենք, իրանց հին  
վրեժնուն հասնիլ պտեն:

— Խի, մտիտ չի, են անգամ Քոլուտողանց Պե-  
տին հին ցավերը քամուն եր տալիս գեղամիջում,  
ասում եր, թե՛ քոթուկը շալակիլ ավիք, քոթուկի տա-  
կը մնացի, ուզեյիք թե սպանեք ինձ, թե ըսնե արիք  
ու ընձե,—թաղբեն գցելով չերկարացնելով խոսեց  
Ուրթնանց Հովհաննեսը:

Քոլանց Մաթևոսը, Աքելն ու Վարդնանց Գերա-  
սիմը գլխով նշան արին:

Հետո արդեն խորացան տյն խնդիրների մեջ, թե  
ինչպես վրեժխնդիր լինեն սրանից ու նրանից:

Գերասիմը ախուր եր, կապիտից չերկար մամա-  
նակ և լուր չուներ:

Յերբ ողան մտավ Դարբնանց Մուքելը, բոլորը  
լսեցին. զբույցի նյութը փոխվեց: Գերասիմը խեթ-  
խեթ նակեց Մուքելին:

Դարբնանց Մուքելը ծանր դուրս ավեց նրան.  
տանուտեր Հովհաննեսն ատաջարկեց նստել:

— Նստում չեմ,—սառնորեն խոսեց նա.—չեա Գե-  
րասիմի հեա մխելի գրից ունեմ:

— Յեա խխոսելու մամջալ չչունեմ,—կոպիտ կա-  
կազեց Մաթևոսը:

— Կունենաս, Գերասիմ, հլա մին անգաջ կալ տղամարդավարի:

— Ասկանջ չեմ դնում, սեպուղում չչեմ, ասրինս պպղտորիլ մի:

Մուքելը տաքացավ:

— Յես եմ արինդ պղտորում, հա... թե քու գյադեն, վոր դաչաղ ես գցել սարերը, եզուց տալ պտեն սատկացնիլ: Ելի հին զայդա եշդ ես քշում. են անցավ, վոր գլավինուլթին իր անում ու բեաբուռ գործեր սարքում. Գերասիմ, են ժամանակը չի, վոր ուրիշի նամուսին քու հավեսով նայես, կտան ըռեխդ կճղրտուբեն... բոլ ելավ. չես երեսիդ կարոտը չեմ ելել, վոր եկել եմ կուշտդ, եկել եմ ասեմ, ձեռը վեկալեք իմ Գուհարից... Իմացա՛ք:

— Իհիմացանք, Մուքել, հհհըլե գդու ըզհենց մմենծ-մննծ խխոսում ես, ձենդ տտաք տեղիցն ա գալիս, չչե՞, Մարտիրոսը քամադդ ա... ըզհե կկըլնի, պարզ ա. Գերասիմը ջղայնացած եր:

— Մթա թե բան ասիր, — լերկմիտ ու կեզմ տոնով խոսեց կուլակ Աքելը, — խի՞ չպտի տեղը տաք ըլի, վոր կողմ ջուրը չքշի, են կուռն ել պտիտ պտի գանք, վոր տուհնեբս քանդվի վոջ: Մուքելը դուս կանգնած, փորձված ա:

— Ետ քու հարստութիւնը վոր իմն եր ելել, երեսիս նայիլ չպտեչիր, Աքել, են արուռը ընչին դուն պարտական ես, թե իմն ըլնե՛ր՝ մողիկ, կանգնելը մեղք պտեչի հաշվի: Ելի լայ ա, վոր յես դեղվում չեմ քու շնչիցը: Ի՞նչ ես ըռխովդ ընկել, սեւ վրա յես ծիծաղում:

Աքելը ցիւրիկաբար ծիծաղում եր:

— Դու, թթե նամուսով մարդ ըլնես, Մարտիրոսին աղջիկ կտամ, ետ անաստված գչադին, — խոսեց Գերասիմը:

— Քու կապետը նրա ըղունպը չարժի, — ջղային բացականչեց Մուքելը:

— Աշխարհը շիդակ վոր քանդվել ա, Մուքել, դու քու բարեկամն ու թշնամին մոռացել ես, — ծանր խոսքի մտով տանտեր Հովհաննեսը:

— Յես իմ բարեկամին ճնանչել եմ, ձեր գործին կացեք, բա մտքներուդ են ա, վոր Գոհարիկին գող կապետին տամ, խի՞, ջրումն եմ գտել թե վհնց ա...

— Գգողը դու յես ու քու աղից փեսեն, — փրփրեց Գերասիմը:

— Յես հրե, թե մին նամուսու ծախել եմ, Գերասիմ, վոխտիցը շուտ ֆոգիդ կհանձնես սատանին:

— Հվատարիմ ես դարձել, ամեն բան ել կանես, — փնթփնթաց դունչը ծուռ Բեժանը:

— Հալբաթ, արժան եմ, — շեշտեց Մուքելը:

— Ըընչո՞վ ես անրժան, եհտ ա գդու մմեղնից ել լլավ ես ապրում, — կակազեց Գերասիմը. — դու խի յես միջակ, մեղնից ը՛ր՛նչո՞վ ես պպակաս:

— Ետ գիղեցողը գիղս, դու զրից կունենաս, են ասա:

Ողան բավական լացն մի սենյակ եր, պատերի տակ ձգվում եչին լացն ու լեբկաբ թախտերը, վորոնց վրա գորգեր եչին փռված ու նախշուն կարպետներ: Նրանք նստել եչին ծալապատիկ, ամեն մեկն իր հաշվին եր...

— Կուրկատվի կողմը պահողներից մինն ել հրետի դուն ես, ավելի լափն ա, վոր շիդակն ասենք: Ըհը,

կոլեկտիվը մթա քեզ ընչին ա պետքը, Մուքեր գուն առանց կոլեկտիվ ել ապրում չէս, հալք հալ չի,— շատ հանգիստ և բարեկամական տոնով նկատեց Հովհաննիսը:

Մուքելը նայեց նրան ու կարճ կապեց.

— Յես ըտենց եմ ուզում, իմ քեֆը չի, բաւքի իմ կայքը յես ջուրն եմ թափում, հումը ինչ...

— Հենց կհրատեսակ ել իմացած կաց, ջուրն ես թափում,— կմկմաց կուլակ Գերասիմը:

— Դուն քու տեղը նստի ու խառնվիլ մի, յես քեզ լսողը չեմ... հա՛ քամին փչի, հա դուն խոսաս մին ա:

— Դուն գուր ես իմ ցցավովը տնքում, Մուքեր ինչ ըլելու յա, կըլնի, համա դուն վվոն խխեր ունես, վվոն ել մմի գադ...

Քուլանց Աքելը հաշտարարի դեր ընդունեց:

— Ախպեր, ապենք, մի բան շատ խելոք ա, վոր Մուքելը կարում ա ես մեր ջեհենների խելքովը գնա, սաղ ո՛ր, յես իմ հոգին, Մուքեր, սաղ ո՛ր...

— Մուքելին կոլեքտորի նաչալնիկ պտեն շինի, ընդուր հմա լել չալիշ ա գալիս,— կծու կերպով հեզնեց Քուլանց Աքելի ախպեր Մակարը:

— Հա՛, հա՛, հա՛,— կեղծ ծիծաղով տոն ավեց Հովհաննիսը. ետենց ել գիզենաք, ա խալիս, Դարբնանց Մուքելն իրա բանը լավ ա դում:

— Ի՛րա՛ կկաչքը սկլոր Պեհանու հետ կկկիսել պարտի, կկիսել...

— Հա՛, հա՛, հա՛,— հրհոացին բոլորը:

Դարբնանց Մուքելի համար ողը ծանրանում էր ու արձձի նման սեղմում իրեն, քունքերը քամվում էին,

քամվում... Նրան թվում էր, վոր յեթե մի փոքր ել մնա, կարող է մի բան պատահել:

Յեկ Դարբնանց Մուքելը բոսաց իր կոկորդովը մեկ: Նրա աչքերը փայլատակեցին:

— Եէյհ... բոլ ելավ...

Նրա աժդահա հասակը սարսափեցրեց նրանց:

Լուսթյուն տիրեց:

Դարբնանց Մուքելը ծանր քայլերով թողնում էր Հովհաննիսի տունը...

— Ձրից չունեմ, աստված քեզ բախշի քու «աչքաբաց» Դուհարին, ուզում չենք,— կմկմաց Գերասիմը Մուքելի յետեից:

Դարբնանց Մուքելը նայեց բոլորի յերեսին: Նրանք ժպտում էին:

— Գուհարիս մասին շատ շնահաջ տվող կըլնի, համա նպատակս են ա, վոր մեզ դինջ թողաք, Ջիմսուն ել հալալա, համա, Գերասիմ, քու պես խող մարդու տուն մտնիլ չի, չի:

— Ջջջհանդամը...— կակազեց Մուքելի քամակից վարդնանց Գերասիմը:

— Թ՛հէ, — թքեց Մուքելը դրսում...

\* \* \*

Սավաբն իջել էր ու պարուրել գլուղը...

17.

Բանբրիգաղը գլուղ մտավ:

Տգերքը կարմիր դրոշով գնացին ընդառաջելու: Հարս, աղջիկ, յերեխա դուրս թափվեցին խրճիթներեց՝ դիտելու նորեկներին:

Աննիկն, Անթառամն ու Գոհարը, Նադանի հետ միասին, մի խումբ կանանց հետ կանգնել ելին խրճիթ-ընթերցարանի դռանը, սպասելով լեկվորներին:

Իրիզադի հետ չեկել ելին նաև շրջանի ներկա-յացուցիչները կուսակցական և պրոֆ գծով: Շրջանա-յին ազրոնոմն ել եր նրանց հետ:

Աղմուկ, ծիծաղ, բացականչություն խառնվեց իրար, տոնական բնույթ ստացավ գլուղը:

— Ուռուհ,— լսվում եր ամեն կողմից:

Մի վոզեորություն տիրեց ամենքին, հովվական շնուն գլում եր լեռնային յեղանակ, խսկ թմբուկը վո-րոտում մերթնդմբթ:

Պիոներներն առաջինը վողջունեցին հյուրերին: Ուսուցիչը և մնացած կոմյերիտականները պարապ չե-յին, իհարկե:

Նախագահը գյուղի անունից վողջունեց բան-վորներին:

— Կեցցե կոլեկտիվացող գյուղը,— բացականչեցին բրիգադայիները:

— Ուռուհ,— աղմուկեցին հարցուրավորները:

Արտաքինից՝ կուլակները լուռ ելին, կծկված, խսկ մարդկային աչքերից հեռու նրանք աշխատում ելին տապալել կոլեկտիվացումը:

Դասակարգային ընդհարումը դառնում եր ակըն-բախ:

Այդ լերեկոյան գյուղապրոցի շենքում ընդհանուր ժողով եր տեղի ունենալու:

Գյուղն ալեկոծվել եր:

\* \* \*

Քարտուղար մարտիրոսը վերջացնում եր...

— Մեր իշխանությունը իր ուշադրությունը դարձ-րել ա դբա մեզ, մտածում ա մեր զարգացողություն ու լավ ապրուստի համար: Մենք չվելի անհատական տըն-տեսությունից չանցնենք կոլեկտիվ տնտեսությունը, կարալ չպտենք վոչ մի ժամանակ մարդավայել կյան-քով ապրել: Մաշինեքը, տրաքտորներն կփոխեն մեր պայեհնական սովորությունները: Մեր քարոտ ու քոլոտ ֆողերից հարկավոր ա լավ ոգտվել, խելքով ոգտվել: Այ, չեթե միություն լինի, ուժ ունենանք, գյուղատըն-տեսի ասածովն անենք այն, ինչ մեզ հրգավոր ա, են ժամանակ մեր կյանքը բանի նման կըլնի: Կո-լեկտիվը միություն ա. ով միությունը սիրում ա, թող դա միասին աշխատենք, միասին ապրենք: Մենք 12 տնտեսություն՝ կուսակցականներս, առաջինն ենք մըտ-նում միություն մեջ, արձանագրեցեք խնդրեմ:

— Հետևեցեք մեր որինակին:

Մարտիրոսը ցուցակը հանձնեց նախագահող տա-րիքավոր բանվորին:

Ուռուհները, ծափահարությունը զրդացրին դահ-լիճը:

— Լավ, կտ վոնց ա ըլելու, ախպերն ախպոր հետ կարո՞ւմ չի չոլա գնա, մենք վոնց պտենք սիլով ապ-րի,— հարց տվողը կուլակ Գերասիմի ազգականն եր, մի-ջակ տնտեսություն տեր Սողոմոնը:

Մի գյուղացի վեր թռավ, թե՛

— Յես սրտով ուզում եմ, վոր կոլեկտորի մեջն ըլեմ, համա կնիկա ուզում չի, հո բաժանվիլ չպտեմ, ինչ պտեմ անի:— Պարզվեց, վոր խոսողը կուլակ Աքե-լի փեսան եր:

— Ասում են մի մեծ չորդանի տակին են քնելու, դորթ ա,— հարցրեց մի գյուղացի:

— Ասում են աշխատողին-չաշխատողին հացը մի  
չափով են տալիս, ետ վո՞նց կըլնի, չես բանող մարդ,  
կարամ առանց ուտիլ կենալ:

Հարցերն անհամար եյին, կծու, հեղնական, լուրջ,  
միամիտ:

Կանայք աղմկում էյին:

Չեկուցողը հյուրերից եր. նա պատասխանեց լու-  
րոր հարցերին:

— Մասնավոր տնտեսությունը, — ասավ նա, — սիր-  
ում է բաժանություն. մասնավոր տնտեսությունը,  
չեղբայր, քույր, հայր և վորդի չի հարցնում. վորով-  
հետե «իմն» ու «քոնը» կա: Իսկ կոլեկտիվում իմն ու  
քոնը չի լինելու, ուստի վո՞չ միայն չեղբայրը չեղբոր  
հետ, այլև բազմազգի մարդիկ ել միասին կարող են  
ապրել: Այն ել սիրով կապրեն: Վարովհետե աչքի տակ  
են առնում բանվորական աշխատանքը, ուժը... Գալով  
թե քո կինը չի թողնում, աշխատիր հասկացնել, վոր  
իրեն ոգուտը հասկանա իսկ հախառակ գեպրում կա-  
րող եք անել այն, ինչ հարժար կդանեք:

Թեպետ արգելված եր ծխել, բայց և այնպես այս  
ու այն անկյունում, նստած հատակի վրա, ծխում էյին  
ու թքում հատակին հոգնած գլուղացիները... Ժողովի  
կարգապահությունը շատերի համար դատարկ ձևակա-  
նություն եր:

Վիճում էյին, տարանում, հայհոյում:

Մարտիրոսի հետևից 17 տնտեսություն կոմիտեի-  
տականներից, վորոնց մեծ մասը բաժանվելով ծնող-  
ներից, իրենց փայլ մտցնում էյին կոլեկտիվի ֆոնդը:

Սակայն պատահեց և անսպասելին...

Դարբնանց Դոհարը բարձրաձայն հայտարարեց.

— Ընկերներ, ընդհանուր կանոնով, մենք, չես ու  
հայրիկս, կոլեկտիվ ենք մտնում մեր ունեցած-չունե-  
ցածով, մրցման եմ հրավիրում ուրիշ կնանոց:

Մի ընդհանուր աղմուկ, ուրախություն և ծափա-  
հարություն տիրեց դանլիճին:

Իսկ անկյունում թռնալի ծաղը բարձրացավ:

Անթառամն ել իր հերթին մտավ կոլեկտիվ, Ծա-  
ղիկը, Նունիկը՝ այրիներն ել յետ չմնացին, Բոլուտո-  
ղանց Պետին, Նաղանն ել նմանապես:

Կամաց-կամաց ցուցակազրվում էյին:

Յերեկոն թանձր ու սև ներկի նման խտացավ  
մթնոլորտում:

Շները վայրահաջ սկսեցին...

Աղբյուրից տուն էյին դառնում ու՛ վոստնում հոր-  
թերն ու մոզիները: Նեղլիկ ու ցեխոտ փողոցները մի  
քանի ըսպելով շունչ էյին առել:

... Արձանագրության մեջ մի կետ նշում եր հե-  
ռացնել այն կուլակներին, վորոնք դիտավորյալ կեր-  
պով քայքայում են ու ֆլաս տալիս կոլեկտիվին: Հա-  
կախորհրդալին յուրաքանչյուր քայլի համար կիրառել  
խիստ միջոցառում:

Դիշեր եր արդեն... Ամեն ինչ լուռ, սառնամանիք  
եր, մեղմ, խայթող սառնամանիք, արևելյան ցուրտ:

... Իսկ հասարակական ժողովը դես շարունակ-  
վում եր:

Խոսքը տրվեց քաղաքից չեկաճներից մի ընկերոջ:

— Ընկերներ, — բացականչեց նա, — կոլեկտ մտնող-  
ները չպետք է հարցնեն, թի ինչպես կլինի իր դրու-  
թյունը՝ լավ կամ վատ: Ինչ լինում է լինի, բայց մենք  
գիտենք, վոր լավ կլինի: Յես ձեզ ասում եմ, նա, ով

կոլխոզից փախչում ե, մենք նրանց կարող ենք մեր թշնամին համարել: Ի՞նչպես կարելի յե, յեղբայր, ժամանակ չկա յերկար-բարակ մտածելու, բոլորդ դեպի կոլխոզ: Այդ ե պահանջում մեր կառավարութունը:

Բոլորը մի բույե քար կտրվեցին:

Նախագահը դարձավ ժողովականներին.

— Ի՞նչ ունեք ասելու. խոսողներ կան, գրվողներ կան:

Մի ձայն ժողովրդի միջից շեշտեց.

— Ել ի՞նչ ասենք, ընգերն ամեն բան ասավ, զոռով ա ելի:

Նախագահը զանգահարեց...

— Վոչ մի զոռով, ընկերոջը կամ դուք. չհասկացաք, կամ նա լավ չարտահայտվեց: Յես կարծում եմ, վոր լավ կլինի 100 տոկոսով կոլեկտիվ մտնենք, իսկ զոռի մասին վոչ մի խոսք:

— Վոչ, տատանվելու ի՞նչ կարիք կա, պետք ե պյուղը համայնացնել: Վոչ մի տնտեսութուն դուրս չի մնալու, գրվեցեք ավելի լավ ե, քանի ուշ չե: Յեթե վոչ, վաղը ձեզ նկատի կունենանք...—խոսողը արեշչիկն եր:

Աղմուկ ու աղաղակ բարձրացավ:

— Ի՞նչը պտեք կոլեքտոր անի, ել, նախագա,— հարց ավեց մի կին:

— Առաջին հերթին հողը, հետո անասունները, գործիքները:

— Ի՞նչը պտեք թողա, ի՞նչը,— հարցրին ուրիշները:

Աղմուկը խանգարում եր լսելու. նախագահը զանգահարում եր:

Վանոն ձայն խնդրեց:

— Ընկերներ, մեր կուսակցութունը հիմա աշխատում ա, վոր մենք կոլեկտիվի կազմելով, շուտով հասնենք սոցիալիզմի: Իմ հետաբովը, պետք ա առանց արևալուծյան չիմնու ունեցածն ու չունեցածը մի տեղ թոփ անենք ու կոլեքտոր կազմենք...

— Յես մի եմ ունեմ,— դուստ պի պատավ, են ել պտեք թոփ անի:

— Այո,— շեշտեց քաղաքից յեկամ վերջին խոսողը,— իհարկե, չեթե կոլեկտիվ ե, ապա վոչ մի բան դուրս չպետք ե մնա:

Գյուղի կոմյերիտական ուսուցիչը ձայն խնդրեց:

— Ընկերներ, յես մի բան լավ չեմ ըմբռնում. ընդունում եմ, վոր բոլորը պետք ե վերցնել, ընդհանրացնել, բայց այս արդեն ի՞նչ ե ստացվում, արտել կոլեկտիվ տնտեսութուն, կոմունա, ալ թե բանն ինչուն ե... Չեմ հասկանում:

— Ընկեր ուսուցիչ, այդ միևնույն ե,— շեշտեց Վանոն:

— Վոչ, ինձ թվում ե... վոր... միևնույն չե,— տատանվեց ուսուցիչը:

Մարտիրոսը խոսք խնդրեց:

— Ընկերներ, յես գտնում եմ, վոր դուք բոլորդ ել սխալ եք.— նա կարմրեց.— Իմ հասկացողությամբ զոռեկ չի կարելի...

Դանլիճը ծափահարեց այս արտահայտության համար ու աղմուկ բարձրացավ, բոլորի լեզուն բաց չեղավ:

— Դուզ ա:

— Ուզում չենք, ուզողը թող գրվի:

— Ես ի՞նչ բան ա, զոռով ել բան կըլնի:

— Յես կոլեքտոր մտնողը չեմ,— ճշում եր մի կին:

Մարտիրոսը շարունակում էր.

— Ընկերներ, բա ես ի՞նչ եք ասում, դուք սխալվում եք. մեր կուսակցութունն ըտնե բան չի ասում: Ի՞նչ կարիք կա զոռաքի կոլխոզ ընդունել, դա մեզ ֆրասս ա, ասում եմ՝ թողեք ով կամենում ա, թող ինքը դրվի:

Նախագահը ևս տատանվում էր: Բայց և այնպես նա Մարտիրոսի կողմն էր:

— Այն, ով կամենում է, թող նա արձանագրվի, կամքով է:

Ժողովուրդը տատանվում էր:

Այն կարծիքը, թե ով շարձանագրվի, նրա դրու-  
թյունը հետագայում վատ է լինելու, շատ շատերին ստիպեց դրվել:

Ժողովուրդը կասկածում էր...

Այսպիսով ցուցակը մեծանում էր ու մեծանում:

Արդեն շատերը դադարեցին արտահայտվել վա-  
խենալով հետագայում նրանց մեղադրեն այդ բանի համար:

Զբաւորը կիրակոսը մի լղար ու աշխարհի խեր ու շառին չխառնվող մարդ էր. նա հլ էր ներկա ժո-  
ղովին:

Չայն խնդրեց:

— Ա՛յ խալխը, յես կոլեկտիվ ուղում չեմ, ձեզ մատաղ, մի իլլաջ արեք. ինձ կոլեքտոր անեն վոչ: Ու-  
զում չեմ, ձեզ մատաղ... թող արեք ապրեմ, քյասիր չբաւոր եմ, խի՛ յեք ինձ կոլեքտոր անում...:

Ժողովը մի տեսակ տարակուսած էր. Ուրեմն ի՞նչ է կոլեկտիվը, մի՞թե այնքան սարսափելի չէ, չվոր փըր-  
կություն են անդերսում:

— Ընկերներ, — նորից ուղում էր արտահայտվել քաղաքից յեկած մարդը, յերբ նրան խանդարեց Մար-  
տիրոսը:

— Ի՛նչ ելավ, թողալ մեք, շատ ա խոսում, հմա մի գաղ ելա ասում չի:

Յեկ ահա բարձրացավ Մարտիրոսը:

— Ստիպմունքը վիչացնում ա գործը, դուք վա-  
խեցնում եք զեղացոց, դուք փախցնում եք նրանց կոլխոզներից:

Նորից ժողովը քար կտրվեց:

Մարտիրոսը տաքացել էր:

— Ընկեր ջան. — դիմեց նա քաղաքից յեկածին, — դու լավ պտես հասկանա, վոր քաղաքից բերած հմպար-  
տութինն ետեղ անցնում չի, խելոք զբցնի չես ասում, տութինն ետեղ անցնում չի, չես բացատրում: Յես կար-  
ժողովուրդը հականում չի, չես բացատրող լինի, թե վորն ծում եմ՝ մեր զեղացուն յեթե բացատրող լինի, թե վորն է նրա ֆրասսն ու ոգուտը, նա կոլեկտիվ կմտնի:

— Դուդ ա ասում Մարտիրոսը, — աղմկեց դահլի-  
ձը, շատերը տեղներից յեկած ուղում ելին հարձակվել:

Մարտիրոսը խաղաղեցրեց նրանց:

Նախագահը զանգահարում էր:

Վանոն, արեշիկը, քաղաքից յեկած ընկերը իրենց անհարմար զգացին. նրանք սպառնացին Մարտիրոսին՝ մեղադրելով թեքման մեջ: Մարտիրոսը տաքացել էր:

— Ա՛յ ընկերներ, դինջացեք, նստեցեք տեղնե-  
բըդ ու ականջ դրեք նախագահին: Ահա չիմս ել մի զեղացի յենք, չիմս ել չբաւոր ու միջակ: Պետք ա իրար քոմազ անենք ու կոլեկտիվ կազմենք, ալ, թող գրվորը գրվի, չգրվորը ինքը գեղա:

— Այ ողորմի հորդ, — բացականչեց մի ծերունի:

Ժողովը շարունակվում էր դեռ:

Մակայն շատ-շատերը դեռ կասկածում էին: Ցուցակը լցվում էր ու լցվում:

Բոլորն էլ կողեկտիվ էին մտնում:

Մարտիրոսը չափից անց տաքացել էր: Նրա հոգում ապրում էր մի չզգացված քառո:

... Ի՞նչ են ասում այս մարդիկ, խաղում են մարդկանց կյանքի հետ, Մարտիրոսը սարսափում էր...

«Վճ, վճ, կուսակցությունը չի սխալվում, վճ» վճ, ճանապարհ դեռ կա»: Սմեն ինչ դեռ չէր կորած, ամեն ինչ դեռ հնարավոր էր կատարել: Սխալները պետք է ուղղվեյին:

Այդ պահանջում են Մարտիրոսները:

«Ն՛յ, ո՛վ է շփոթում ներսում, զգուշ, զգուշ», — մտածում է նա:

Հաղթանակը մերն է...

Մարտիրոսները չեն քնում, չեն քնի...

Ժողովը շարունակվում էր:

Մարտիրոսը տխուր էր, Մարտիրոսը չէր հասկանում ինքն է մեղավորը, թե ասն ընկերները, վարձաբավելի պատրաստված են ու գործին տեղյակ: Գճեցն ինքն է սխալվում...

18.

Շիտակ Փաշոյի աղջիկը գարնանային արձակուրդին գլուզ էր յեկել: Գոհարն ու Սննիկը շատ սիրով հանդիպեցին նրան:

Անթառամը շատ ու շատ խնդիրների մասին խոսեց: Պատմեց, թե ինչպես են աշխատում քաղաքում կոմյերիտականները: Նկատեց, վոր գլուզում շատ ու

շատ բան կա, վորի մասին հարկավոր է մտածել, շատ կել, ուղղել: Նկատեց, վոր պետք է բերեալներ կազմակերպել՝ գարնանացանի ժամանակ չքավորներին ոգնելու:

Յեռանդուն աղջիկ էր Անթառամը: Նրա թուխ դեմքն ու սև աչքերը խիզախ արտահայտություն էին տալիս նրան:

Շիտակ Փաշոն իր բերանից կտրել էր ու տվել Անթառամին դպրոց, վոր գրագետ դառնա: Անթառամը նրա «համ տղան էր, համ աղջիկը»:

Անթառամի մայրը հիվանդ էր և տարիներ շարունակ տանջվում էր անկողին ընկած:

Շիտակ Փաշոյի չեղբոր աղջիկը շատ էր ոգնում անտեսությանը:

Թագուշը վորը էր, ծնողները վաղուց էին մահացել: Շիտակ Փաշոն էր պահում Թագուշին:

Արդեն տարիքի հասած աղջիկ էր Թագուշը, նրան ուղողներ կային: Անշուշտ Շիտակ Փաշոն կկամենար «բախտավորացնել իր յեղբոր աղջկան, իսկ տունը, տունը նորից կփար»:

Այսպես ասա, Անթառամն էլ վերջացնում էր կար ու ձեի դպրոցը: Համարյա միջնակարգի կրթությամբ պիտի գլուզ դառնար: Դժվարությունները անցել էին, հարկավոր էր քիչ դիմանալ:

— Իմ անթառամի խելքը ոխտը մեղիքի խելքի զգար ա,— պարծենում էր հայրը:

Քառասուն տարեկան էր Փաշոն, տակավին չէր տասարդ: Մեկ տարի չէր ընդամենը՝ կուսակցության մեջ էր անցել: Կուսակցությունը վայրի Փաշոյին այնպես էր լրջացրել...

Փաշոն լավ եր ըմբռնում իր դերը:

Գյուղացիները շատ ելին սիրում Փաշոյին, սա-  
կայն մեղադրում էլին, վոր աղջկան քաղաք եր ուղար-  
կում «զարիք» տեղ սովորելու:

Չար լեզուները վիրավորական ածականներ էլին  
կպցնում Անթառամին:

Հայրը լսում եր. գիտեր և Անթառամը: Սակայն  
ուշադրութունն չէլին դարձնում:

Տաք բնավորութունն ուներ Շիտակ Փաշոն. «Շի-  
դակ» էլին ասում նրան, վորովհետև ամեն ինչի մեջ  
ճշմարտութունն, շիտակութունն եր փնտռում: Յերբեմն  
տաքանում եր նա ու պարզապես վիրավորում դիմաց-  
նին, ով արատ եր գտնում Անթառամին քաղաք ու-  
ղարկելու մեջ:

Քաղաքում Անթառամը հանրակացարանումն եր  
քնում ու թոշակ ստանում:

Այս բանը շատ ունևորներին, անգամահարևան գյու-  
ղերում, դուր չեր գալիս:

«Հե՛յ գիշի դունյա՛. Փաշոյի աղջիկը քաղաքումը  
գիր ա սովորում» — բարբաջում էլին նախանձողները:

Անթառամը մի քանի տարի շարունակ կանոնա-  
վոր թղթակցում եր թերթերին: Գրում եր իրենց գյուղի  
և շրջանի ցավերից: Գրում եր լավ ու վատ կողմերի  
մասին, կենցաղային հին սովորութունները խարազա-  
նելով: Անթառամը շատ լավ դիրք ուներ կուս և կոմ-  
չերիտ և առհասարակ շրջանի կուլտուրական անհատ-  
ներին, տպա չքավոր-միջակ մասսայի աչքում: Իսկ կու-  
լակային տարրերը վոչ միայն այլ գյուղի, այլ և շրջա-  
կա գյուղերում իմացել էլին, վոր թղթակից «ղաղիս»  
Փաշոյի աղջիկը իրենց տունը քանդողն ա:

Նա այնպիսի դործարքներ, այնպիսի փաստեր եր  
արձանագրում, վոր շատ անգամ շփոթեցնում եր ան-  
հատներին, վորոնք իրենց գործը համարել էլին մի-  
անգամայն ծածուկ կատարվող: Վոչ մի բան չեր վրի-  
պում նրա աչքից:

Ուստի և Անթառամի մասին գիտելին շատերը:  
Նրանից կուլակային տարրերն ուղղակի քաշվում էլին  
ինչպես իրենց իսկական թշնամուց:

Վերջին մի շարք թղթակցութուններով նա հա-  
մապատասխան մարմինների ուշադրութունն եր գրա-  
վել տավաբասպանության և մի շարք ավաղակային  
արարքների վրա:

Եեշտել եր մի շարք կասկածավոր անհատներին,  
վորոնց լծվում Վարդնանց Գերասիմին, իրեն տղա  
կապետին, Շաքարին, Շաշ Սումբաթին: Պահանջել եր  
վճռական միջոցներ ձեռք առնել նմանների դեմ:

Թղթակցության տակ նա կեղծ անուն եր դրել:

Բայց և այնպես բոլորին պարզ եր, վոր գրողն  
Անթառամն է:

\*\*\*

Մութ ուժերը շարժվում էլին:

Գյուղում կոլեկտիվացման կամայանխան տարվում  
եր փութկոտությամբ: Սակայն դործնականում ամբու-  
թյուն չկար: Գյուղը 90-ից 100 տոկոսով կոլեկտիվաց-  
ման եր յենթարկված: Բայց փաստը այն եր, վոր գյու-  
ղացիները տատանվում էլին, չէլին ուզում ձեռք քա-  
շել իրենց մի հատիկ կովից, հավից, տնից, վորը պա-  
հանջվում եր ցուցակ անցկացնել:

Մարտիրոսի դրութունը չավազանց ծանր եր...

Խնդիրներն այնպես ելին խառնված, վոր ծայրը դտնել չեր աջողվում:

Այդ դժվարին պարագային եր, յերբ գլուղ յեկավ 25-հազարայիններից մի բանվոր աշխատելու... Մարտիրոսը փարվեց նրա վզով: Մարտիրոսն զգաց, վոր ել մենակ չե...

— Ընգեր ջան, այ հիմա պարզ ա, այ հիմա հասկանալի լա,— հրճվում եր նա, լսելով նորեկի բացատրութունները կոլեկտիվացման մասին:

Յեկվորն, ըստ չերևութին, առաջվաններին չեր նմանվում:

— Մի մտածեք, ընկերներ, հաստատ համոզված չեղեք, վոր միասին զգալի աշխատանք կկատարենք: Յես ֆնալու չեմ գլուղում աշխատելու: Մենք իրար կոգնենք, ամեն ինչ կտնոնավոր կլինի:

Նա միջանասակ տարիքի մի տղամարդ էր: Դեպոյի բանվորներից...

19.

Գարնանային վարի որերն անցնում ելին, մարդիկ դեռ պարապ էին: Ցուցակագրված կոլեկտիվը ֆնում եր թղթի վրա:

Քաղաքից գլուղ յեկած վանոն կամաց-կամաց կազմակերպում եր աշխատանքները:

Հենց առաջիկա ժողովում, վորը կազմակերպվեց բացօթյա, գլուղխորհրդի առաջ, բաց հրապարակում, որակարգում կոլեկտիվացման հարցն եր ձեռվում նորից:

Գործն սկզբից ելին սկսելու: Իրականում վոչ մի կոլեկտիվ չկար, իսկ թղթի վրա բոլորն ել կաշին:

— Սիրելի ընկերներ, այ, բանը նրանուֆն ա, վոր բանվորներս չենք կարող չմտածենք մեր գեղացի ընդերների մասին, այ գրա համար ել կուսակցութունը

մեզ կարգադրեց ոգնության հասնենք ձեզ.— ասում եր վանոն.— Հիմա Բնչպես պիտի ոգնենք, այ գործը ցույց կտա: Յես մի բան ավել կիմանամ, կաշխատեմ կատարել, դուք մի բան ավել կիմանաք, ինձ կասեք. կուղղենք ու կկովենք կուլակի կատարած գործերի դեմ ու մի լավ դաս կտանք նրանց, մեկ ել այ նրանց, ովքեր կոլեկտիվի գործերը սխալ են բացադրել, շան վորթիները...

Գլուղը ամբողջ հավաքվել եր ու լցրել հրապարակը:

Խնդիրը չափազանց լուրջ եր, բոլորն ել շահագրգռված էին ճշմարտությունը լսելու:

Բազմաթիվ հարցեր էին տրվում նրան: Յեվ նա պատասխանում եր:

Այդ ժամանակ կրկին խնդում եր արեք, թեթեքամին նորաբաց ծաղիկները կոկոններից բուրմուռնք եր բերում ու շոյում բոլորի հարցականի դարձած դեմքերը:

Մարտիրոսը, Սամանդը, Շիտակ Փաշոն, Բուլուտողանց Պետին նստել էին սեղանի շուրջը:

Նրանց դեմքը լուրջ եր, նրանք ինքնավստահ էին:

Վանոն՝ գլուղխորհրդի նախագահը, գլուխը կախ եր գցել...

Իսկ քաղաքի վանոն խոսում եր:

— Այ, ասենք թե դուք ուզում եք իմանաք ինչ բան ա ընկերությունը, արտելը, կոլեկտիվը, կոմունան, յես ձեզ կհասկացնեմ:

— Հասկացրու, մատաղ, հասկացրու,— բացականչեց ուրախ մի գլուղացի:

— Ըամանակ տվեք, յես ձեզ հասկացնեմ. ընկերությունը, կոլխոզը, կոմունան միություններ են, վորտեղ գյուղացիները միացած իրենց տնտեսություններն են ղեկավարում: Ընկերություն կարելի չե կազմել ալուպես. ասենք միքանի գյուղացի միանում են, իրենց հողերը միասին են մշակում—սա ընկերական արտել ե: Կամ ասենք կովերն են միացնում, սա չե կաթնարտել ե: Ընկերությունը հասարակ ձևով ե լինում ու կամովին ե: Կամքով միանում եք, կամքով բաժանվում: Ընկերության ժամանակ քոմագ ենք անում իրար հողը ժամանակին վարելու-ցանելու ե ալլն:

— Այ մաշալլա, — միքանի ձայն միանգամից զղբը-զայրին հավաքուցթը:

Նախագահող Մարտիրոսը նկատեց.

— Ընկերներ, մի խանդարեք, վոր ամեն ինչ լավ հասկանաք:

— Հո, — շարունակում եր վանոն. — Էս հո եսպես, ընկերությունը հո հասկացաք, հիմա արտել կամ կոլեկտիվ. սա յե կ ե միութին. արտելում, ինչպես ասի, կամ հողը, կամ անասունն են միացնում, վոր նոր տեխնիկայով ոգավեն: Կոլեկտիվն արդեն քիչ զանազանվում ե... Այստեղ պետք ե հողը կոլեկտիվի մեջ մտցընես՝ ես մեկ, գործիքները, գութան, արոթ, տափան ե ալլն: Հետո աշխատավոր անասունը: Իհարկե, կամովին ել դուրս կգաս, քեզ ստիպելու վոչվոք իրավունք չունի:

— Հարց, — ձայնեց մեկը:

— Հարց, — ձայնեց ուրիշը:

— Հարց, — ձայնեց յերրորդը:

— Հարց, — ձայնեց չորրորդը:

Նախագահը բոլորին թույլ տվեց հարց տալու, ե վանոն պատասխանեց.

— Նա, ով փոքրիկ ածուներ ունի, կամ միքանի ծառ, կամ մի կով, միքանի հավ, կամ մի յերկու այծ, նա կարող ե չմտցնել կոլեկտիվի մեջ, ե վոչվոք ստիպելու իրավունք չունի: Յերկրորդ՝ այն հարցը, թե կոլեկտիվից դուրս գալու իրավունք ունես թե չե: Ասում եմ, այլ, կամքով գործ ե, կարող ես դուրս գալ ե քո բոլոր ապրանքն ել ստանալ հետ:

Ուրախության, համաձայնությունների բացակասություններ, ծափահարությունները վարակեցին բոլորին: Յերկար ժամանակ ժողովը չեր լուում:

— Հետո, կոլեկտիվ ասածը, գյուղատնտեսական արտելը նրանով են լավ, հնարավորություն ունեն բոլոր հողերը, անասունները կանոնավոր աշխատեցնել, շատ ոգտվել ե տնտեսությունը աճեցնել:

Իսկ կոմունաներն ավելի բարդ են: Այնտեղ արդեն բոլորովին այլ պայմաններ են: Մեր գյուղի համար կոլեկտիվն ե լավը՝ գյուղատնտեսական արտելը:

Հա, ով կարող ե լինել անդամ: Այ ասում եմ, բոլոր նրանք, վորոնք ձայնագուրկ չեն, հարազատ են սոցիալապես, առաջին հերթին չքավորները-բասարակները, միջակները, ահա բոլորը: Կուլակներին արտելներ, կոլեկտիվներ չի կարելի ընդունել, վորովհետե կոլեկտիվները նրանց դեմ են կովում, ել ի՞նչպես կարող են նրանք լավ ուզել մեզ: Պարզ ե...

— Պարզ ե, պարզ ե, — բացակասում ելին բոլորը:

— Նրանք, վորոնք ձեզ հակառակ են բացատրել նրանք կուլակների ջրադացին ջուր են լցրել, ոգնել են նրանց, չեն թողել, վոր կոլեկտիվի գործն առաջ գնա:

ելի չեղան մի շարք հարցեր այն առթիվ, թե կոլեկտիվ մտնողները իրենց տնտեսութունը քայքայում են, հետո մտնում:

— Ընկերներ, — բացատրեց Վանոն, — այ, մեր կոլեկտիվներն ու խորհրդային իշխանությունը կըսվում են այդպիսի վնասատուները գեմ: Մենք այդպիսիներին կարող ենք չընդունել յեթե գիտակցաբար են իրենց տնտեսությունը քայքայել: Թեկուզ չքավոր ել լինեն, չենք ընդունի:

Քոլուտողանց Պետին ձայն խնդրեց:

— Հրեախ հընգերներ, հիմի ինչդար պարզ ա, մեր իշխանություն լախտակը, պետք ա հընգեր Վանոչի աածնին մտնելուց հանեք վոչ:

Մարտիրոսը ձայն խնդրեց վերջում:

— Մենք տուժել ենք նրա համար, վոր մեզ մոտ քյալլագյողները իրենց արածն են արել ու վնասել մեր գործին: Ընկերներ, ըստուց չեղը ամեն մինդ լավ մըտածեցեք, ում վոր դիւ կգա կոլեկտիվ աշխատանքը, թող միանա մեզ: Հարկավոր չի գոտով հավաքած 160 տունը, թող քիչ ըլնենք ու կոլեկտիվը զալիմ ըլնի, սրտով գործ անենք:

Մարտիրոսը չեբը վերջացրեց, գյուղացիք խառնըվեցին ու խմբերի բաժանված սկսեցին զրուցել այն մասին, թե ինչպես են բաղատել իրենց: Ամեն մեկը հիմա համոզված էր, վոր Վանոն իսկութունն էր աւտում:

Կուլակային տարրերը քնած չեցին...

Նոր ցուցակ էր կազմվում... Այստեղ արդեն զըրվում էին նրանք, վորոնց համար ավելի քան պարզ էր, ավելի քան հարազատ նոր գործը... Շա-

տերին կարողացան համոզել կուլակները, թե՛ «քանի վոր կամովին ա, գլխներիդ ճարը տեսեք»... Գարնանց Մուքեյլը այդ ցուցակում չէր... Նա մնաց կոլխողում: Շատերն էլին այդ ցուցակում, այրի Նազանն ու Նուսիկը նույնպես մնացին:

Կոլխողը հալվեց...

Սակաջն բարձր էր այդ որ բոլորի տրամադրությունը: Մամանդն ու Աննիկն էլ էին ուրախ:

Գոհաբը Մարտիրոսին նայեց ու ամոթից գլուխը կախեց. նա ևս ուրախ էր, վորովհետև Մարտիրոսին այդ որվա պես չերջանիկ չէր տեսել: Փաշոն բեղերն ոլորիսով թողեց ժողովը... նա ևս ուրախ էր:

Ուրախ էր գյուղը...

Կար, սակաջն, կապուլտ մի բան, վորը ծանրորեն դեռ մնում էր ներսում: Գյուղի ներսում...

Նորն էր աճում, նոր և ամուր կոլխողը...

\* \* \*

Կոլեկտիվի հիմքն արդեն զրված էր: Վարչությունն ընտրված: Հողերի դասավորումն ու գարնանացանի ծրագիրն էլին մշակում:

Բոլորի ցանկությունները այդ լեռնային գյուղում հիմնադրված կոլեկտիվը «Ազատություն» անվանեցին: Հիսուն չեբիկու տնտեսություն միացան, և գործն սկսվեց:

Չքավորները, բատրակները մեծամասնություն էին կազմում: Միջակներից տասը-տասնհինգ տնտեսություն է մտել:

Կոլխողի ֆոնդը շատ աղքատիկ էր: Գործիքներն էլ փչացած մեծ մասամբ կամ կտրված:

Դարբնանց Մուքելի դաբընոցը գործի ընկալ-  
վործ շատ կար անելու:

Քաղաքի Վանոն իր ժամանակին հողաչափ եր հրա-  
վերել գլուղ: Սպասում ելին շրջանային ապրոնոմի  
հետ կոլեկտիվի հողերը կանոնավորելու ու ցանքային  
աշխատանքների պլանի շուրջը խորհրդակցելու:

Մեծ խանդավառութեամբ, յերգով-պարով կլին,  
աղջիկ տղամարդ, անել ու ջանել յելան իրենց հողերը  
ու միացվող հողերի սահմանները վոչնչացրին:

Ուրախութեան, հաղթանակի որեր...

Վանոն, Մարտիրոսը դեկավարում ելին մասային,  
վորը կամենում եր ապրել նոր վոգով, կառուցել իր  
տնտեսութունը կոլեկտիվ ճանապարհով:

Գյուղացիները սեղմուս ելին իրար ձեռք և ա-  
ռաջին անգամ անկեղծ արտասանում. «Ախպեր դար-  
ձանք, հալալ ախպերից լավ»...

20.

Շիտակ Փաշոյի աղջիկ կոմյերիտուհի Անթառամը  
գլուղ եր վերագառնում: Որը թեպետ ամպամած եր,  
սակաչն հաճելի յեր դրսում լինել: Անթառամը մենակ  
եր դառնում հարեան գլուղից. որ դեռ շատ կար:

Այն արձակ գաշտը, վոր սկսվում եր ու հետո  
վերջանում բարձր սարի ստորոտում, յերկու կիրմեար  
հազիվ լիներ: Կեռման սալի ճանապարհը ոճազալար  
բարձրանում եր ու մասերնիների միջով պրոույտ գործում  
սարն ու իջնում եր ուղիղ սարալանջի գլուղը:

Միրում եր Անթառամն այդ ճանապարհը: Ման-  
կուց վորքան ե վաղվզել այդ շրջակայքում, վորքան ե  
բանջարի գնացել, կամ ծաղիկ քողելու կանանց ու  
աղջիկների հետ:

Ուրախ և Անթառամը, վոր ծանոթ այդ ճանա-

պարհով անա գնում և ինքը. հիմա փոխվել և շատ բան,  
փոխվել և ինքը:

Ի՞նչ լավ և, յերբ հիշում ես մանկութունը, դեպ-  
քեր, դեպքեր, դեպքեր:

Հիշեց Անթառամը, վոր խոստացել եր իր ընկեր-  
ներին քաղաքից գլուղ հրավիրել, ծանոթացնել աշխա-  
տանքներին: Յեվ հիմա ավելի լավ, ավելի շատ գործ  
կա... Հիմա կոլեկտիվ կա, ինչքան բան կա նրանց բա-  
ցատրելու:

Մտքերը պաշարել ելին Անթառամին: Ճանա-  
պարհը կտրտված եր սալի անցուղարձով և մանրիկ  
աավակների փորփրումներով:

Ճանապարհի յերկու կողմերում վերջանում ելին  
հողերի ծալերը, և հողատերերը փոսեր ելին փորել  
վոր սալին ավելորդ հողամաս շտորի, այլ ուղիղ ճա-  
նապարհի միջով գնա:

Անթառամը հանդիստ եր գլուղ իրեն, նա յեր-  
գում եր ու նույնիսկ փորձեց այդ փոսերը համարել...

Հարեան գլուղը մնաց հեռվում, անա և վերելքն  
և սկսվում: Այստեղ ճանապարհը թեքվում և, ընկնում  
խիտ մասերնիների մացառների մեջ ու բարձրանում  
սարի լանջով միշտ գեպի աջ:

Յեվ Անթառամը շտապում և շուտ հասնել սարա-  
լանջին, վոր այնտեղից դիտի շրջական:

Աչնպես լայն և հորիզոնը. լեբևում են խոր-խոր  
ձորերն ու լեռնաշղթաները:

Ճանապարհը խաղաղ և, փոչվոք չկա:

Միայն շատ հեռվում լավում և մի պատանու յերգ...  
Յեվ այդ ձայնն այնքան, այնքան քնքուշ և, հաճելի:

Անթառամը կանգ և առնում, նրա սիրտն սկսում  
և տրոփել Նրան այնքան հարազատ և այդ ձայնը:

Անթառամը մտածում է և դաժնում մտքի թելը...  
Մայրն է հիվանդ, խեղճ «աղին», նա չեբրեք, չեբքեք  
չի լավանա...

... Լցվում է Անթառամի սիրտը, նա այնպես ան-  
սպառելի կերպով լսլ է կամենում, այնպես ուզում է  
լալ... Նայում է շուրջը, վոչվոք չկա... կարելի չե  
լաց լինել: Ի՞նչ կա, նա ուզում է լաց լինել, հենց այն-  
պես, և լաց է լինում...

Անձայն հոսում են աչքերից նրա արցունքները:  
Իսկ հեռվում յերգում է պատանին...

Անթառամը դադարում է լալուց, հեռվում ամպե-  
րի տակից արևը ժպտում է միքանի վալրկյան:

Անթառամը չի լալիս, բայց և չի չել ժպտում: Իս-  
կայես վոր թախիժ է նստում նրա հոգուն:

Ճանապարհի մացառուտների միջից թռչունների  
մի խումբ է վեր ձախբում:

Անթառամին թվում է, թե ինչ վոր մեկը չերևաց  
թփերի քամակին, և ճնճողուկներն այդ պատճառով էլ  
թռան:

Վոչվոք չկա, լուռթյուն է, վերջապես ով էլ լի-  
ներ, կերևար ճանապարհին:

... Վոչվոք չի յեղել: Այդ ինքն է պատճառը, վոր  
թռչունները թռան, Իսկ արցունքներով լեցուն աչքերը  
խարեցին նրան... Սակայն ինչո՞ւ չե կասկածում... մի-  
թե մարդ կվախենա որը ցերեկով... Վոչ, Անթառամը  
կասկածում է և ինչո՞ւ չե կասկածում, վոչինչ չի հաս-  
կանում...

Վոչ, պետք է ստուգել, ահա և միքանի քայլ Ան-  
թառամը մոտենում է ճանապարհի այն մասին, ուր  
մարդկային ստվեր նկատեց: Անթառամն աչքերը հա-  
ռել է այն կողմը:

... Կասկածը հավանական է թվում: Յեվ ահա  
մայառուտը, ահա այստեղ էր, վոր... բայց սխալվել է,  
վոչվոք չկա: Ախր ինչո՞ւ չե կասկածում, ինքն էլ  
չգիտե...

Անթառամը նայեց ցած բաց դաշտի միջով իր ան-  
ցած ճանապարհին. հեռվում յերևում էր գյուղը, նույն-  
իսկ շատ տներ ճանաչում էր Անթառամը, կարելի չեր  
համարել նույնիսկ: Անցած ճանապարհին վոչվոք չեր  
չերևում և վոչվոք չի դիմաց չե լնող ոճազալար ուղու  
վրա: Անթառամը ծիծաղում է իր վրա ու միքանի  
քայլ անում:

... Մի քար է գլորվում իր քամակից, հետո քա-  
րերը խշշոց և թրփոց:

Անթառամը կայծակի արագությամբ յետ է նա-  
լում...

Մի անծանոթ մարդ դեմքը ծածկել է բաշլուղով  
ու քարացել իրենից հինգ քայլի վրա:

— Ո՞վ ես,— սարսափով հարցնում է նա:

Մարդը չի խոսում:

Անթառամը հավաքում է իր բոլոր ուժերը ու վա-  
ղում վեր, դեպի գյուղը...

Սակայն ծալվում են ծնկները, հենց առաջին քայ-  
լից, ընկնում է:

Մի մարմին ծանրանում է նրա վրա: Ահա և յերկ-  
րորդը... Նրան վերցնում են գետնից, տանում... Ահա  
նետում են նրան ցած:

Անթառամը ցավ է զգում, ուզում է շարժել ձեռ-  
քերը, նրանք արդեն կապված են...

— Բերանը կալ,— կարծես չերագլի միջից լսում է  
Անթառամը:

Մի սուր տոարկա բացում է նրա բերանը: Մի  
ահազին փալա սգմում են ներս... Անթառամն արդեն  
վատ է շնչում: Նա ծանր հիվանդի լե նման...

... Ահա կրկին ծանրանում են նրա մարմինն ու  
պոկոտում կրծքից շապիկը...

Դեռ զգում է նա, զեռ գիտե, վոր պոկում են նրա  
մարմնից իբ հագուստը:

... Ահն և մերկ է արդեն, բոլորովին մերկ: Մի  
սոսկալի տաքություն է զգում մարմնին, շնչում են  
նրա դեմքի վրա:

Ահն և մեկը և յերկրորդը. նա ինչ-վոր բան գլխի  
լե ընկնում, հասկանում է և չի հասկանում: Վերջապես  
մութն է թվում նրան ամեն ինչ... Ծանր... Ծանր...  
Ծանր: Մի սուր, շատ սուր բան ծախում է նրա պա-  
րանոցը...

Լուռ է, ճանապարհին վոչվոք չկա:

Անթառամն ընկած է մացառների մեջ. մերկ, բե-  
րանը կախված, իսկ արյունը լճացել է նրա գլխավե-  
րեում...

21.

Գոհարին ընդունել էյին կոմչերիտաթյան մեջ:

Նա այնպես եր վոգեորվել, այնպես եր զվարթա-  
ցել, վոր չափ ու սահման չկար նրա գոհունակության:  
Յերբ Աննիկին տեսնելու համար նա կոտպերատիվ գնաց,  
Սամանգն ասավ, վոր տանը կլինի, ետր նա գրելու  
աշխատանքներ ունի, չեկել չի:

Գոհարը շտապեց: Դռնից յերբ ներս եր մտնում,  
Մարտիրոսի պտուպ մայրը դուրս եր գալիս. հանդի-  
պեցին:

— Գոհար ջան, կյանքիդ մատաղ, խի՞ չես թեղ-  
թեղ գալիս,— խնդաց պառավը և համբուրեց նրա այ-  
տերը:

Վաղուց արդեն Մարտիրոսի մայրը Գոհարին ի-  
րեն հարմնացուն եր համարում:

Գոհարն ամոթից գլուխը կախ գցեց ու ներս  
մտավ:

Մարտիրոսը տանն եր, քաղաքի Վանոն ել ու Ան-  
նիկը նմանապես:

Վանոն ծիծաղին տալով նայեց Մարտիրոսի չե-  
րեսին:

Մարտիրոսը ժպտաց: Վանոն խփեց նրա ուսին  
ու բարձրաձայն ծիծաղեց:

«Հը՛, վհնց ա մեր բանը...»:

Գոհարը նայեց նրանց ու ինքն ել քմծիծաղ տվեց,  
բայց այնպես եր կարմրել, ինչպես մալխսյան վարդ:

— Եհ՛, ի՞նչ ա, ի՞նչ եք ծիծաղում, այ, կթողում  
կերթամ,— բողոքեց նա:

— Աբա, արա, նազ մի անի, Գոհար, ուր կեր-  
թաս, ուր ել գնաս, ելի պիտի գաս,— կատակեց Վանոն:  
Ինչորը ծիծաղեցին: Գոհարը չեք իմանում ինչ անի:

— Ի՛հ, աղջի, հանաք են անում, ի՞նչ ես նեղա-  
նում— ասավ Աննիկը ու դառնալով յեղբորը՝ բողո-  
քեց,— դե, բոլ ելավ, աղջկան ամաչացրիք,— չկարողա-  
նալով լրջությունը պահել՝ բարձր ծիծաղեց:

— Աննիկ ջան— Անթառամն եկել չի. գնանք տե-  
նունք ինչ արավ ուղիովի գործը, երեգի դնացել է  
Մոշկուտա գլուզն ու եկել չի:

— Գիդում չեմ, Գոհար ջան, լես են ա ուղեցի գնամ  
կուշտը: Դուռ արի ես երկու գրոշակի ծալբերը կարի,  
լես գնում եմ, ես ա կգամ: Սպասի հա... գնաս վոչ:

Աննիկը դուրս գնաց:

Միքանի բոպե հետո քաղաքի Վանոյին կանչեցին՝ նա դուրս գնաց:

Մարտիրոսն ու Գոհարը մենակ մնացին:

Առաջին պահին դարմանալի կերպով իրենց անհարմար դժգոհին: Դեռ յերբեք չէր պատահել առանց յերրորդ անձնավորության Մարտիրոսն ու Գոհարը մենակ մնային:

Մարտիրոսը փորձեց գնալ դուրս:

Այդ մոմենտին Գոհարն իր ամոթը թագցնելու համար անտարբեր ձևացավ:

— Ո՞ւր ես փախչում, արն, — կերկերուն ձայնով, կարճբատակելով խոսեց նա:

Մարտիրոսը կանգ առավ:

— Տղերանց կուշտը, — ժպտաց նա, — գործ կա:

— Դե վոր ետ ա, յես խի՞ յեմ մնում, ձեր շենլիկի պահապանը հո չեմ:

Մարտիրոսը նստեց թախտին: Լոեցին, նա միքանի լրագիր վերցրեց, թերթում եր:

Իսկ Գոհարը դրոշակն եր կարում:

Հարևան տնից լացի ձայն եր գալիս...

— Մերս Բոքոլանց տանն ա, Մարիբեզ պապին մեռնում ա, — խոսեց Մարտիրոսը գլուխը չքարձրացնելով:

— Մարդ նրա հասակի ապրելուց յեղը ել մի դադ ելա ուզիլ չպտի: Տենուս քանի տարեկան ա:

— Հարյուր քսանը թմամել ա:

Նորից լուռ թյուն:

Մարտիրոսը հիշում է իր մի խոսակցությունը մեռնող ծերուկի հետ. —

— Հե՛լ ամի, ամի...

— Հե՛յ, — ձայնել եր ծերունին:

— Աշխարհս փոխվել ա, ամի, — կատակին տալով ասել եր Մարտիրոսը:

— Հը՞...

— Աշխարհս փոխվել ա, փոխվել ա...

— Խի՞ յա փոխվել...

— Թագավորին գցել են, թագավորը կա վոչ:

— Խի՛ի, խնդաս դու, թագավորն ել կկորչի:

— Ամի, հե՛լ ամի...

— Հե՛յ...

— Կոլեքտոր ենք կազմել, մտնիլ չե՞ս...

— Չե, ըստի յել լավ ա, գալ չեմ, — չէր հասկացել ծերունին:

Մի քանի վայրկյան հետո Մարտիրոսը չելավ տեղից ու համարձակ մոտեցավ Գոհարին:

— Եզ խի՞ չես փախչում...

— Փախչում չեմ, գալ մի, ամոթ ա, — քաշվեց գեղջկուհին:

— Դե կացի, բան պտեմ, ասի, Գուհար...

— Բան ես ասում, ասն, ետ հն խլացա վոչ, հեռվիցն ասն:

— Գուհար ջան, հեռվիցն ասելու չի, — անզուսպ սիրով բացականչեց Մարտիրոսը:

Գոհարը չպատասխանեց...

Մարտիրոսը գրկեց նրան և բուռն կարոտանքով սկսեց համբույրներ քաղել նրանից:

— Թո՛ղ, թո՛ղ, Մարտիրոս, հոգուտ մատաղ, թո՛ղ...

— Դե ի՞նչ ես սատկում, հո՞ չկերա, սիրում եմ, «թո՛ղ»

Թող, Թող՝ վերն ա, գահլիս տարար, — կեղծ դայրույթով արձակեց նրան Մարտիրոսը:

Յերբ Գոհարն իրեն ազատ զգաց, «կոնֆլիկտը» հարթելու համար ասաց.

— Բն, կենաց եւ քամում, ասես թե միջուան հոգի չըլնի:

— Հն-հն-հն. .

— Ի՞նչ եւ ծիծաղում. . .

— Գոհար ջան, թող արա, ել եւ դայդի չեմսեղ միլ, — ե կրկին Մարտիրոսը փարվեց նրան ու գիրկն առավ:

— Թող, կգան, թող, կգան, — կրկնում եր Գոհարը, — թող, բանս մնաց:

Յեվ Մարտիրոսը թողեց նրան: Գոհարն անցավ մի կողմ եւ սկսեց շարունակել գործը:

Յերկար ժամանակ լուռ մնացին, կարծես թե յերկուսն ել ինչ-վոր հանցագործություն ելին գործել:

Մի քանի վայրկյանից հետո նրանք նայում էին արդեն իրար յերեսի եւ ժպտում:

Մարտիրոսը քաղվածքներ եր անում — լրացրին իրց:

«Համատարած կոլեկտիվացման ոռայններում վերացնել այն սրենքը, վորով թույլ եւ տրվում հողը անուրդով վերցնել եւ վարձու աշխատանք թույլ տալ գյուղացիական անհատական տնտեսություններին մեջ»:

— Ա՛յ այս ել լավ ե, — մտածեց Մարտիրոսը:

«Սողերի եւ վոչխարների հանրայնացումը կատարվում ե այն ոռայններում (հասարակ մանր անասունների), վորտեղ զարգացած ե մանր անասունների արդյունարեր անասնաբուծությունը»:

«Վոչ կուսակցությունը ե վոչ ել կառավարությունը չեն նեղել ե չեն ել նեղում կրոնի խնդրում: Այն, կուսակցությունը կովում ե կրոնի դեմ ե բացատրում անդադար, վոր կրոնը միշտ յեղել ե մի ցանց, վորի մեջ տերտերները, թագավորները, կալվածատերերը, գործարանատերերն իրենց վորսն են արել»... .

— Լավ ե, Գոհար ջան, հիմա ամեն բան պարզա, չի... .

Նա գիմեց նորից դեպի իր Գոհարը:

— Ե՛հ Մարտիրոս ջան, խելոք կաց... .

Նրանք յերկուսով ելին, նրանք ուրախ ելին:

22.

Ֆրակցիայի նիստում նախագահ գեղի Վանոյին կարգին սեղմել ելին:

Վանոն ընդունել եր իր սխալները: Արեշչիկի հաբցը մի քիչ լուրջ եր, նա դեռ այն կարծիքին եր, վոր համոզելով կոլեկտիվացման գործը առաջ չի գնա: Նրա դեմ միջոցներ կային:

Վանոն, վոր քաղաքից եր յեկել գյուղ աշխատելու, շատ շուտով ըմբռնեց գյուղացիության հետ վարվելու բոլոր ելական կողմերը:

Վանոն զարմանում եր. նա այն հոգեբանական կառուցվածքը, ինչ կար բանվորներին մեջ, այստեղ չեր տեսնում: Այդ զարմանքը միայն ժամանակավոր եր Վանոյի համար: Նա շատ շուտ սովորեց ճանաչել յերևույթները, գյուղացիության:

Գյուղի նախագահ Վանոն, վոր շատ կորովով աշխատող տղաներից եր, անշուշտ իր սխալներն ընդունելուց հետո յետ չեր մնա վոչ մեկից:

Յեկ քաղաքի Վանոն աշխատում եր ուղղութիւնը  
տալ:

— Վանո ջան, մենք, հո գիտես, աղաշ ենք, յես  
եւ Վանո յեմ, դու չեւ Վանո. մենք իրար պետք եւր-  
րացնենք: Արա տղամարդավարի աշխատենք, վոր բան  
ստացվի:

— Յես գտնում եմ, վոր սխալվել եմ, հրետի ու-  
րինակը ցուցց տվեց, թե ինչ ղայլի դուրս եկավ ա-  
ղաքի կազմած կոլեկտիվը:

Բոլորը նրան քաջալերեցին: Քաղաքի Վանոյի  
գալուց հետո բլլի աշխատանքները անցան նրա  
ձեռքը:

Մարտիրոսը կոլեկտիվի նախագահ եր ընտրված  
հենց առաջին կազմակերպչական ժողովում:

— Հը՞, Սամանդ ջան, կոոպերատիվումդ ապրանք  
կա՞ թե չե, — հարցնում եր քաղաքի Վանոն:

— Կա ելի, ա՛յ, սպասում ենք, ես երկու որս  
ստանալու յինք, — վոգետրվում եր Սամանդը:

— Դե դու գիտաս, գործերդ չխառնես, իսկ դու  
վո՞նց ես, Շիտակ Փաշո, քու աշխատանքը լսվա գնում,  
թե՞ չե: Փոկիդ հաշիվները ճիշտ են, չքավորներին ու  
բատրակներին չհեղացնես, ա՛յ, շուտով կքննենք:

— Շատ կարգին ա, Փաշան մեռած հո՛ չի, Փա-  
շան իր գործը գիդա, սղերք ջան:

23

Անթառամի սպանութիւնը լուրը յերրորդ որն ի-  
մացվեց:

Կայծակի արագութեամբ լուրը տարածվեց գյու-  
ղից գյուղ, և բոլորը սոսկացին այդ նենգավոր սպա-  
նութիւննից:

Անթառամին լիկելուց, չարչարելուց հետո կո-  
կորդը զաշույնով ծակել էյին, սպանել:

Սարալանջի այդ գտնուում բոլորն զգացին մի մեծ  
վիշտ: Բոլորի համար սարսափելի թվաց վո՞ճիբը և մաս-  
սաներն զգացին դասակարգային թշնամու ձեռքով կա-  
տարած այդ վայրագութեան նշանակութիւնը:

Շիտակ Փաշոն միանգամայն ճղնակոտոր ծառի  
չեր նման. նա չեր կարողանում ղեկավարել իրեն: Նա  
կորցրել եր իր Անթառամին, վորի ամեն մի կատա-  
րած գործը նրան թե եր տալի, նրան եւ ավելի տրա-  
մադրում աշխատելու: Կուսակցական ընկերները հու-  
սադրում էյին նրան, ասում. — Դու պետք ե պարծե-  
նաս, վոր նման աղջիկ ես ունեցել, վոր նրա հայրն ես:  
Բացց և այնպես վիշտը մնում եր վիշտ:

Շիտակ Փաշոյին թե մնար, նա գիտեր, թե ո՞վ ե  
իր թշնամին, ո՞ւմ ձեռքով գնաց իր Անթառամը...  
Նա կարող եր ատամներով դուրս կորզել նրանց կո-  
կորդը, բացց կուսակցական դիսցիպլինան նրան ատում  
եր՝ կազմակերպված յեղիր, մենակ Աքեչները, Դերա-  
սիմները, Կապեաները, Շաշ Սոււբաթները, Հովհան-  
նեսները չեն քո թշնամին: Նրանք շատ են, նրանք  
կազմակերպված են ու ավելի վայրենի: Հարկավոր ե  
ընդհանուր ձակատով դուրս գալ բորենիները ղեմ:

Անթառամի մայրը աղջկամահն իմանալով, կաթված  
ստացավ: Թագուհին վողրում եր իր հորեղբոր աղ-  
ջրկա մահը:

Փաշոն նրան քնքշում եր.

— Թագուհ ջան, դու իմ Անթառամի տեղը դար-  
ձիր, դու նրա տեղ հույս տուր ինձ:

Վիշտը խոշոր եր...

Այդ գյուղը տխուր էր, և տխուր քուն մտալ այդ գիշեր...

Շաշ Սուժբաթը անհետացել էր գյուղից:  
Նա անհետացավ անմիջապես դեպքի յերկրորդ օրը:

Հարցը պարզ էր որը-ցերեկի պես:  
Բոլոր գյուղերում բողոքի հասարակական ժողով-ներ գումարվեցին:

Չարագործների հետքերն ելին փնտռում: Գյուղերի ալտով մասսան էլ քուն ու դադար չունեն: Հարկավոր էր վերջնականապես ջախջախիչ հարված հասցնել կուլակային տարրերին:

Աննիկն ու Գոհարը զրկված էին իրենց ամենալավ ընկերուհուց: Նրանց վիշտը ավելի բովանդակ էր, ավելի քսքուշ:

Թաղումը կատարվեց մեծ հանդիսավորությամբ: Յեկել ելին բոլոր գյուղերից: Յեկել ելին ամենահեռավոր ծայրամասերից անգամ:

Քաղաքի Վանոն ասավ.— Ընկերներ դուք, ել սովորեցեք չընկճվել դժվարությունների առաջ: Այս դասակարգային կոփում ընկնող ամեն մեկի փոխարեն դուք հարյուրներով յեկեք, լցրեք այն բացը, վոր մընաց Անթառամից հետո: Յեղեք ավելի կատաղի, ավելի զգուշ և հարվածը շեշտակի դարձրեք մեր թշնամիների ճակատին: Անթառամը իր կոմչերիտականի պարտքը կատարեց մինչև վերջ և հերոսուհու նման ընկավ կոփում: Բոլորդ հետևեցեք նրա աննկուն յեռանդին: Նա առանց վախենալու, մի քանի տարի

շարունակ յերեան էր բերում այն բոլոր բացերը, այն քուրս դեպքերը, վոր տեղի չեն ունում գյուղում դասակարգային հողի վրա: Նրան ձեր պարտքը տալու համար մտեք կոլեկտիվները, ամբացրեք սոցիալիստական սեկտորը գյուղում:

Յեվ մեծ վշտով, կատաղի վրեժի ու պաշքարի վճիռն իրենց հողիներում, կուսակցական և անկուսակցական յերիտասարդութունը բաժանվում էր իրեն լավագույն մի բարեկամից:  
Կյանքը պաշքար է, դասակարգային կռիվ: Թանգ է ամեն մի հաղթանակ, գնահատեցեք այդ ամենը...

Կոլեկտիվը որ-որի ամբանում էր: Նոր և նոր տնտեսություններ ելին ավելանում:

Մարդիկ հասկանում էին, թե վորն է այն ուզին, վորի համար աշխատավոր մասսան տարիներ շարունակ իր զոհերն է տվել, հարթելու այն: Կուլիկ է նրանց դեմ, վորոնք ճնշել են իրենց մի խումբ վոճմակով միլիոնավոր մասսաներին:

«Ե՛ խ ընկերներ, լավ նայեցեք, ճանաչեցեք ձեր թշնամիներին, ուսումնասիրեցեք նրանց դեմքը, արտահայտությունը, նրանց վրտնձգությունները, խըփեցեք նրանց առանց խնայելու, խփեցեք առանց տատանվելու»...

Քանի-քանի Անթառամներ են վոչնչացրել նրանք: Յեվ ահա բարձրանում են գյուղերը, չեղնում են իրենց նահապետական ճահճից, ծառանում է նորը բոլոր գյուղերում այդ նորը աճում է, առողջ են նրա արմատները: Բոլոր գյուղերում Անթառամներ կան, կան մարդիկ վորոնք ճանաչում են իրենց բարեկամներին ու թշնամիներին:

Թող, թող վոր չդողա մարտիկի ձեռքը հրացանը պարզելիս դեպի թշնամին:

Դարերի, դարերի կամքն է ծառացել հիմա: Շըրջադարձ է կատարվում, այն, ինչ անխուսափելի էր և պետք է լիներ:

Ո՞վ է լերերում, ո՞վ չի տեսնում, ո՞վ չի զգացել մեր թշնամուն:

... Վոչ մի գիշում: Վոչ մի համաձայնողական կոմպրոմիս: Կտիվը կտիվ է, պետք է լինել խրոխտ, պետք է դիմացկուն լինել, անխտիր լինել թշնամիների նկատմամբ: Դասակարգային թշնամին է խոսում, դասակարգային թշնամու հետ մոտենալու ճանապարհը կռիվն է...

Գյուղը կատարում է իմ պատմական անցումը: Այժմ, գյուղում դասակարգային պայքարն է յետում:

\* \* \*

Կուլակներին նեղն էլին լծել...

Սարալանջի գյուղի «Ազատութուն» կուլեկտիվը կամաց-կամաց աճում էր:

Վերջին անգամ, յերբ հողաչափը գյուղ մտավ կուլեկտիվի հողերը կարգի գցելու, դեռ գյուղխորհրդի շենքից դուրս չեկած, խոշոր մի քար հասցրին: Նրան արյունլվիկ քաղաք տարան...

Քաղաքի Վանոն, գյուղխորհրդի նախագահը, Մարտիրոսն ու Սամանդը գործի անցան, բսլորին գործի լծեցին: Շատ չանցավ, յերբ մի որ էլ գյուղ-խորհրդի սենյակը մտավ բատրակ Անտոնը...

— Ղալաթ եմ արել—ասավ նա լացակումած:

— Խնչ ա էլել, ադա,—հարցրեց գեղի Վանոն:

— Զեմլեմերին չեսի քարով տվողը՝ սպանեցեք ինձ, սպանեցեք...

Յեւ նա պատմեց այն բոլորը, թե ինչպես իր տերը՝ կուլակ Աքելը, մին էլ չովհաննեսը փող էլին խոստացել, վոր դեմլեմերին «քարովը տա սպանի»... Անտոնը խաբվելու համոզվել էր:

Գործը ժողդատարանին հանձնվեց: Շատ չանցավ, կրկին մի դեպք յեղավ:

Մի խումբ գինված մարդիկ Գոլուտողանց Պետնուն ձորումը բռնում են ու մի լավ ջարդ տալուց հետո մերկացնելով ճանապարհ են դնում, վզից մի խոշոր սատկած շուն կապած: Ասել էյին, թե կտանես նվեր ձեր «կուլեկտիվին»... թե չես տանի, յեղնա կըսպանենք:

Գոլուտողանց Պետին, բսլորին էլ ճանաչել էր, վորոնց թվում Սումբաթին և Կարապետին:

... Նման դեպքերը գիտակցութւնն էյին բերում մասսային, և նրանց զայրույթը լեռնանում էր փաստարարների դեմ...

26.

Գործերը լավ ընթացք էյին ընդունում: Մարտիրոսը ժպիտը դեմքին տուն դարձավ:

Ուշ գիշեր էր, կուսակցական բջիջի փակ ժողովը նոր էր վերջացել: Լուսթյունն ու խավարն էր զգացվում գյուղում:

Յերբ նա մտավ խրճիթ, Աննիկը դեռ չէր քնել: Նրան կլանել էյին նորանոր մտքեր, և Աննիկը չէր կարողանում այդ լարչուրինթոսից դուրս յելնել:

Աննիկը խրճիթվարական աշխատանքներով էր

տարված: Վերջերս ռադիո-բարձրախոս ելին ստացել ընթերցարանի համար: Նա մտածում էր հետագա աշխատանքները մասին, անավարտ դպրոցի շինքի մասին, կոլեկտիվի մուրի, մանկապարտեզի մասին: Վերջապես մտքերը կանգ էին առել անձնական կյանքի, խոշոր և եյական փաստերի վրա: Մամանդը Աննիկի աչքից չէր հեռանում: Նա սիրում էր այդ համեստ տղային:

Դեռ մանկուց, յերբ վաղվզում էին գյուղի փոշեղալի փողոցներով, Մամանդը մի թմբկիկ մանուկ, հազիվ կոտրավող լեզվով բացականում էր.

— Աննիտ, ախիլ պտեմ, ախիլ քեզ...

Հիմա այդ միևնույն Մամանդը տղամարդ է դարձել, հիմա հրանք լուռ հասկանում են իբրև:

— Ետ խի՞ յեղացար, — հարցրեց նա Մարտիրոսին:

— Խոսեցինք, Աննիկ, միքիչ գործ կար:

Աննիկը լռեց:

Մարտիրոսի տրամադրությունը հրաշալի յեր: Նա փորձեց չեղբոր հետ կատակ անել:

— Աբս, Մարտիրոս, մի գաղ պտեմ ասի. ես չվել յերբ մուկն ու կատու խաղաք մեր Գուհարի հետ, խի՞ չես ուզում...

Մարտիրոսը, վոր թղթերի մեջ էր թաղված, գլուխը առանց բարձրացնելու պատասխանեց.

— Ա... դե շնշ-շնշ դուբս մի տակ, աղջի...

Նախ ճրագը գրված էր սեղանին ու մրոտ ապակու միջից արնագույն լույս էր արձակում խրճիթի ներքին բովանդակութեան վրա:

Պտոսով մայրը կծկվել էր մի անկյունում, անգույն մի տեղաշորի վրա, անգույն առաստաղի տակ անգույն կնճածածկ իր հայացքով:

Մթությունը կարծես շնչում էր խավար պատուհանների տակ: Մի քանի հատիկ ապակու միջով նախը խանդի հայացքն էր ուղղել թրթռացող լամպին:

Աննիկը չէր լուռ:

— Շիտակ շիտակ, վոր իմանաս ինչ դար ա սիրում, Գուհարը լավ աղջիկն ա, անխախտ լավը:

— Այ աղջի, խի՞ չես քնում, տո բոլ ելավ ե, նյ սատանի պոչ:

— Չե, Մարտիրոս ջան, ըղորթն ասա, մթա թե սիրում չես, ֆոքուտ տակն ասա, լավ աղջիկն չի...

— Կաջն ա, չեղնա, պրծանք, թե չես:

— Հըլն պրծել չես, — բարձր ծիծաղեց Աննիկը:

Մարտիրոսի դեմքով խորամանկ մի ժպիտ անցավ:

— Բա, Աննիկ, դու գիտես, թե Մամանդը գեշն ասա խի՞ չես ուզում:

... Գուցըր Մամանդի անունը լսելուն պես վերմակը քաշեց գլխին:

Յեղբայրը ծիծաղեց, յերկուսն էլ լռեցին: Գիշերը ծանրարար նստել էր գյուղական խրճիթներին ու սեղմվել պատուհանների տակ...

Ա... ս... ս... — շներն էլին կլանչում գյուղի անկյուններում:

... Պատրաստվում էր քնելու...

Կարծես տարեբքը վորոտաց և մրրիկը արշավեց խաղաղ գյուղի վրայով...

Յերբ վայրկյաններ անցան, գնդակի մահասարսուռ պայթյունն ու քամու հատող հոսանքը լամպը հանգցրեց:

Մարտիրոսը փովեց հողե հատակին:

..... :

\* \*

Մարալանջին թառ յեղած գյուղը վոտքի կանգնեց...

Ճիչ, աղաղակ, լաց, վաչնասուն... Աննիկն ու մայրն իրենց սպանում ելին, կիսահագ կանայք ու տղամարդիկ լցրեցին գյուղի պապանձ փողոցները:

— Հեյ, քոմագ, Մահականց Մարտիրոսին սպանեցին, քոմագ, քոմագ...

Յեվ լեկան հողեգույն մարդիկ, կիսավեցին սանդուղիները առաջ:

Պատուհանի խավար սպակին փշրվել էր, նատեղի յեր տվել գնդակի հարվածին, ներս ընդունելով չարագործի հրացանից. հիմա լերախաբաց հոհոտում էր...

— Հեյ, քոմագ, սպանեցին...

Դպրոցի մեծ զանգը, վոր լեկեղեցուց էր վերցրած, ահավոր լուրը արձագանգեց հեռու, շատ հեռու...

Տղերքը զինված ցրվում են այս ու այն կողմ, գյուղի կասկածելի անկյունները խուզարկվում են:

Մեկը մեկնում է հարևան գյուղ բժիշկ բերելու...

Գոհարը Աննիկի և ուրիշ կանանց հետ չոքել էր Մարտիրոսի առաջ. նա չի դիմանում, արցունքները խեղդում են ու նա տանջվում է, ցավից բացականչում.

— Մարտիրոս,— գոչում է Գոհարը, սակայն ամոթը զսպում է նրան, Գոհարը փաթաթվում է Աննիկի վզով:

— Մարտիրոս,— այս անգամ ավելի հուզված լալիս է Գոհարը ու մղկտում:

... Մարտիրոսը կարծես լուսն է գեղեցիկ հրնչյունների մի յերգեհոն, նա թեթև է գգում իրեն, նույնիսկ բացում է աչքերը ու վայրկենապես փակում:

Անիմներ են անցնում ուղեղի միջով... Գուշներ, գուշներ ու ծխածան...

... Շնչում է Մարտիրոսը, ծանր է շնչում: Բուպները անցնում են, ճմլվում պառավի սրտի մեջ: Խեղճ մայր...

— Տունս բրիշակ արին,— ցավից այրվում է նա:

27.

Գիշեր էր:

Խաղաղ գյուղական գիշեր: Խրճիթները քուն էլին մտեր: Պլպլան ճրագները փակել էլին իրենց արտեանունքները, լուռ էր գյուղը:

Նա իր մեջ պահում էր պայքարող վոգիներ զատասան: Հիմա այդ պայքարողները քուն էլին մտեր:

Ննչում էլին հողի լավագույն աշխատավորները:

Չեն քնել միայն նրանք, վորոնք արթուն հսկում են գյուղական լավագույն մաքտիկներին, վոր խաղաղ քնեն: Նրանց, գորշ խրճիթներ թակ հանգստացող յեղբայրներին:

Այդ գյուղի պահակներն են...

Ամբանում է նոր կյանքը, քայլում է նա գյուղական նիհար փողոցներով, մտնում է խրճիթներից ներս: Լայնանում է նորը, փավում, փովում դաշտերով, ժպտում հեռավոր լեռների կրճքին, գգվում դարավոր կաղնիներին՝ ձկուն սոսիներին, դալար ուռենիներին:

Նորը, նորը, այդ նորն է հիմա իր հանգիստն առնում:

Գիշեր ե, խաղաղ ու լավ գիշեր: Հսկում են արթուն պահակները, վոր ամբանա նորը...

Քնել ե գյուղը նոր հույզերով:

Քամին, դարնանային քամին խավարի միջից կարծես շնչում ե, կարծես նա յե շնչում հարչուրների փոխարեն: Այնքան դուրեկան ե գիշերային լեռնային քամին:

28.

Շաքարի խրճիթում մի վախեցած ճրագ թրթռում ե պատին կպած:

Տան մի անկյունում թախտի վրա քնած են մի կին և չերկու չերեխա: Ճրագի լույսը չի հասնում նրանց. խավար ե տան անկյունը: Քնած են այդ ընտանիքում ևս: Ահա մի քանի մարմիններ կոթնել են սեղանի վրա: Նրանց միջև արագի շշեր են դրված:

Նրանք բավական խմել են:

Ովքեր են, նրանց արտաքինը շատ պարզ ե ու հասարակ. նրանք, այդ մարմինները, վոր ծանրացել են սեղանին, գյուղացիներ են:

Ճրագը թրթռում ե նրանց գլխավերևում, նա կարծես ամփոփում ե այդ մարդկանց ներքին աշխարհը:

— Տ՛ըպ, տը՛փ, տը՛պ-տը՛փ, — ցնցումներ ե կատարում ճրագը:

Շաքարն այնպես ե հարբել ու կատակել ե փորձում:

Դբսում շունը հաջում ե:

— Սնւ,— քարանում ե տանուտերը: Բոլորն զգաստանում են ասես:

Վոչվոք չկա, շունը դրսում հաջում ե լուսնի վրա գուցե: Լուսինը փորձ ե արել մոտենալ չարչի Շաքարի պատուհաններին, այնպես ել դադտագողի: Նա թագնված եր ամպերի տակ. ամպերը այնպես եյին թագցրել նրան...

Իսկ հիմա լուսինը նայեց ցած, ուրեմն դիտում ե...

Յեւ հաջում ե շունը:

— Սնւ,— կամացուկ խոսում ե Շաքարը, — յես դուս կելնեմ կիմանամ, շունը հաջում ա, գոմը կանեմ...

Բացվում ե մի փոքրիկ դռնակ ու նորից փակվում:

Մի մարդկային սովեր յերևում ե գոներին: Ըստվերը սուլում ե, թեթև շունը անագին վոստուեններով հարևան տան կտուրից թռչում ե ու մոտենում: Ըստվերը շարժվում ե, կենդանին հետևում ե նրան:

Ահա գոմը. չերկուսն ել ներս են մտնում: Հետո սովերը վերադառնում ե:

Կրկին բացվում ե մի դուռ ու կրկին փակվում:

Խրճիթը խաղաղ ե, կարծես վոչվոք չկա... Սա կայն մարդ կա արթուն այդ ուշ պահուն, այդ խուլ անակում...

Հարբած մարդիկ խորհրդավոր սարսափի տակ խորհում են...

Չարչի Շաքարն այնպես ե փոխվել, նրա դեմքը համարյա չի չերևում, սեին են տալիս բոլորի հայացքները: Մութն են նրանց հայացքները:

— Տղերք,— հաղիվ լսելի կերպով հուշում ե նա, — ես ել ձեր հաջողության կենացը:

Չորս տարրեր ձեռքեր չորս բաժակ են բարձ-

բացնում, չորս անգամ հանդիպում են չորս հացացք-  
ները:

Ողին հոսում է վորկորները:

Սեղանին բանջարե թթվի մնացորդն է մնացել  
ու հողագուլն հացի կտորները:

Նրանք փսիսում են ըրար ականջի. նրանք  
նախում են չերբեմն քնած մարդկանց կողմը և պլպլա-  
ցող ճրագին:

Չորս զուգ աչքեր, մթագնած ու կակածավոր  
աչքեր են արթուն այդ գյուղում... Սարսափելի աչ-  
քեր:

Ժամեր են անցել, գիշերը կիսվել է վաղուց...

Մեկ անգամ ևս բացվում է մի դռնակ, սի ըստ-  
վեր է դուրս սողոսկում, հետո նորից մի քովեր, չեր-  
բորդը:

Փակվում է դռնակը. ներսում չարչի Շաքարն է  
մնացել կռթնած սեղանին:

... Սուս...

Իսկ ճրագը վախեցած թարթում և.

— Տը՛փ, տը՛փ, տրփ-տրփ...

Խաղաղ բուն են մտել այդ գյուղում... Ովքեր  
են սողում գյուղի մնացած փողոցներով:

Դուք յեթե չեք չեղել գյուղում, չգիտեք, թե վոր-  
քան գրավիչ է այն, չերբ նա խաղաղ է լինում, չերբ  
լուռ է են բանուկ փողոցները, չերբ սայլերը չեն ձուռն-  
չում կեռման ճամպաներով:

... Ու իջնում է գիշերը...

Դուրս չեկեք նայեցեք մի բարձր տեղից հեռա-  
վոր խավարին, նայեցեք, և գյուղը չկա: Գյուղը  
մշուղված է, վարագուրված: Ասես թե այնտեղ չի չե-

րևում այն կաթսան, վորի մեջ մարդիկ, հողի մարդիկ  
ձգտում են մի ընդհանուր նպատակի:

... Ո՞վ չի չեղել գյուղում.—

Նա, ով չի չեղել, չի ճանաչում հողի լավագույն  
մարդկանց: Նրանց, վորոնց բազուկները առնացի չեն,  
դեմքերը հողագուլն, քաչլերը հաստատ: Նրանց, վո-  
րոնք զարնան հեռ աճում են հողերից, աճեցնում  
լայնածիր դաշտերը:

Պետք է հասկանալ նրանց: Այնպես խաղաղ է  
ասես... Կարծես սաչլի ճոռոցին է նման գյուղական  
կյանքը: Սակայն ուր են մնում այն չեռուզեռը,  
այն անդուլ գիշեր ու ցերեկների աշխատանքը, վոր  
կատարում են նրանք: Պետք է դիտել վոչ միայն  
դրսից, այլ և ներսից: Իսկ ներսում գյուղն աճում է,  
գյուղը թարմ է մնում:

Նորն է բարձրանում խաղաղ թվացող այդ գյու-  
ղերում: Ուժեր, ուժեր են բախվում հիմա, դասակար-  
գային կռիվ կա գյուղում:

Իսկ հիմա հանգիստ է, իսկ հիմա լուռ է նա,  
սակայն կակածավոր սովերներ են պտտում համրացած  
փողոցներով...

... Սուս...

29.

Կոտպերատիվի պատուհանից ներս ելին մտել  
չարագործները:

Այդ այն գիշերն էր, չերբ սովերներ դուրս սո-  
ղացին, չերբ դռնակը չերբ անգամ բացվեց ու փակ-  
վեց:

Քոլուտողանց Պետին, գիշերն անց էր, չերբ

տնից յերավ, վոր գոմն անցնի անասունների կերը  
կանոնավորելու համար, կամ, ով իմանա, մի ուրիշ բա-  
նի, կամ ուղղակի նա կամեցավ թարմանալ:

Պետին դուրս լերավ խրճիթից...

Իսկ փողոցիկները լուռ ելին, գիշերը լուռ եր:

Նա մտածում եր այդ պահուն իր յերեխաների  
մասին, կնոջ, գործի, ով իմանա, թե Պետին ինչ եր  
մտածում: Սակայն խաղաղ ու լուռ պիտի լիներ գի-  
շերը:

... Իսկ ինքը պիտի դառնար յետ ու քներ, վոր  
առավոտը թարմ մարմնով դուրս գար գարնանային  
արևին վողջունելու:

Նա մի քանի քաչլ արավ ու կանգնեց...

Միթե, ահա մի քանի հոգի, նրանք որորվում  
են խավարում:

Պետին տրորում ե աչքերը...

Այո, մի քանի սովեր, մոտիկ, այնքան մոտիկ են,  
անցնում են փողոցով, իր դռան, ցանկապատի մո-  
տով են անցնում...

«Այս ի՞նչ ե»—մտածում ե Պետին: Ու անմիջա-  
պես յեզրակացնում: Ինչե՞ր չեյին կատարվում, ով  
իմանա:

Ու Պետին զգուշ հետևում ե: Նա թագնվում ե  
նախ չերևալու համար ու վերցնում պատի տակ դըր-  
ված կացինը:

Սովերներն անցնում են, Պետին վտարից դուրս  
զննում ե նրանց. չի ճանաչում: Յերեք հոգի յեն:

Պետին կիսամերկ ե, կամենում ե հագնվել... Իսկ  
յեթե ներս անցնի, նրանք չեն անհետանա:

... Իսկ այդ ժամանակ սովերները պտույտ են

կատարում ու աչքից կորչում: Պետին վազում ե նրանց  
ուղղությամբ...

Լուռ թյուն. վոչվոք չկա:

Պետին կարծես թե մոտիկ կրկին նկատում ե  
նրանց ու կրկին կորցնում:

Ովքե՞ր ելին, վոր գնացին այդ մարդիկ:

Պետին կանգնել ե պատի տակ, ու մտքերը պա-  
շարել են նրան. կարծես մի բան նրան հուշս ե տալիս:  
Նա չի հետանում. նա կիմանա, թե ովքեր ելին այս ուշ  
պահուն շրջում այդ փողոցներով: Պետին ցուրտ ե  
զգում:

Պետք ե սպասել. նրանք կերևան—այսպես ե  
մտածում Պետին:

Յեվ նա սպասում ե:

Մըսում ե ու մտածում Պետին: Անցնում են  
ըսողները:

Իմաց տալ գյուղին, հայտնել, վոր սովերներ են  
քաչլում գյուղում, ի՞նչպես ապացուցել, կծաղրեն  
նրան:

Վոչ, սպասել ե հարկավոր. և նա սպասում ե:

Հանկարծ զգաստանում ե Պետին: Կարծես մոտիկ,  
շատ մոտիկ մեկը սայթաքեց:

Նա փորձում ե մի պտույտ դործել այդ մասում,  
ուր անհետացել ելին սովերները: Իսկ ինչո՞ւ շները  
չեն հաջում ոտար ու կասկածելի մարդկանց վրա: Պե-  
տին մի ըսպե վարանում ե, ծիծաղում իր կասկածնե-  
րի վրա: Նույնիսկ թեքում ե ճանապարհը դեպի տուն,  
կրկին կանգ ե առնում:

Իայց փոխում ե ճանապարհը ու մտնում գերեզ-  
մանոց: Շատ հարմար բացատ ե, իսկ քարերը նրան  
չեն մատնի:

Ապա չեթե չաբազործներն ել թաղնովել են քա-  
րերի արանքում:

— Ե՛հ, ինչ լինում ե լինի,— մտածում ե նա:

Պետին մտնում ե գերեզմանոց ու տաղ անում:  
Յուրա ե, քարերը խոնավ ու թաց:

Իմացի շենքը «նաչալնիկի» շենքն ե: Տակի  
կոտպերատիվի արեւելյան կողմից բացվող մի հատիկ  
պատուհանն ե նայում իր խավար հայացքով:

Մի մարդ քայլում ե, համարչա սողում պատի  
տակով, խնկ ներսում, պատուհանի խորքում, լուցկի  
չեն վառում:

Պետին դողում ե ցրտից:

Գիշեր ե, կոտպերատիվը փակ, ո՞վ կա ներսում:  
Այլևս կասկած չկա... Նրանք են, սովերները: Հիմա  
Թ՛նչ կերպ, գոռով թե հարձակվել...

Հաղթել չի աջողվի, ուրիշին իմաց տալ՝ նույն-  
պես. ո՞ր եր պահակները...

Պետին լուռ ե, կրկին լուցկին լուսավորում ե  
ներսում, սովերը քայլում ե մեկ անդամ կս պատի  
տակով: Յեթե Պետին թագստոցից դուրս գա, կընկա-  
տեն:

Պետնու կացինը անզգուշաբար դիպչում ե քարին,  
չերը նա կամենում եր ուղղվել:

Պատուհանի տակ սովերը չերևում ե ու անհե-  
տանում:

Ահա մեկը դուրս թռավ ներսից, թռավ չերկ-  
րորդը. արդեն ժամանակն ե, Պետին դուրս ե թռչում:

— Ել, շան տղերք, կսպանեմ, վրան եղեք, վրան  
եղեք ասում եմ,— բուսաց նա:

Սովերները կանգ առան ու դաշույններ յերևացին

նրանց ձևերին: Գիշերային խավարը խորհրդավոր եր  
զարձնում ասպերի փայլով լուսավորված մետաղ-  
ները:

— Պետի, գնա տուն, ձեն չհանես, կսպանենք,  
երեսեք ու կնիկդ անտեր կմնան:

— Չեր հերն անիծեմ, կոտպերատիվը թալանում  
եք հեյ, հեյ, ոգնեցեք, կոտպերատիվը թալանեցին,—  
գոռաց Պետին ու վաղեց նրանց քամակներից:

Գյուղում շների վրանոց բարձրացավ:

Պահակը գնդակ արձակեց գլուղի մլուս ծայ-  
րում:

Ժամանակ չկար. Պետին ինքնապաշտպանության  
գիմեց, խնկ մարդիկ աշխատեցին թաղնովել: Մի ձեռք  
սուր ե ուժեղ հարված իջեցրեց Պետնու ուսին: Պետին  
յերերաց, ընկավ ու անմիջապես յեղավ վտարի...

— Եա դու յես հա՛:— ձանաչեց Պետին,— հիմա  
մերդ պտեմ լացացնի — ու ընկավ չետեից:

Պետին կացինն անշուշտ կիջեցներ նրա գլխին,  
յեթե դինված քաղաքի վանտն ու տղերքը նրանց ա-  
ռաջ չկտրեյին:

— Են կուռը փախան չերկուսը, բռնեցեք, կո-  
պերատիվը կտրում եյին,— շիտթված բացատրեց Պետին  
և ջղախուժյունից մի ուժեղ աբացի հասցրեց թա-  
կարդն ընկածին:

Գյուղն աղմկեց, վտարի յելան բոլորը:

Յեվ չարչի Շաքարի տան ճրագը հանգավ: Շա-  
քարի տան ճրագը ասես սրտի պալթիլուն ստացավ:

— Տրի... — ծխաց նա:

Իսկ ալդ ժամանակ փայլեցին վողջ գլուղի ճրագ  
ները...

Քոլուտողանց Պետնուն վիրավորել էյին...

\* \* \*

Գյուղում պայքարը սրվում էր, պայքարում չեղնում էր հաղթանակող մասսան:

Կուլակային բոլոր վտճարագործությունները նրա համար էյին, վոր կանխեն կոլեկտիվացման ուժը, հեղինակությունը:

Իսկ կոլեկտիվը չեղնում էր ու ամբանում:

Կոոպերատիվի գողերը մատնեցին Շաքարին:

Նրանք էլ չեն փախչի, նրանք ուժեղ ձեռքերի մեջ են:

30

Գյուղը սպասում էր, վոր կենտրոնից իրենց տրակտոր ուղարկեն:

Տրակտոր...

Գյուղական մասսան այդ տրակտորի մասին շատ բան էր լսել: Տրակտորի մեծութունը զգալի չէր, հեղինակությունը՝ խոշոր բոլորի աչքին:

Տրակտորը կարծես այն ուժն էր, վորով շարժվում էր կյանքի անիվը դեպի առաջ:

Տրակտորն էր կարծես բոլորին հուշում այդ նոր որերի իմաստը:

Առանց տրակտորի կարծես վոչ մի խնդիր հավանական չէր, կարծես թե ամեն ինչ անբնական էր...

Կոլեկտիվը տրակտորի հետ էր կապված. յեթե տրակտոր լինի, կոլեկտիվն ավելի հասկանալի կդառնա: Այն, տրակտորն այդպիսի մի ուժ էր, խորհրդավոր մի սիմբոլ:

116

Իայց կային և հարյուրները, վորոնք տրակտորին նայում էյին թերահավատությամբ:

Յերբ տրակտորը քայլի իդիլլիկ այդ յերկրի հողերով, կարծես ամեն ինչ ուրիշ կդառնա, խորթ կըդառնա, անծանոթ կլինի:

Շրջանի համար տրակտորներ են բերելու:

Սպասում են հարյուրավոր հողիներ, սպասում, թե չերբ կքայլի տրակտորն այդ հողերով:

Ինչէր չեն անցել, ինչէր չեն պատահել գյուղերում, մինչև վոր այսոր սպասել են տրակտորի գալուն:

Կարծես թե այդ մեքենան պիտի հարթեր այն ամենը, պիտի արմատեր այն, ինչ անպետք էր հիմա:

Այն, այն չէրբ և մեքենա տեսել սարալանջի գյուղը, վոր այդքան փոթորկումներ ապրեց: Յերբ են նրա հողերը վարվել խորը, շատ խորը, չէրբ է խորացել գյուղի հոգու մեջ նորի իմաստը:

Ահա նա, չերկաթը դալու յե, վոր քայլի գյուղերով, նրա դաշտերին խոր ակոսներ թողնի, վորպես հաղթանակի նշան, դբո՞մի իր կնիքը...

Սպասում էյին անհամբեր տրակտորին...

31

Յեկ նա քայլեց, քայլեց, քայլեց...

Տրակտորը մտավ գյուղ:

Յերբ նա փնջալով սողում էր հին գյուղի, հին խրճիթների, հին հուլզերի վրայով, ցեխածեկի անակները դողում էյին, փողոցները ձմրվում, իսկ դարմացած հորթներն ու այծուկները խրտնած ծառու էյին լինում այս ու այն կողմերը:

117

Մարդիկ գզում էլին ինչ-վոր թեթևություն,  
սարսափի նման մի բան սիրս պես ախորժելի ու թե-  
թև:

Գյուղի հարսներն այնպես էլին ամաչում, կարծես  
տրակտորը բովանդակ քաղաքը լինեք, վար գյուղ եր  
յեկելի հյուրասիրվելու: Իսկ նորեկ հյուրից ամաչում  
էլին սաբաբանջի դուշում, մանավանդ այդ հասնված  
կենդանուց: Նա ուշագիրը դիտում եր իր շուրջը, նա  
քայլում եր համարձակ, շնչում խորհրդավոր ու խոր,  
ինչպես համաշխարհ:

— Տեսնու մեր ֆողերում կրանի, — կասկածով  
հարցնում էլին իրար գլուզացիք:

— Բանեք կրանի, համա ինչդար ել վոր ասեն, դու-  
թանի-յեղան գործը ըլիլ չի, ընդուր բարաքլաթն ու-  
բիշ ա, — պատասխանում եր ուրիշը:

— Տեսնու ես ջանավար քոզը շատ ա մնալու  
մեր դեղումը. ասում են քաղբիցն ա չեկած, լեղուն  
վոնց ա հասկանում ետ ջանավարի: Հլի մի տեղ վոր  
սամթին չի ըլում, մին ել դի չա տալի, «ստոպ», ձեռա-  
ցումը շինում ա, — գարմանում եր մի տարիքավոր  
գլուզացի:

— Մեր քաղաքի վանոն դրա լիզուն լավ ա հասկա-  
նում. վարպետը շատ չի մնալ, կերթա, մեր քաղաքի վա-  
նոն. սաղ ըլնի, նա կարա հախիցը դա: Ուրիշ մաշինեք  
ել պտեն բերի, ես թագա աշխարքի գործն ել եդ մեր  
ջանեխին տանեն, թե չե մենք բանի պետք չենք, չը-  
թիցը մավայ, մի բանից ելա խելքներս կտրում չի:

Վոզը գլուզը գարմանքից դուրս էլին թափվել  
ու տրակտորի քամակն ընկած, կոլեկտիվի գաշտն  
էլին գնում: Իսկ գաշտերում գարունը փխրացրել եր

հողը, ջերմացրել նրան իր արևատ գրկում: Ծառերը  
բողբոջել էլին, խնձորենիք սպիտակ ու վարդագույն  
ծաղիկ տվել: Բուբում եր, բուբում եր աշխարհը, փայ-  
վաչում գլուզերին «հյուր գնացած» պողպատե «Ջա-  
նավարներին»:

Նորից լավում ե մանուկները յերզը.

Ծլիլ ե արտս, ծիւում ե արտս,

Կորել ե դարդս, ջան...

32.

Յեկ ինչքան բան փոխվեց, ինչքան սրեր անցան:  
Մաչիս ամիսն եր...

Սար ու ձոր այնպես ե բուբում, վոր ուզում ես  
հալվել, փոշիանալ ու ծծվել ծառ ու ծաղիկի հետ:

Գյուղում աճում եր «Ազատություն» կոլեկտիվը:

Արտերը վարած էլին, ցանած նոր հուլսերով ե  
խոշոր արեն եր գուրգուրում խոշոր այդ ընտանիքին:

\*\*

Շատ բան եր հոսել-գնացել ախուր ու բարդ ո-  
րերից:

Շիտակ Փաշոն, Բոլուտողանց Պետին կոլեկտիվ  
խորհրդի ախտիվ անդամներն էլին:

Սամանգը մնում եր կոոպի նախագահ...

Անհիկն ել նրա մասին ծածուկ չեր խորհում,  
ամուսնացել էլին:

Նախագահ վանոն ուղղել եր իր սխալները, թե-  
թևի տված աշխատում եր մնացածների հետ:

Գոհարը սպասում եր... ու աչքը ճանապարհին  
սպասում նրան:

Մարտիրոսը հիվանդանոցից առողջացած սուեն  
եր դարձել: Նրան կոլեկտիվը հանձնարարել եր գնալ  
կենտրոն գյուղատնտեսական մեքենաներ ստանալու...

Հասու քայլերով առաջ եր դնում կոլեկտիվը,  
սոցիալիստական կյանքի առաջին քայլը, գյուղատնտե-  
սական սեկտորը:

Գոհարը սպասում եր դեռ...

Նրանք դեռ սպասում ելին իրար:

Իրազեից լեկած բանվոր Վանոն լավ եր դրում ի-  
րեն:

Ո՛ր, գարունը վորքան գեղեցիկ եր, վորքան հո-  
լակապ՝ այդ լեռնաշխարհում, ուր դարավոր կենցաղն  
եր մեռնում նոր սրերի արշավի առաջ:

Վարդերը բացվում ելին, բարդիները ժպտում,  
գուլալ ջրերը քչքչում չարածճի...

\* \* \*

Կապետին ձերբակալել ելին, Սուեթաթը դնրա-  
կահարվել եր հետապնդող տղաների կողմից ու իր  
մահը գտել անտառում: Կապետին լավ տպագա չեր  
խոստանում շրջանային դատարանը:

Գերասիմը, Աքելը, Հովհաննեսը դիտավորյալ չա-  
րագործության համար հանցագործ ելին ճանաչված,  
ուղարկվել ելին կենտրոն: Գուլքի խոշոր մասը բռնա-  
դրավված եր:

Իարբնանց Մուքելը կոլեկտիվի ուրախ հալեոր-  
ներից եր: Չեր մոռանում իր հին դինավորական լերգը:

Խոչիմ լուբիմ, խոչիմ նեա,

Խոչիմ—կարման կապիկ նեա—

Ու մնե լեստ պետաչոկ,

Իդլոմ պաչդլոմ կուպաչոկ:

Կոլեկտիվը որ-որի ուժեղանում եր:

Կանոնադրությունը պարզ եր ամեն մի կոլխոդ-  
նիկի:

Ել սխալներ չեն թույլ տա իրենց, բոլորը կար-  
դացել են պողպատական գեկավարի այս տողերը:

«Մենք ուզում ենք, վոր այն մարդիկ, վորոնք կասա-  
րել են սխալներ ու ձուռմներ, յե կանգնեն իրենց սը-  
խալներից»:

Հետո ասում ե գեկավարը.—

«Մխալ կլինի կարծել, վոր լեթե կոլխոդներ կան,  
ուրեմն կան անհրաժեշտ բոլոր պայմանները սոցիալիզմի  
համար՝ Վոչ, դեռևս լերկար պիտի օշխատել, վորպեսզի  
գյուղացի կոլխոդնիկին փոխես և դարձնես նրան սո-  
ցիալիստական հասարակության աշխատավոր»:

Խրճիթ-ընթերցարանում կոլխոդնիկներին հետ  
ախպես միշտ զրույց եր ունենում գյուղի ուսուցիչը:  
Նա ել չեր կասկածղւմ, նա ել չեր տատանվում:

— Կոլեկտիվում պետք ե լինի կարգ ու կանոն,  
բոլորը պետք ե յենթարկվեն աշխատանքի կանոննե-  
րին, —խոսում եր նա:

Իսկ նրան լսում եր խրճիթ-ընթերցարան լցված  
գյուղացիությունը:

Շուտով ուղիտ-համերգ եր լինելու:

Բոլորն սպասում ելին: Նոր եր մուտք գործել  
այդ ուղիտն:

Անթառամին վոչվոք չեր մոռանում. նորերն  
ելին լեկել և թղթակիցների մի բանակ եր լեկնում գյու-  
ղերից:

Ինչ լավ է, բոլորը լսում են, թե ինչ են կարգադրում, ինչ են պատմում աշխատավոր գյուղացիությանը կենտրոնից:

Իսկ կենտրոնից հաղորդում են հաղթանակների մասին:

Մարալանջի գյուղի աշխատավորները նոր կոլեկտիվը ազատութեան անունով ելին կոչել...

«Ազատութուն» կոլեկտիվն էր անրանում...

\* \*

Լաջանհաղորդ սողիոն կենտրոնից հաղորդում էր.

Ալլն, ալլն, խոսում է կենտրոնը: «Ազատութուն» կոլեկտիվ. լսեցեք, լսեցեք, լսեցեք... Մասսաների անունից վողջունում ենք ձեր անդուլ աշխատանքն ու յիտանը և գոհունակութուն հայտնում ձեր կոլեկտիվը հարվածային հայտարարելու համար. աշխատեցեք առաջապահ դիրքերում, սոցիալիստական կյանքի համար...

Աբիը ծիծաղում էր անհոգ, դաշտերը ամօթից կարմրում էլին ու հասկավորվում էլին վոսիկույն արտերը:

34.

Փարնանային օրվա իրիկնագեմին, յերբ Մարտիրոսն ու Գոհարը մենակ մնացին, լուսինը ծածկվեց ամպի բարակ քողով...

Նա չէր կամենում ամաչել:

Գյուղական խաղաղ խրճիթը նրանց լճկադրում էր բնական հաճույքների, սիրտ և սպրումի վայրկյաններ: Նրանց շրթունքները միացան... Իսկ հետո ձրագը պահեց իր փայլուն լեզուն:

Ուստի ամուսինների անկողինը պարուրեց:  
Իբրևս կոմունար-չորանը սրնգում էր սիրտ և հաղթանակի մասին:

\* \*

Գյուղը յերկաթե մեքենաներ տեսավ, պողպատը քալեց նրա դաշտերով: Մարդիկ մոռացան այն, ինչ անասնային էր, գծուծ ու հիվանդ...

Մի նոր արև էր սահում յերկնակամարով:

Ջրահավոր գարունն էր աղմկում «Ազատութուն» կոլեկտիվի լայնածախ փողով:



« Ազգային գրադարան



NL0352902

47232 35 407.

47232

314

1 \* 9 \* 3 \* 1

891.99

Т-29

А. ШАЙБОН  
БРОНИРОВАННАЯ ВЕСНА  
ГИЗ ССР А